ԴՈՒԱԼ

Դուալ կրթություն՝
երաշխավորված աշխատանք

ՉԲՈՍԱԾՐՋՈՒԹՅՈՒՆ

ՁԵՌՆԱՐԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

ԴՈՒԱԼ

DEAM DWV
DEUTSCHER WIRTSCHAFTS VERBAND
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ
GERMAN BUSINESS ASSOCIATION

«Ռիսկերի և անվտանգության կառավարման հմտությունների ձևավորում արկածային զբոսաշրջության վայրերում» նախագիծը ֆինանսավորվում է Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության և Explore Worldwide միջազգային զբոսաշրջային օպերատորի կողմից: Ծրագիրն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ, GIZ) կողմից՝ որպես պետական-մասնավոր հատված համագործակցության զարգացման ծրագրի մաս: Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարությունը (BMZ) խթանում է համագործակցությունը մասնավոր հատվածի և զարգացման գործակալությունների միջև՝ երկու ոլորտների համար փոխադարձ օգուտներ ստանալու նպատակով:

Ձեռնարկը մշակվել է www.riskmanagement4tourism.org կայքում առկա գործիքների և ձևանմուշների հիման վրա: Ձեռնարկը կանոնավոր կերպով կթարմացվի պրակտիկ մասնագետների և մասնագիտական ասոցիացիաների հետ սերտ համագործակցությամբ:

Հեղինակներ՝ Լիանա Թադևոսյան, հյուրանոցային բիզնեսի փորձագետ, Աշոտ Օհանյան, սննդի անվտանգության փորձագետ, Դիանա Մովսիսյան, իրավաբան, Արմինե Հայրապետյան, ԱՌՆ փորձագետ:
Գեղարվեստական խմբագիր՝ Ազատուհի Մնացականյան:

Համաշխարհային զբոսաշրջության ժամանակակից պայմաններում առաջին տեղում պետք է լինի ճանապարհորդների անվտանգությունը: Զբոսաշրջիկների անվտանգության երաշխավորման գործում առանցքային դեր ունեն կացարաններ ապահովող ձեռնարկությունները: Հյուրանոցները և հյուրատները պետք է համապատասխանեն պահանջների մեծ ցանկին՝ հրդեհային և սննդի անվտանգության, ընդհանուր սանիտարական նորմերին և կանոններին, աշխատանքի պաշտպանության և այլն:

Հայաստանում ձեռնարկը մշակվել է «Մասնավոր հատվածի զարգացում և տեխնիկական մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» ԳՄՀԸ ծրագրի կողմից՝ Գերմանական տնտեսական միավորման (DWV) համագործակցությամբ: Այն նախատեսված է ՄԿՈՒ դասավանդողների և ուսանողների, ինչպես նաև հյուրատների սեփականատերերի և ղեկավարների համար: Այն ներառում է հիմնական ազգային և միջազգային պահանջները, որոնք անհրաժեշտ են զբոսաշրջիկների անվտանգ և հարմարավետ կացությունն ապահովելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



01

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....5

ԹԵՄԱ 1
Աշխատանքի պաշտպանության հիմունքներ.....8

ԹԵՄԱ 2
ՀՀ աշխատանքային իրավահարաբերությունների հիմնական սկզբունքներն ու կարգավորումները.....12

ԹԵՄԱ 3
Աշխատանքային հարաբերությունների ծագումը, փոփոխման և դադարման հիմքերը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները.....20

02

ՆԱԽԱԲԱՆ.....40

ԹԵՄԱ 1
Սննդի անվտանգությունը՝ հյուրանոցային տնտեսություններում.....41

ԹԵՄԱ 2
Սննդամթերքի պահպանմանը,փոխադրմանը, պատրաստմանը և մատուցմանը ներկայացվող սանիտարական պահանջները.....48

ԹԵՄԱ 3
Խոհանոցային տարածքին ներկայացվող պահանջները տեխնիկային.....58

03

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....68

ԹԵՄԱ 1
Ինչու՞ է անհրաժեշտ կառավարել ռիսկերը.....69

ԹԵՄԱ 2
Ինչպե՞ս ենք իրականացնում ռիսկերի կառավարումը և անվտանգության ապահովումը.....82

ԹԵՄԱ 3
Ի՞նչ է հարկավոր իմանալ առավել վտանգավոր աղետների մասին.....96

04

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....118

ԹԵՄԱ 1
Զբոսաշրջիկների անվտանգությունը գործնականում.....119

ԹԵՄԱ 2
Հակահրդեհային անվտանգություն.....123

ԹԵՄԱ 3
Հիգիենա հյուրատներում և այլ հյուրանոցային կացարաններում.....125

ԹԵՄԱ 4
Հանրային տարածքներ.....131

ԹԵՄԱ 5
Ընդհանուր անվտանգություն հյուրատանը.....135

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս բաժնում համապարփակ ներկայացված են աշխատանքային օրենսդրության հիմունքները, աշխատանքային իրավահարաբերությունների հիմնական սկզբունքներն ու կարգավորումները, ուսումնասիրվում են աշխատանքային հարաբերություններն ու աշխատողի անվտանգության ապահովման և առողջության ապահովման պայմանները:

Մոդուլը կիրառելի է ցանկացած ոլորտում, որտեղ առկա են գործատու-աշխատող հարաբերությունները: Նրանք, ովքեր պատրաստվում են դառնալ պատասխանատու գործատու և ցանկանում են ապահովել իրենց աշխատողների անվտանգությունը, աշխատանքային նորմալ պայմանները, աշխատանքային օրենսդրության պահանջները, աշխատողների առողջության պահպանումը: Գործնական աշխատանքների կատարումը կձևավորի ճիշտ կողմնորոշվելու կարողություններ: Աշխատողներին այն կօգնի ստանալ բազային գիտելիքներ իրենց հիմնական աշխատանքային պարտականությունների, իրավունքների, գործատուի իրավունքների և պարտականությունների մասին, կատարել ճիշտ ընտրություն աշխատանքային պայմանագրերի տեսակների մեջ, հասկանալ և ընդհանուր պատկերացում կազմել աշխատանքի պաշտպանության հիմունքների և ընդհանուր պահանջների վերաբերյալ: Այս ձեռնարկը հատկապես օգտակար կլինի տուրիզմի, բնակչության սպասարկման և հյուրանոցային ոլորտի ուսանողների համար, ովքեր այս կամ այն կերպ կապ են ունենալու այս արագ զարգացող ոլորտի հետ, լինի դա սպասարկող անձնակազմ, ղեկավար թե ժամանակավոր ծառայություններ մատուցող: Առանձին ուշադրություն է դարձվել աշխատանքի անվտանգությանը ներկայացվող պահանջներին և լրացուցիչ միջոցառումներին, որոնց շնորհիվ հնարավոր կլինի ճիշտ կանխատեսել և հնարավորինս կառավարել աշխատանքի և առողջության պահպանման գործընթացը

Ավարտելով այս բաժինը, ուսանողները կունենան ընդհանուր պատկերացում աշխատանքի պաշտպանության հիմունքների, Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային իրավահարաբերությունների հիմնական սկզբունքների ու կարգավորումների վերաբերյալ, աշխատանքային հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերի, կողմերի իրավունքների ու պարտականությունների աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանների մասին:

- Տրամադրել աշխատանքի պաշտպանության հիմունքների վերաբերյալ ընդհանուր պատկերացում,
- Բացատրել Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային իրավահարաբերությունների հիմնական սկզբունքներն ու կարգավորումները,
- Տալ ընդհանուր պատկերացում աշխատանքային հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերի, կողմերի իրավունքների ու պարտականությունների մասին,
- Անդրադառնալ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմաններին:

Ստացված գիտելիքները՝ համադրվելով իրավիճակի վերլուծությունների հետ, ուսանողների մոտ կձևավորեն այնպիսի կարևոր հմտություններ ու ունակություններ, ինչպիսիք են՝ իրավիճակի ճիշտ գնահատում աշխատանքային օրենսդրության տեսանկյունից, աշխատողների պաշտպանության համար անհրաժեշտ ընթացակարգերի և միջոցառումների ներդնում և կիրառում, աշխատանքի և առողջության պահպանման գործընթացի կառավարում՝ ռիսկերի նվազեցման տեսանկյունից և այլն:

Այս բաժինը կազմվել է հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրիրքը (այսուհետ՝ ԱՕ), որն ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 2004 թվականի նոյեմբերի 9-ին, վերջին փոփոխություններով, որոնք ուժի մեջ են մտնում 2022թ. հուլիսի 1-ից:

01 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 1

Աշխատանքի պաշտպանության հիմունքներ

Թեմայի նպատակն է.
Տրամադրել աշխատանքի պաշտպանության հիմունքների վերաբերյալ ընդհանուր պատկերացում:

Առանցքային հասկացությունները և սահմանումները.
ՀՀ Հայաստանի Հանրապետություն
ԱՕ ՀՀ աշխատանքային օրենսգիրք
ԵՄ Եվրոպական Միություն
OECD կամ ՏՀԶԿ՝ OECD Organisation for Economic Cooperation and Development/ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

Վերահսկող մարմին՝ ՀՀ կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին

Միջազգային հանրության ձևավորման և զարգացման այս փուլում, աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները առաջնային տեղ են զբաղեցնում ցանկացած աշխատանքային իրավահարաբերություններում, հատկապես, այն ոլորտներում, որոնք այս կամ այն կերպ կապված են ռիսկային գործոնների հետ, որոնցից մեկը՝ տուրիզմն է:

Աշխարհի մի շարք երկրներում, աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները հանդիսանում են աշխատանքային հարաբերությունների հիմնական կետերից մեկը:

Օրինակ, ԵՄ երկրներում, աշխատողն ի սկզբանե ունի հիմնարար աշխատանքային իրավունքներ, որոնք վերաբերում են աշխատավայրում առողջության և անվտանգության պաշտպանությանը, տղամարդկանց և կանանց իրավունքների հավասարությանը, աշխատանքային պայմաններին և այլն:

Աշխատանքի պաշտպանության եվրոպական չափանիշները հիմնվում են OECD կամ ՏՀԶԿ կողմից մշակված Աշխատանքի պաշտպանության օրենսդրության Employment Protection Legislation (2017) վրա, որը ներառում է մի շարք կարևորագույն կարգավորումներ, որոնք վերաբերում են աշխատողներին աշխատանքի ընդունմանն ու ազատմանը, անդրադառնում է աշխատանքը կորցնելու հետևանքով աշխատողների եկամուտների հնարավոր տատանումներին և այլն:

Բացի այդ, այն ներառում է աշխատանքային պայմանագրի օրինակելի ձև, որը մշակվել է հաշվի առնելով աշխատողների իրավունքների պաշտպանությունն ապահովելու ու գործատուների հնարավոր չարաշահումները նվազեցնելու նկատառումներիով, կարգավորում է հիմնական պայմանները, ընթացակարգերն ու պարտադիր նորմերը, որոնք անհրաժեշտ են զանգվածային կրճատումների հնարավոր բացասական հետևանքները մեղմացնելու համար և այլն:

Ընդհանուր առմամբ, եթե խոսենք ԵՄ աշխատանքային չափանիշների մասին, հարկ է նշել, որ դրանք իրենցից ներկայացնում են աշխատաշուկայի սոցիալական կարգավորման ձև, երբ օրենսդրությունը գործատուների համար սահմանել է որոշակի սահմանափակումներ կամ գործատուներին վերապահել է որոշակի պարտավորություններ, վերջիններիս կողմից հնարավոր չարաշահումները բացառելու համար, որի արդյունքում աշխատողները պաշտպանված են իրենց իրավունքների հնարավոր խախտումներից: Բացի այդ, այն ձևավորել է շատ հստակ ուղեցույցներ, որոնք վերաբերում են աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանմանը:

Այսպես, օրինակ, եթե նայենք ԵՄ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության քաղաքականությանը (European Union's Occupational Safety and Health policy for employees), կտեսնենք աշխատողների անվտանգության ապահովմանն ու առողջությանը վերաբերող հետևյալ կարևորագույն պայմանները.

- Անվտանգության և հիգիենայի չափանիշների պարտադիր առկայությունը:
- Աշխատողների պաշտպանության չափանիշներ, որոնք ապահովում են աշխատողների անվտանգությունն ու առողջությունը:
- Աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պաշտպանության հիմնական նպատակն է.
- Բացառել աշխատավայրում դժբախտ պատահարները (մահ, առողջությանը պատճառված վնաս և այլն) կամ նվազեցնել դրանց հավանականությունը:
- Բարենպաստ պայմանների ստեղծումը, այսպես ասած “welfare at work” (OECD: 2013), այսինքն՝ բացառել աշխատավայրում դժբախտ պատահարները և աշխատավայրում ապահովել բարենպաստ հոգեբանական պայմաններ:

Այսպիսով, մենք անդրադարձանք աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պաշտպանության հիմնական նպատակներին և սկզբունքներին, իսկ հաջորդ գլխում կներկայացնենք ՀՀ աշխատանքային իրավահարաբերությունների հիմնական սկզբունքներն ու կարգավորումները, առանց որոնց, որևէ պաշտպանության մասին խոսելն ավելորդ է:

Առաջադրանքներ.

Քննարկման համար թեմաներ.
Ինչ՞ եք կարծում ՀՀ-ում աշխատողների իրավունքների պաշտպանության մասին, արդյո՞ք դրանք բավարար չափով են պաշտպանված: Ինչ՞ կառաջարկեք դրանց բարելավման նպատակով:

Ինքնաստուգման հարցեր:

1. **Հարց**. Ինչի՞ վրա են հիմնված աշխատանքի պաշտպանության եվրոպական չափանիշները :
2. **Հարց**. Ինչ՞ է ներառում Աշխատանքի պաշտպանության օրենսդրությունը:
3. **Հարց**. Թվարկեք աշխատողների անվտանգության ապահովմանն ու առողջությանը վերաբերող կարևորագույն պայմանները.
4. **Հարց**. Ինչ՞ է բարենպաստ պայմանների ստեղծումը կամ “welfare at work”.

01

ԹԵՄԱ 2

Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային իրավահարաբերությունների հիմնական սկզբունքներն ու կարգավորումները

Թեմայի նպատակն է.
Բացատրել ՀՀ-ում աշխատանքային իրավահարաբերությունների հիմնական սկզբունքներն ու կարգավորումները

Առանցքային հասկացությունները և սահմանումները նույնն են ինչ նախորդ թեմայի համար:

Նշենք, որ ՀՀ-ում աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, ԱՕ-ով, օրենքներով, այլ իրավական ակտերով, աշխատանքային և կոլեկտիվ պայմանագրերով:

ՀՀ աշխատանքային օրենսդրությունը սահմանում է՝

- աշխատանքային օրենսդրության կիրառման ոլորտները, նպատակը և սկզբունքները.
- աշխատանքի իրավունքի իրականացման իրավական հիմքերը.
- կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի կնքման և կատարման կարգն ու պայմանները, ինչպես նաև կողմերի պատասխանատվությունը՝ ըստ իրենց պարտավորությունների.
- աշխատանքի վարձատրության կարգն ու պայմանները.
- աշխատաժամանակի առավելագույն և հանգստի ժամանակի նվազագույն տևողությունը.
- արտոնությունների, հատուցումների, երաշխիքների նվազագույն չափը (սահմանը).
- աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման հիմնական կանոններն ու նորմերը.
- աշխատողների ներկայացուցիչների՝ արհեստակցական միությունների, աշխատողների ժողովի (համաժողովի) կողմից ընտրված ներկայացուցիչների (մարմնի), ինչպես նաև գործատուների միությունների, դրանց ներկայացուցիչների իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը.

- աշխատանքային կարգապահության ապահովման իրավական հիմքերը.
- նյութական պատասխանատվության պայմաններն ու չափերը (սահմանները).
- աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողության և վերահսկողության իրականացման հիմնական դրույթները:

Աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներն են՝

- Աշխատանքի ազատությունը, ներառյալ՝ աշխատանքի իրավունքը (որը յուրաքանչյուրն ազատորեն ընտրում է կամ որին ազատորեն համաձայնում է), աշխատանքային ունակությունները տնօրինելու, մասնագիտության և գործունեության տեսակի ընտրության իրավունքը.
- Ցանկացած ձևի (բնույթի) հարկադիր աշխատանքի և աշխատողների նկատմամբ բռնությունների արգելումը.
- Աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավաժիավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից և ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցություններին, արհեստակցական միություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից.
- Յուրաքանչյուր աշխատողի համար աշխատանքի արդարացի պայմանների իրավունքի ապահովումը (ներառյալ՝ անվտանգության ապահովման և հիգիենայի պահանջները բավարարող պայմանները, հանգստի իրավունքը).
- աշխատողների իրավունքների և հնարավորությունների հավասարությունը.
- յուրաքանչյուր աշխատողի՝ ժամանակին և ամբողջությամբ աշխատանքի արդարացի վարձատրության իրավունքի ապահովումը՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափից ոչ ցածր.

- Գործատուների և աշխատողների՝ աշխատանքային իրավունքների և շահերի պաշտպանության համար ազատորեն միավորվելու իրավունքի ապահովումը (ներառյալ՝ արհեստակցական և գործատուների միություններ ստեղծելու կամ դրանց անդամագրվելու իրավունքը).
- Աշխատանքային հարաբերությունների կայունությունը.
- Կոլեկտիվ բանակցությունների ազատությունը.
- Կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի կողմերի պատասխանատվությունը՝ ըստ իրենց պարտականությունների:

Հարկ է նշել, որ ԱՕ-ն առանձնահատուկ դեր է սահմանում պետության համար, ըստ որի՝ պետությունն ապահովում է աշխատանքային իրավունքների իրականացումը ԱՕ-ի և այլ օրենքների դրույթներին համապատասխան:
Աշխատանքային իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

Առաջադրանքներ.

Քննարկման համար թեմաներ.
Ինչ՞ եք կարծում, արդյո՞ք արդարացված է աշխատանքային իրավունքների սահմանափակումը բացառապես օրենքով: Բերեք օրինակներ, երբ ըստ Ձեզ, այդպիսի սահմանափակումներն արդարացված են:

Ինքնաստուգման հարցեր.

1. **Հարց**. Թվարկեք ԱՕ կարգավորումներից մի քանիսը.
2. **Հարց**. Թվարկեք ԱՕ-ի հիմնական սկզբունքներից մի քանիսը:

Աշխատանքային օրենսդրության նպատակները.

Ինչպես և ցանկացած օրենսդրություն, աշխատանքային օրենսդրությունն ևս ունի իր նպատակները, որոնք են.

- սահմանել ֆիզիկական անձանց՝ ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց աշխատանքային իրավունքների և ազատությունների պետական երաշխիքները.
- նպաստել աշխատանքի բարենպաստ պայմանների ստեղծմանը.
- պաշտպանել աշխատողների և գործատուների իրավունքներն ու շահերը:

Խտրականությունը աշխատանքային իրավահարաբերություններում արգելված է:
Ինչպես՞ է սահմանում խտրականությունը ԱՕ-ն.

Խտրականությունը դա սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների պատճառով ցանկացած ուղղակի կամ անուղղակի տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որի նպատակը կամ արդյունքը հանդիսանում է կոլեկտիվ և (կամ) անհատական աշխատանքային հարաբերությունների ծագման և (կամ) փոփոխման և (կամ) դադարման դեպքերում նվազ բարենպաստ վերաբերմունքի դրսևորումը կամ մյուսների հետ հավասար հիմունքներով աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ցանկացած իրավունքի ճանաչման և (կամ) իրականացման արգելքը կամ ժխտումը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի տարբերակումը, բացառումը կամ սահմանափակումն օբյեկտիվորեն արդարացված են հետապնդվող իրավաչափ նպատակով, և այդ նպատակին հասնելու համար կիրառվող միջոցները համաչափ են ու անհրաժեշտ:

Այլ բառերով ասած, մենք գործ ունենք խտրականության հետ, եթե սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների պատճառով անձը ենթարկվում է որևէ սահմանափակման, եթե չասենք նվազ բարենպաստ պայմաններին կիրառման:

Ընդ որում, աշխատանքի ընդունման հայտարարություններում (մրցույթներում) և աշխատանքային հարաբերությունների իրացման ընթացքում արգելվում է, գործնական հատկանիշներից և մասնագիտական պատրաստվածությունից ու որակավորումից բացի, խտրականության հիմք հանդիսացող որևէ այլ պայման սահմանելը, բացառությամբ եթե դա բխում է աշխատանքին ներհատուկ պահանջներից:

Առաջադրանքներ.

Քննարկման համար թեմաներ.
Ինչ՞ է խտրականությունը, խտրականության ինչպիսի՞ ձևեր են ձեզ հայտնի:

Իրավիճակի վերլուծություն.

Գործատուների խումբը հրապարակել է հետևյալ հայտարարությունները.

«Բեռնափոխադրման ընկերությունում պահանջվում են 20-25 տարեկան տղաներ: Բարձրագույն կրթությունը պարտադիր չէ»:
«Տուրիստական ընկերությունում պահանջվում են բարետես արտաքինով 20-25 տարեկան աղջիկներ»:

Առաջադրանք.
Գտեք խտրականության տարրեր հետևյալ հայտարարություններում, բերեք՛ հակափաստարկներ, հղում կատարելով ԱՕ-ին :

01

ԹԵՄԱ 3

Աշխատանքային հարաբերությունների ծագումը, փոփոխման և դադարման հիմքերը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Պայմանագրերի տեսակներ: Աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Թեմայի նպատակն է.
Տալ ընդհանուր պատկերացում աշխատանքային հարաբերությունների, աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանների մասին, ինչը կօգնի ձևավորել աշխատանքային իրավահարաբերություններում ճիշտ կողմնորոշվելու, աշխատողների անվտանգությանն ու առողջությանը սպառնացող ռիսկերը ճիշտ գնահատելու ու նվազեցնելու կարողությունները:

Առանցքային հասկացությունները և սահմանումները նույնն են ինչ նախորդ թեմայի համար:

Աշխատանքային հարաբերությունների ծագումը.

Աշխատանքային հարաբերությունների մասնակիցներն են՝ գործատուն և աշխատողը, որոնց փոխադարձ համաձայնության հիման վրա՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք):

Հուշում. Աշխատանքային հարաբերությունները ծագում են, երբ կա համաձայնություն գործատուի և աշխատողի միջև՝ աշխատանքային պայմանների վերաբերյալ որը ունի.

- աշխատանքային պայմանագրի տեսք

  կամ

- գործատուի կողմից տրված անհատական իրավական ակտի տեսք, այսինքն՝ կարգադրության կամ հրամանի տեսքով:

Աշխատանքային հարաբերությունների փոփոխման հիմքերը.

Ինչպես և ցանկացած հարաբերություն, աշխատանքային հարաբերությունները ևս չեն կարող մնալ ստատիկ վիճակում և դրանց գոյության ընթացքում կարող են առաջանալ այնպիսի հանգամանքներ, երբ կողմերը՝ գործատուն և աշխատողը, փոփոխության են ենթարկում իրենց միջև ծագած աշխատանքային հարաբերությունները: Այդպիսի հանգամանքներն են՝

***աշխատանքի էական պայմանների փոփոխությունը*:**
Որոնք՞ են աշխատանքի էական պայմանները կամ այլ կերպ ասած, այն հանգամանքները, որոնք այնքան էական են, որ առանց դրանց կամ դրանց փոփոխման դեպքում, տվյալ աշխատանքը չի կարող իրականացվել:

Հուշում. Աշխատանքի էական պայմաններն են.
Աշխատանքի վայրը
Վարձատրության չափը
Արտոնությունները
Աշխատաժամանակի ռեժիմը
Տարակարգերը/խաշտոնների անվանումները
Աշխատանքային պայմանագրի տեսակը
Գործատուի փոփոխում

Այս պայմանները կարող են փոփոխվել բացառապես աշխատողի համաայնությամբ, գործատուի կողմից ԱՕ սահմանված կարգով և ժամկետներում ծանուցվելուց հետո:

Իսկ եթե աշխատանքի նախկին էական պայմանները չե՞ն կարող պահպանվել, իսկ նոր պայմանների հետ աշխատողը համաձայն չէ:

Այս դեպքում, աշխատանքային պայմանագիրը լուծվում է: Դրա դադարման հիմքերին կանդրադառնանք ստորև՝ «Աշխատանքային հարաբերությունների դադարման հիմքերը» բաժնում:

Աշխատանքային հարաբերությունների դադարման հիմքերը.

Այս բաժնում մենք կուսումնասիրենք այն հիմքերը, որոնց դեպքում աշխատանքային հարաբերությունները կարող են դադարել:
Նախ նշենք, որ աշխատանքային պայմանագիրը դադարում է ԱՕ-ով սահմանված մի շարք դեպքերում, որոնք պայմանականորեն կարող ենք բաժանել 4 խմբի.

1-ին խումբ.
Կողմերի համաձայնությամբ, այսինքն, թե՛ աշխատողը և թե՛ գործատուն համաձայն են լուծել այն:
Աշխատողի և գործատուի համաձայնությամբ սահմանված փորձաշրջանի արդյունքներով, այսինքն՝ աշխատանքային պայմանագրով սահմանված փորձաշրջանի արդյունքները բավարար չեն, ընդ որում, դրանք կարող են լինել անբավարար թե՛ գործատուի և թե՛ աշխատողի համար.

2-րդ խումբ. աշխատողի նախաձեռնությամբ, այսինքն՝ աշխատողն այլևս չի ցանկանում աշխատել տվյալ գործատուի մոտ.

3-րդ խումբ. գործատուի նախաձեռնությամբ, այսինքն՝ գործատուն, որոշ հանգամանքներից ելնելով, ստիպված է դադարեցնել աշխատանքային պայմանագիրը /դրանց կանդրադառնանք առանձին/

4-րդ խումբ. այս խմբում ներառենք բոլոր այն դեպքերը, որոնք չեն մտնում վերը թվարկած խմբերից և ոչ մեկի մեջ, այսինքն.

> պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում, այսինքն՝ լրացել է այն ժամանակահատվածը, որի համար կնքվել էր տվյալ աշխատանքային պայմանագիրը.

> աշխատողի պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում, կարծում ենք, այստեղ ամեն ինչ հասկանալի է.

> դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում, որին համապատասխան՝ աշխատողը ենթարկվել է այնպիսի պատասխանատվության, որը հնարավորություն չի տալիս շարունակելու աշխատանքը: Այսինքն, դատարանի օրինական ուժի մեջ մտած դավաճռով, տվյալ աշխատողն ի վիճակի չի լինելու կատարել իրենց հանձնարարված աշխատանքը:

> եթե օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատողը զրկվել է որոշակի աշխատանքներ կատարելու իրավունքներից, այսինքն՝ կա որոշակի արգելք տվյալ տեսակի աշխատանքը կատարելու համար, օրինակ՝ եթե տվյալ աշխատողը բժիշկ է, սակայն կա օրենսդրությամբ սահմանված ուղղակի արգելք տվյալ մասնագիտությամբ զբաղվելու համար:

- եթե աշխատողը մինչև տասնվեց տարեկան է, և ծնողներից մեկը, որդեգրողը կամ հոգաբարձուն կամ խնամակալը, նրա առողջության նկատմամբ հսկողություն իրականացնող բժիշկը կամ տեսչական մարմինը պահանջում է աշխատանքային պայմանագրի լուծում.

- աշխատանքի էական պայմանները փոփոխվելու դեպքում, սրա մասին խոսեցինք նախորդ բաժնում.

- ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում, այսինքն՝ եթե տվյալ աշխատողի գործատուն ֆիզիկական անձ է, որը մահացել է.

- աշխատողի մահվան դեպքում, այստեղ նույնպես, կարծում ենք, ամեն ինչ պարզ է.

- աշխատանքի ընդունվելիս աշխատողը ներկայացրել է կեղծ տեղեկություններ, օրինակ՝ դիպլոմը կեղծ է կամ նա չունի տվյալ աշխատանքը կատարելու համար անհրաժեշտ որակավորում,

- աշխատանքի ընդունվելիս որոշակի աշխատանքներ կատարելու իրավունքներից զրկված լինելու փաստը աշխատողի թաքցնելու դեպքում, այս կետը բավական մոտ է տեղեկություն-ները կեղծելու մասին դրույթին և 7-րդ ենթակետում սահմանված հանգամանքներին:

Ընդ որում, հարկ է նշել, որ եթե աշխատողը կարող է պարզապես լուծել աշխատանքային պայմանագիրը, այդ մասին նախախես ծանուցելով գործատուին, առանց որևէ հիմնավորման, գործատուն այդպիսի արտոնություն չունի և սահմանափակված է ԱՕ-ով սահմանված դեպքերով: Օրենսդրի այսպիսի մոտեցումը գործատուի իրավունքների սահմանափակման մասով, պայմանավորված է աշխատողին՝ գործատուի հնարավոր անհիմն և անօրինական ազատումներից պաշտպանելու ցանկությամբ:

Ավելի մանրամասն, տես ՀՀ ԱՕ
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159097

Պայմանագրերի տեսակներ.

Նախքան աշխատանքային իրավահարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուսումնասիրելը, եկե՛ք պատկերացնենք երկու իրավիճակ.

Իրավիճակ Ա. Հյուրանոցում աշխատում են ընդունարանի աշխատակիցներ, մաքրուհիներ, բանվորներ, այգեպաններ, մատուցողներ՝ հյուրանոցի բացօթյա տարածքը սպասարկելու համար: Այս անձնակազմը ամեն օր կատարում է որոշակի ծավալի աշխատանք, սահմանված ժամերին, դրա դիմաց ստանալով ֆիքսված վարձատրություն:
Աշխատանքը սեզոնային է, այսինքն, լրացուցիչ աշխատուժի խիստ կարիք է լինում վաղ գարնանային ամսիներից մինչև խորը աշուն:
Դուք հյուրանոցի նորանաշանակ կառավարիչն եք, ինչ՞ եք կարծում, որն՞ է այս իրավահարաբերությունների ձևակերպման ճիշտ ձևը՝ աշխատանքային վեճերի և գործատուի ռիսկերը նվազեցնելու տեսակետից:

Իրավիճակ Բ. Հյուրանոցում աշխատում են ընդունարանի աշխատակիցներ, մաքրուհիներ, բանվորներ, այգեպաններ, մատուցողներ՝ հյուրանոցի բացօթյա տարածքը սպասարկելու համար: Բացի բանվորներից, մնացած անձնակազմը ամեն օր կատարում է որոշակի ծավալի աշխատանք, սահմանված ժամերին, դրա դիմաց ստանալով ֆիքսված վարձատրություն: Բանվորներին վճարվում է ըստ փաս-տացի կատարված աշխատանքի ծավալի, որը կատարվում է ելնելով հյուրանոցի պահանջներից և վերջինիս կողմից ներկայացված հարցման հիման վրա: Այս բանվորների հետ կապված իրավահարա-բերությունները դեռևս չեն ստացել և ոչ մի իրավական ձևակերպում, իսկ իրենք սպասում են, թե երբ կվճարվի իրենց հասանելիք վարձա-տրությունը: Դուք հյուրանոցի նորանաշանակ կառավարիչն եք, նչ՞ եք կարծում, որն՞ է այս իրավահարաբերությունների ձևակերպման ճիշտ ձևը՝ աշխատանքային վեճերի և գործատուի ռիսկերը նվազեցնելու տեսակետից:

Այս հարցերին պատասխանելու համար, նախ մի փոքր անդրադարձ կատարենք պայմանագրերի տեսակներին:

Աշխատանքային պայմանագիր, որը, ինչպես տեսանք գործատուի և աշխատողի փոխադարձ համաձայնությունն է, որով աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ, իսկ գործատուն վճարում է դրանց դիմաց պայմանագրով սահմանված աշխատավարձը:

Աշխատանքային պայմանագրերը իրենց բնույթով լինում են

- Որոշակի ժամկետով կնքված, այսինքն, երբ կնքվում են մինչև որոշակի օրը/ամիսը/տարեթիվը.
- Անորոշ ժամկետով կնքված, եթե աշխատանքային պայմանագրում դրա գործողության ժամկետը նշված չէ:

Ինչպես՞ որոշել անորոշ թե՞ որոշակի ժամկետով է կնքված տվյալ պայմանագիրըԱշխատանքային պայմանագրերը ենթադրվում են անորոշ ժամկետով կնքված, եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով:Ստորև թվարկենք այն դեպքերը, երբ կնքվում են որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրեր.

- ընտրովի պաշտոններում աշխատողների հետ՝ ընտրված ժամանակահատվածով կամ եթե տվյալ աշխատողը նշանակվել է օրենքով սահմանված ժամկետով /նման դեպքեր են օրինակ՝ մարդու իրավունքների պաշտպանը կամ ընկերությունում գործադիր տնօրենը/.
- սեզոնային աշխատանքներ կատարողների հետ. Օրինակ՝ հովվի, հնձվորի, կթվորի, մատուցողի և նմանատիպ այլ աշխատանքների կատարումը սովորաբար խիստ կապված է սեզոնայնության հետ, այդ իսկ պատճառով, հիմնականում իրենց հետ կնքվում են որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրեր:
- ժամանակավոր (մինչև երկու ամիս ժամկետով) աշխատանքներ կատարողների հետ.
- ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինող աշխատողի հետ. Օրինակ, հղիության և մայրության արձակուրդում գտնվող անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով աշխատողին փոխարինելու համար, սովորաբար կնքում են որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր:
- օտարերկրացիների հետ՝ կացության իրավունքի վավերականության ժամկետով.
- տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող և վաթսուներեք տարին լրացած կամ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող և վաթսունհինգ տարին լրացած անձանց հետ, օրենքով սահմանված կարգով:

Թերևս շատ լայն կիրառվող պրակտիկա է մեր իրականությունում, երբ գործատուն, ցանկություն չունենալով մտնել աշխատանքային իրավահարաբերությունների մեջ, դրանցից բխող հարկային պարտավորություններ ստանձնել, իսկ երբեմն էլ, չարամտորեն դրանցից խուսափելով, նախընտրում է կնքել աշխատողների հետ ծառայությունների մատուցման պայմանագիր կամ վճարել աշխատողներին որոշակի կանխիկ գումար, դրանով իսկ խախտելով ոչ միայն ՀՀ հարկային օրենսդրությունն այլ, որն ամենից կարևոր է, աշխատողի իրավունքները, որոնք երաշխավորված են ՀՀ Սահմանադրությամբ և ԱՕ-ով: Եվ չնայած դրան, որ օրենքով հստակ ամրագրված է գործատուի պատասխանատվությունը, առանց աշխատանքային պայմանագրի աշխատող պահելու հետ կապված, միևնույնն է այս բացասական, չասենք, արատավոր երևույթը, շարունակում է գոյություն ունենալ և տարածվել մեր հանրապետությունում:

Այժմ դիտարկենք ծառայությունների մատուցման պայմանագրը.
Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար (կապի, բժշկական, անասնաբուժական, աուդիտորական, խորհրդատվական, տեղեկատվական, ուսուցման, զբոսաշրջիկության և այլ ծառայություններ):

Իսկ ինչ՞պես որոշել, ինչ՞ տեսակի պայմանագիր կնքել տվյալ անձի հետ:

Ստորև բերված աղյուսակում, համապատասխան նշում կատարելով յուրաքանչյուր կետի դիմաց սահմանված դաշտում, կստանանք տվյալ տեսակի պայմանագրին բնորոշ հատկանիշները, որոնք էլ կօգնեն կողմնորոշվելլ՝ ծառայությունների մատուցման պայմանագիր է անհրաժեշտ թ՞ե աշխատանքային:

Հուշում. Աշխատանքային թ՞ե ծառայությունների մատուցման պայմանագիր. տարբերությունները:

Վերադառնալով բաժնի սկզբում նկարագրված իրավիճակներին, օգտվելով վերը բերված աղյուսակից, փորձե՛ք լուծում գտնել նկարագրված իրավիճակների համար, ելնելով աշխատանքային օրենսդրության սկզբունքներից և նպատակներից, որոնցից ամենակարևորը՝ աշխատողի իրավունքների պաշտպանությունն է:

Հուշում. ինչ՞ է պետք նշել աշխատանքային պայմանագրում.
Տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը
Աշխատողի անունը, ազգանունը
Գործատուի անվանումը
Ստորաբաժանումը /եթե առկա է/
աշխատանքը սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը
պաշտոնը և (կամ) աշխատանքային գործառույթները
հիմնական աշխատավարձի չափը և (կամ) այն որոշելու ձևը
հավելումները, հավելավճարները, լրավճարները
գործողության ժամկետը
աշխատաժամանակի ռեժիմը՝ տեսակը
ամենամյա արձակուրդի տեսակը, տևողությունը
Ստորագրություն, անուն, ազգանուն

Կողմերի իրավունքներն ու պարտականությունները.

Այս բաժնում մենք կննարկենք գործատու և աշխատողի միջև ծագած իրավունքներն ու պարտականությունները, որոնք ձևակերպվել են կամ աշխատանքային պայմանագրով կամ գործատուի անհատական իրավական ակտով: Ինչպես հիշում եք, դրանք են՝ հրամանը կամ կարգադրությունը: Եթե ընդհանրացնենք դրանք.

Ա. Գործատուն իրավունք ունի.
Լուծել աշխատանքային պայմանագիրը.

- Գործատուի լուծարման
- Աշխատողների քանակի և/կամ հաստիքների կրճատման
- Զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին անհամապատասխանության
- Աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու
- Պարտականություններն առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու
- Վստահությունը կորցնելու
- Երկարատև անաշխատունակության
- Ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ գտնվելու
- Անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալու պարտադիր բժշկական զննությունից հրաժարվելու կամ խուսափելու
- Կենսաթոշակային տարիքը լրանալու դեպքերում:
- Ձեռք բերելու և մշակելու աշխատողի անձնական կյանքի վերաբերյալ տվյալներ՝ միայն նրա գրավոր համաձայնությամբ.
- Աշխատողից պահանջելու կատարել աշխատանքային պայմանագրով չնախատեսված աշխատանքներ միայն օրենքով սահմանված դեպքերում.
- Չթույլատրել կատարել իր աշխատանքային պարտականությունները և չվճարել աշխատավարձ, եթե աշխատողը գտնվում է ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում.
- այլ:

Բ. Գործատուն պարտավոր է.

- Աշխատողին ապահովել պայմանագրով պայմանավորված աշխատանքով և կազմակերպել նրա աշխատանքը.
- Նախատեսված ժամկետում և սահմանված չափով վճարել աշխատողի աշխատավարձը.
- Սահմանված կարգով աշխատողին տրամադրել վճարվող և չվճարվող արձակուրդը.
- Ապահովել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ.
- Աշխատանքի ընդունելու ժամանակ, ինչպես նաև աշխատելու ընթացքում աշխատողին ծանոթացնել կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին.
- Կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված այլ պարտականություններ

Գ. Աշխատողն իրավունք ունի.

- Փորձաշրջանի ընթացքում լուծելու աշխատանքային պայմանագիրը
- Լուծելու աշխատանքային պայմանագիրը՝ ԱՕ սահմանված կարգով և ժամկետներում:

- Աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնելու ոչ ուշ, քան այն ներկայացվելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում;
- Ստանալու ամբողջական տեղեկատվություն իր անձնական տվյալների և դրանց մշակման վերաբերյալ.
- Հանգստի և սնվելու ընդմիջման
- ազատորեն և անվճար ծանոթանալու իր անձնական տվյալներին, ստանալու անձնական տվյալներ պարունակող յուրաքանչյուր գրառման պատճենը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.
- Ծանոթանալու իրեն վերաբերող բժշկական տվյալներին, ընդ որում՝նաև իր ընտրած բժշկի մասնակցությամբ.
- Պահանջելու հանել կամ ուղղել սխալ կամ ոչ լիարժեք, ինչպես նաև սույն օրենսգրքի պահանջների խախտումով մշակված անձնական տվյալները: Այդ պահանջը մերժվելու դեպքում աշխատողն իրավունք ունի գործատուին գրավոր ձևով ներ-կայացնելու իր անհամաձայնությունը՝ կցելով համապատասխան հիմնավորումներ.
- Գործատուից պահանջելու իր վերաբերյալ սխալ կամ ոչ լիարժեք տեղեկություններ փոխանցած բոլոր անձանց տեղեկացնել հանված տեղեկությունների, ուղղումների և լրացումների մասին.
- Դատական կարգով բողոքարկելու գործատուի յուրաքանչյուր գործողություն կամ անգործություն՝ կապված իր անձնական տվյալները մշակելու և պահպանելու հետ:

Դ. Աշխատողը պարտավոր է.

- Բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները,
- Պահպանել կազմակերպության ներքին կարգապահական Կանոնները, աշխատանքային կարգապահությունը,
- Կատարել աշխատանքի սահմանված նորմաները,
- Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման պահանջները, արտակարգ դրության կամ կարանտինի ընթացքում գործող սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները,
- Բարեխղճորեն վերաբերվել գործատուի և այլ աշխատողների գույքին, մարդկանց կյանքին ու առողջությանը,
- Գործատուի գույքի պաշտպանությանն սպառնացող վտանգի ծագման մասին անմիջապես տեղեկացնել գործատուին:

Առաջադրանքներ.

Քննարկման համար թեմաներ.
Աշխատանքային հարաբերությունների ստեղծման ժամանակ, օրենս-դիրը սահմանում է փորձաշրջան: Քննարկեք դրա դրական և բացասական կողմերը, արդյոք փորձաշրջան սահմանելը արդյունավետ միջոց է ստուգելու համար աշխատողի համապատասխանությունը տվյալ աշխատանքին:

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը տվել է բավական լայն հնարավո-րություններ աշխատողներին, աշխատանքային հարաբերությունների դադարման հիմքերի մասով: Ինչ՞ եք կարծում, արդյ՞ոք արդարացված են գործատուի դեպքում հիմքերի սահմանափակ լինելը, արդյ՞ոք դա չի բերում աշխատողների կողմից որոշակի չարաշահումներին:

Ինքնաստուգման հարցեր:

1. **Հարց**. Որո՞նք են աշխատանքային հարաբերությունների ծագման հիմքերը.
2. **Հարց.** Որո՞նք են աշխատանքային հարաբերությունների փոփոխման հիմքերը
3. **Հարց**. Արդյո՞ք հնարավոր է փոփոխել աշխատանքի էական պայմաններն առանց աշխատողի համաձայնության: Եվ եթե ոչ, որն՞ է դրա հետևանքը:
4. **Հարց**. Թվարկեք աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերից մի քանիսը.
5. **Հարց**. Ինչով՞ է պայմանավորված գործատուի իրավունքների սահմանափակումը, աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերի մասով:

Աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները

Մենք մոտեցանք ամենակարևոր կետերից մեկին, այն է՝ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմաններին:

Եթե խոսենք շատ ընդհանուր, ապա այս մասով գործատուն պարտավոր է.

- Ապահովել այնպիսի իրավական, սոցիալ-տնտեսական, կազմակերպական-տեխնիկական, սանիտարահիգիենիկ, բուժկանխարգելիչ, վերականգնողական և այլ միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են աշխատողների կյանքի և առողջության պահպանման համակարգ ստեղծելու համար,
  իսկ ավելի հակիրճ.
- Ապահովել աշխատողների կյանքի և առողջության պահպանման համար նորմալ պայմանները:

Յուրաքանչյուր աշխատողի աշխատավայրը և շրջապատող միջավայրը պետք է լինեն անվտանգ, հարմար և առողջության համար անվնաս, կահավորված, համապատասխանեն նվազագույն, ինչպես նաև պարտադիր պահանջներին, որոնք սահմանվում են տեխնիկական կանոնակարգերով (ստանդարտներով) և առողջության պահպանության մասին օրենքի պահանջներին:

Հիմա դիտարկենք, թե որոնք՞ են աշխատանքային նորմալ պայմանները.

- Մեխանիզմների, սարքավորումների և աշխատանքի այլ միջոցների սարքին վիճակը.
- Տեխնիկական փաստաթղթերով ժամանակին ապահովելը.
- Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ նյութերի և գործիքների պատշաճ որակը և դրանք ժամանակին տրամադրելը.
- Արտադրությունն ապահովելը էլեկտրաէներգիայով, գազով և էներգիայի այլ տեսակներով.
- Առողջության համար աշխատանքի անվտանգ և անվնաս պայմանները, այլ կերպ ասած՝ անվտանգության տեխնիկայի նորմերի և կանոնների պահպանումը, պատշաճ լուսավորությունը, ջեռուցումը, օդափոխությունը, սահմանված նվազագույն նորմաներից ցածր աղմուկը, ճառագայթումը, վիբրացիան և աշխատողի առողջության համար բացասական ներգործություն ունեցող վտանգավոր այլ գործոններ.
- Այլ պայմաններ, որոնք անհրաժեշտ են որոշակի աշխատանքներ կատարելու համար:

Եթե աշխատանքում օգտագործվում են տեխնիկական միջոցներ կամ սարքավորումներ, ապա, այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել, որ դրանք կարող են օգտագործվել միայն, եթե համապատասխանում են նորմատիվ ակտերի պահանջներին և գտնվում են տեխնիկապես սարքին վիճակում:

Եթե աշխատանքում օգտագործվում են այնպիսի միջոցներ կամ սարքավորումներ, որոնց համար սահմանվում են օգտագործման հատուկ պահանջներ, ապա գործատուն պարտավոր է աշխատողին ծանոթացնել աշխատանքի որոշակի միջոցի օգտագործման վերաբերյալ անվտանգության ապահովման պահանջներին:

Նշենք, որ այդիպիսի սարքավորումների անվտանգ շահագործման նկատմամբ պարտադիր մշտական հսկողությունն իրականացնում է գործատուն, եթե այդ սարքավորումների օգտագործման (շահագործման) մասին պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Առանձին անդրադառնանք անվտանգությանը վերաբերող ներքին իրավական ակտերին, որպես պարտականություն:

Յուրքանչյուր կազմակերպություն, որի նպատակն է ապահովել իր աշխատողների անվտանգությունը, աշխատանքային նորմալ պայմանները, առողջության պահպանումը, ըստ այդմ, դառնալով պատասխանատու գործատու, պետք է ապահովի որոշակի փաստաթղթերի առկայությունը, այն է՝ ընդունել աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության վերաբերյալ ներքին իրավական ակտեր:
Ի լրումն դրանց, գործատուն ապահովում է աշխատողի կողմից կազմակերպությունում գոյություն ունեցող հնարավոր ռիսկի գործոնների մասին տեղեկացնելը և անվտանգության հրահանգավորում անցնելը նախքան աշխատանքի անցնելը:Հակառակ դեպքում, նման աշխատողին չի կարելի ներգրավել աշխատանային պարտականությունների իրականացմանը:

Բժշկական զննություն, որպես ռիսկերի կառավարմանն ու դրանց նվազեցմանն ուղղված միջոցառում.

Օրենքով սահմանված դեպքերում, որոշ մասնագիտությունների և աշխատանքների համար օրենսդիրը սահմանել է պարտադիր բժշկական զննման պահանջը, որը, կախված մասնագիտությունից և կատարվող աշխատանքից, կարող է անցկացվել ինչպես մինչև աշխտանքի ընդունվելը, այնպես էլ պարբերաբար՝ աշխատանքի ընթացքում:

Պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննության ենթակա մասնագիտությունների, աշխատանքների ցանկը, ինչպես նաև բժշկական զննության անցկացման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Այս պահանջը վերաբերում է սննդարդյունաբերության, առևտրի և հասարակական սննդի կազմակերպությունների, ջրային կառույցների, բուժական և կանխարգելիչ կազմակերպությունների, ինչպես նաև մանկական դաստիարակչական և այլ կազմակերպությունների աշխատողներին, գիշերային ժամանակ կամ հերթափոխով աշխատողներին (մինչև աշխատանքի ընդունվելը, իսկ աշխատանքի ընթացքում՝ պարբերաբար), գործատուի հաստատած ժամանակացույցին համապատասխան:

Պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննության կազմակերպումը.

Ի լրումն պարտադիր բժշկական զննության կազմակերպման, գործատուն պարտավոր է հաստատել այն աշխատողների ցանկը, որոնք ենթակա են պարտադիր բժշկական զննության, և առողջությունը վերահսկող կազմակերպության հետ համաձայնեցնել բժշկական զննություն անցնելու ժամանակացույցը, որին աշխատողները ծանոթացվում են ստորագրությամբ:
Պարտադիր բժշկական զննումը կատարվում է աշխատանքային ժամերին՝ գործատուի միջոցների հաշվին:

Կազմակերպությունում կամ կազմակերպության ստորաբաժանումներում վտանգ առաջանալու դեպքում գործատուի և աշխատողների պարտականությունները.

Այժմ դիտարկենք կազմակերպությունում կամ կազմակերպության ստորաբաժանումներում վտանգ առաջանալու դեպքում գործատուի և աշխատողների պարտականությունները:
Նախ նշենք, որ աշխատանքը ժամանակավորապես դադարեցվում է հետևյալ դեպքերում, երբ.

- աշխատողը չի ծանոթացել աշխատանքի անվտանգ կատարման կանոններին.
- առաջացել է աշխատանքի միջոցի անսարքություն կամ վթարային վիճակ.
- աշխատանքը կատարվում է սահմանված տեխնոլոգիական կանոնակարգի խախտումներով.
- աշխատողները ապահովված չեն կոլեկտիվ և (կամ) անհատական պաշտպանության միջոցներով.
- աշխատավայրը վտանգավոր կամ վնասակար է կյանքի և առողջության համար,

Կազմակերպությունում կամ կազմակերպության ստորաբաժանումներում վտանգ առաջանալու դեպքում գործատուն պարտավոր է՝

- Բոլոր աշխատողներին և այն անձանց, որոնց կարող է վտանգ սպառնալ, հնարավորինս արագ տեղեկացնել սպառնացող վտանգի, անվտանգության ապահովման և առողջության պահպանման համար ձեռնարկվելիք միջոցառումների և աշխատողների կողմից կատարվելիք գործողությունների մասին.
- Ձեռնարկել միջոցներ աշխատանքների դադարեցման համար և հրահանգել աշխատողներին՝ լքելու աշխատանքային տարածքը և տեղափոխվելու անվտանգ վայր.
- Կազմակերպել տուժողներին առաջին բուժօգնության տրամադրումը և աշխատողների տեղահանումը.
- Հնարավորինս արագ տեղեկացնել համապատասխան ներքին և արտաքին ծառայություններին ու մարմիններին՝ վտանգի և տուժած աշխատողների մասին.
- Մինչև մասնագիտացված ծառայությունների ժամանումը վտանգի վերացման համար ներգրավել կազմակերպության անվտանգության ապահովման և առողջության պահպանության ծառայության, ինչպես նաև համապատասխան ուսուցում անցած աշխատողներին:

Աշխատողներն էլ, իրենց հերթին, պարտավոր են հնարավորինս աջակցել գործատուին, իրականացնելով անվտանգության ապահովման և առողջության պահպանման համար ձեռնարկվելիք միջոցառումները և գործողություններ:

> **Եթե գործատուն.**
> միջոցներ չի ձեռնարկում աշխատողներին հնարավոր վտանգից պաշտպանելու համար, ապա աշխատանքի դադարեցման պահանջով իրավունք ունեն հանդես գալու կազմակերպության

անվտանգության ապահովման և առողջության պահպանության ծառայությունը, ինչպես նաև աշխատողների ներկայացուցիչները:

> Հրաժարվում է կատարել կազմակերպության անվտանգության ապահովման և առողջության պահպանության ծառայության կամ աշխատողների ներկայացուցիչների պահանջը, ապա վերջիններս այդ մասին տեղեկացնում են Վերահսկող մարմնին, որը աշխատողների անվտանգության ապահովման և առողջության վիճակի գնահատումից հետո կարող է որոշում ընդունել՝ պարտավորեցնելով գործատուին դադարեցնել աշխատանքը:

> Հրաժարվում է կատարել աշխատանքի անվտանգության ապահովման նկատմամբ Վերահսկող մարմնի պահանջները, ապա վերջինս իրավունք ունի դիմելու ոստիկանություն՝ աշխատանքի դադարեցման պահանջի կատարման և վտանգավոր աշխատատեղերից աշխատողների տեղահանման համար:

Աշխատանքի միջոցների անսարքության կամ վթարային վիճակի առաջացման մասին աշխատողները պարտավոր են անմիջապես տեղեկացնել գործատուին:

Եթե բնական պայմանները խոչընդոտում են աշխատանքների անվտանգ իրականացմանը, ապա աշխատանքները պետք է դադարեցվեն:

Վտանգի առաջացման դեպքում արտադրությունում դժբախտ պատահարները կանխելու համար գործատուն իրավունք ունի աշխատողներին փոխադրելու աշխատանքային պայմանագրով չնախատեսված այլ աշխատանքի:

Տեղահանման պլան

Յուրաքանչյուր կազմակերպություն պարտավոր է ունենալ աշխատողների տեղահանման պլան, որը պետք է փակցվի տեսանելի տեղերում:

Կազմակերպության անվտանգության ապահովման և առողջության պահպանության ծառայությունն ու արհեստակցական միությունը պարտավոր են տեղեկացված լինել տեղահանման և վթարների նախազգուշացման ու վերացման պլաններին:

Այն կազմակերպությունները, որտեղ արտադրվում, օգտագործվում, պահպանվում են վտանգավոր նյութեր, պարտավոր են օրենսդրությամբ սահմանված կարգով ունենալ հնարավոր վթարի մասին նախազգուշացնելու և հետևանքները վերացնելու համար գործողությունների պլաններ:

Կազմակերպության սանիտարահիգիենիկ սենյակները.

Կազմակերպությունում աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման մասին օրենքով սահմանված կարգին համապատասխան՝ հանգստանալու, երեխաներին կրծքով կերակրելու, զգեստափոխվելու, հագուստը, կոշիկները, անհատական պաշտպանության միջոցները պահպանելու համար կահավորվում են սանիտարական և անձնական հիգիենայի սենյակներ կամ համապատասխան առանձնացված տեղեր՝ լվացարաններով, ցնցուղարաններով, զուգարաններով:
Այն կազմակերպությունում, որտեղ օգտագործվում են վտանգավոր նյութեր, սանիտարական և անձնական հիգիենայի սենյակները կահավորվում են նման սենյակների կահավորման համար հատուկ պահանջների պահպանմամբ:
Կազմակերպության բուժկետերը, սնվելու համար սենյակները կահավորվում են այդպիսի սենյակների կահավորման պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով աշխատողների քանակը:

Աշխատողների ապահովումը պաշտպանության միջոցներով.

Եթե ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և կազմակերպությունում աշխատողների անվտանգության ու առողջության վիճակի գնահատման հիման վրա անհարժեշտ է աշխատողների տրամադրել պաշտպանության միջոցներ, ապա դրանց տրամադրում է գործատուն, տրամադրելով համապատասխանաբար անհատական պաշտպանության միջոցներ կամ կոլեկտիվ պաշտպանության միջոցներ:

Աշխատողների բուժօգնության կազմակերպումը.

Աշխատավայրում դժբախտ պատահարների կամ սուր հիվանդությունների առաջացման դեպքերում գործատուն պարտավոր է աշխատողներին ապահովել առաջին բժշկական օգնությամբ, հարկ եղած դեպքում՝ տեղափոխել առողջապահական կազմակերպություն իր միջոցների հաշվին:

Մինչև տասնութ տարեկան անձանց աշխատանքի արգելքը

ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում մինչև տասնութ տարեկան անձանց ներգրավելն արգելվում է:

Մայրության պաշտպանությունը

ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց ներգրավելն արգելվում է:

Ի ապահովումն այս կարևորագույն դրույթի, գործատուն պարտավոր է.
Որոշել հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց անվտանգության և առողջության վրա ազդող վտանգավոր գործոնների ազդեցության տևողությունը և բնույթը և պարտավոր է վտանգավոր գործոնների ազդեցության ռիսկի վերացման նպատակով ձեռնարկել ժամանակավոր միջոցներ:

Եթե դա հնարավոր չէ, ապա գործատուն պարտավոր է.
Միջոցներ ձեռնարկել բարելավելու աշխատանքային պայմանները, բացառելու նման գործոնների ազդեցությունը:

Եթե աշխատանքային պայմանների փոփոխությամբ նման ազդեցությունը հնարավոր չէ վերացնել, ապա գործատուն պարտավոր է.
Կնոջը (նրա համաձայնությամբ) փոխադրել այլ աշխատանքի նույն կազմակերպությունում:

Եթե դա հնարավոր չէ, ապա գործատուն պարտավոր է.
Կնոջը տրամադրել վճարովի արձակուրդ մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի հատկացումը:

Բացի այդ, գործատուն պարտավոր է.
Հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կնոջն ազատել աշխատանքային պարտականությունների կատարումից՝ պահպանելով միջին աշխատավարձը, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով միջին ժամային աշխատավարձի չափը, եթե հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կնոջն անհրաժեշտ է աշխատաժամանակի ընթացքում բժշկական հետազոտություն անցնել:

Տրամադրել լրացուցիչ ընդմիջում, յուրաքանչյուր երեք ժամը մեկ՝ երեխային կրծքով կերակրող կնոջը մինչև երեխայի մեկուկես տարին լրանալը, բացի հանգստի և սնվելու համար տրամադրվող ընդմիջման ժամերից, որը պետք է տևի կես ժամից ոչ պակաս:

Աշխատող հաշմանդամների անվտանգության և առողջության երաշխիքները.

Աշխատող հաշմանդամների անվտանգությունը և առողջության պահպանումը երաշխավորվում են օրենքներով:

Աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների մասին հայտնելը

Աշխատանքի վայրում դժբախտ դեպքից տուժած, մասնագիտական սուր հիվանդությամբ հիվանդացած աշխատողը (եթե ի վիճակի է), ինչպես նաև այն անձը, որը ականատես է եղել դժբախտ պատահարին կամ դրա հետևանքներին, պարտավոր են անմիջապես այդ մասին հայտնել ստորաբաժանման ղեկավարին, գործատուին, կազմակերպության աշխատողների անվտանգության և առողջության հարցերով ծառայությանը:

Աշխատանքի վայրում աշխատողի մահվան դեպքում գործատուն պարտավոր է անհապաղ հայտնել ապահովագրողին, ՀՀ ոստիկանությանը և տեսչական մարմնին:

Դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների ծառայողական քննությունը

Կազմակերպությունում մասնագիտական հիվանդությունների և դժբախտ դեպքերի պատճառները պարզելու նպատակով անցկացվում է ծառայողական քննություն:
Մասնագիտական հիվանդությունները և դժբախտ դեպքերը ենթակա են պարտադիր հաշվառման գործատուի կողմից, ՀՀ կառավարության սահմանված կարգով:

Ապահովագրությունը, որպես ռիսկերի կառավարման լրացուցիչ միջոցառում.

ՀՀ-ում այսօր բավական լայն է կիրառվում գործատուի կողմից աշխատողների առողջության ապահովագրությունը, որպես տվյալ գործատուի մոտ աշխատանքի ընդունվելու լրացուցիչ առավելություն, ինչը ողջունելի է: Հատկապես, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ պետական պարտադիր բժշկական ապահովագրության մեխանիզմի ներդրումն առայժմ դեռևս քննարկման փուլում է:

Այսօր ՀՀ-ում գործում են ապահովագրության հետևյալ տեսակները.

Ա. Կամավոր

- Առողջության կամ բժշկական ապահովագրություն,
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն,
- Տրանսպորտային փոխադրամիջոցների ապահովագրություն կամ ԿԱՍԿՈ (օդային/ցամաքային),
- Գույքին հասցված վնասներից ապահովագրություն,
- Բեռների ապահովագրություն,
- Պատասխանատվության ապահովագրություն,
- Ֆինանսական վնասների ապահովագրություն,
- Ճամփորդության կամ աջակցության ապահովագրություն, և այլն

Բ. Պարտադիր.

- Ավտոքաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը, բոլորիս լավ ծանոթ ԱՊՊԱ-ն

Որպես ռիսկերի կառավարման լրացուցիչ միջոցառում՝ առողջության, դժբախտ պատահարներից ապահովագրության մեխանիզմների ներդրումն ու դրանց պատշաճ իրականացումը, այսօր հանդիսանում է արդյունավետ ու ծախսերի տեսակետից հիմնավորված միջոցառում:

Այն անհրաժեշտ է, եթե չասենք, պարտադիր է, բոլոր նրանց համար, որոնք, ի լրումն պետության կողմից տրված երաշխիքներին, ցանկություն ունեն նվազեցնելու աշխատավայրում դժբախտ դեպքերի ու աշխատողների առողջությանը պատճառված վնասների հետևանքները, հանդես գալով որպես պատասխանատվության բարձր մակարդակ ունեցող գործատուներ:

Առաջադրանքներ.

Քննարկման համար թեմաներ.
Կմն արդյոք այլ միջոցառումներ, որոնք ըստ Ձեզ կարելի է կիրառել, աշխատավայրում աշխատողների պաշտպանությունն ավելի արդյունավետ իրականացնելու համար կամ, գուցե դրանք արդեն բավարար են, բայց կարիք կա դրանց լրացուցիչ զարգացման և բարելավման համար: Հիմնավորեք Ձեր կարծիքը:

Ինքնաստուգման հարցեր:

1. **Հարց**. Թվարկեք այն միջոցառումները, որոնք Գործատուն պարտավոր է ապահովել աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի և առողջության պահպանման համար /աշխատողների կյանքի և առողջության պահպանման համար նորմալ պայմանները/:

2. **Հարց**. Գործատուն պարտավոր է ապահովել, որպեսզի աշխատողն անցնի աշխատանքային պարտականությունների կատարմանը, կազմակերպությունում գոյություն ունեցող հնարավոր ռիսկի գործոնների մասին տեղեկացվելուց և անվտանգության հրահանգավորում անցնելուց հետո: Իսկ եթե աշխատողը չի անցել դրանք, կամ հրաժարվում է դրանք անցնել, ինչ՞ պետք է անի գործատուն.

3. **Հարց**. **Պատկերացրեք հետևյալ իրավիճակը**. Ձեր մասնագիտությունը ներառված է պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննության ենթակա մասնագիտությունների ցանկում: Գործատուն, ինչպես պահանջում է օրենքը, պատշաճ կազմակերպել է Ձեր պարբերական բժշկական զննության անցկացման կարգը և այժմ պահանջում է, որպեսզի Դուք այն անցնեք: Սակայն, Դուք, ինչ-ինչ պատճառներով, հրաժարվում եք դրանից: Որպես գործատու, ինչ՞ քայլեր կարող է նա ձեռնարկել:

4. **Հարց**. **Պատկերացրեք հետևյալ իրավիճակը**. Դուք հյուրանոցային համալիրի ղեկավար եք, հյուրանոցում բռնկվել է հրդեհ: Թվարկեք Ձեր գործողությունները .

5. **Հարց.** ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց ներգրավելն արգելվում է: Որոնք՞ են գործատուի քայլերը:

6. **Հարց**. **Որ՞ն է** ռիսկերի կառավարման լրացուցիչ արդյունավետ միջոցառումը, ինչու՞ /հիմնավորեք Ձեր կարծիքը/:

02

ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Նախաբան

Սննդամթերքի անվտանգությունը սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի, սննդի շղթայի և առևտրի ու հանրային սննդի ոլորտում ծառայությունների մատուցման փուլերում անվտանգությանն առնչվող հարաբերությունները կարգավորող, ինչպես նաև պետության կողմից նախատեսվող մարդու առողջության պաշտպանության երաշխիքները ամրագրող և սննդամթերքի և սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի վնասակար ու վտանգավոր ազդեցությունից պաշտպանող ոլորտ է: Ոլորտի կարգավորման հիմնական նպատակը հանրության առողջությունը սննդամթերքի հնարավոր վնասակար ազդեցությունից պաշտպանելն է, ինչպես նաև սննդամթերքի արտադրության, պահպանման, տեղափոխման, վերամշակման, իրացման փուլերում սննդամթերքի անվտանգության ապահովումը, սննդամթերքի արտադրության և շրջանառության կամ սննդի շղթայի փուլերում պետական վերահսկողության ապահովումը՝ հետագծելիության սկզբունքի կիրառմամբ և այլ առանցքային խնդիրներ: Սննդամթերքի անվտանգության ոլորտի խնդիրը սննդի շղթայի բոլոր փուլերում կատարվող գործառնությունների ժամանակ մարդու կյանքի, առողջության և շրջակա միջավայրի անվտանգության երաշխիքների ապահովումն է, նաև՝ գյուղատնտեսության, զբոսաշրջիկության և շուկայի կայուն զարգացումը:

> Այս բաժնում կներկայացվեն հետևյալ թեմաները.

Սննդի անվտանգությունը՝ հյուրանոցային տնտեսություններում: Սննդամթերքի պահպանմանը, փոխադրմանը, պատրաստմանը և մատուցմանը ներկայացվող սանիտարական պահանջները: Խոհանոցային տարածքին ներկայացվող պահանջները տեխնիկային:

ԹԵՄԱ 1

Մննդի անվտանգությունը՝ հյուրանոցային տնտեսություններում

Թեմայի նպատակն է
ներկայացնել աշխատակիցներ առողջական վիճակի պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննության կարգը, աշխատակիցների անձնական հիգիենային ներկայացվող սանիտարական պահանջները, ինչպես նաև հյուրանոցային տնեսության օբյեկտների անձնակազմի աշխատանքային և կենցաղային պայմաններին ներկայացվող հիգիենիկ պահանջները:

Առանցքային բառեր թեմա 1-ի համար.
Աշխատակիցներ առողջական վիճակի պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննության կարգը
Աշխատակիցների անձնական հիգիենային ներկայացվող սանիտարական պահանջները
Հյուրանոցային տնեսության օբյեկտների անձնակազմի աշխատանքային և կենցաղային պայմաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ

Սանիտարական կանոնները և նորմերը

Աշխատակիցներ առողջական վիճակի պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննության կարգը: Պարտադիր բժշկական զննության ենթակա են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված պարտադիր բժշկական զննության ցանկում թվարկված կազմակերպություններում աշխատանքի ընդունվող և աշխատող անձինք, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը:

Բժշկական զննության գործընթացն իրականացնում են բժիշկ-մասնագետները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված պարտադիր բժշկական զննության ցանկի: Պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննություն անցկացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման համաձայն Հայաստանի Հանրապե-տության առողջապահության նախարարության կողմից տրված բժշկական օգնության և սպասարկման համապատասխան տեսակ իրականացնելու լիցենզիա ունեցող բուժկանխարգելիչ կազմակեր-պությունում

թերապևտի, մաշկավեներաբանի, իսկ առանձին դեպքերում՝ ատամնաբույժի, քիթ-կոկորդ-ականջի մասնագե-տի կողմից, ինչպես նաև կատարվում են հետազոտություններ տուբերկուլյոզի, աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչ-ների, որդերի, վեներական ու վարակիչ մաշկային հիվանդությունների նկատմամբ: Բժիշկ-մասնագետն անհրաժեշտ բժշկական զննություն (հետազոտություններ) կատարելուց հետո, հակացուցումների բացակայության դեպքում, հետազոտվողի սանիտարական (բժշկական) գրքույկում կատարում է նշում աշխատելու թույլտվության մասին:

Պարտադիր բժշկական զննության (հետազոտությունների) ենթակա չեն խմորասնկերի, օսլայի արտադրության, բանջարեղենի չորացման, աղի հանքերի ու աղ մշակող կազմակերպությունների, աղացների, էլևատորների, ձավարեղենի գործարանների, հացահատիկային ամբարների, ալրի, ձավարի, ցորենի պահեստների և այլ նմանատիպ կազմակերպությունների, ինչպես նաև սպիրտի, օղու, լիկյորի արտադրությունների ու գինեգործական գործարանների աշխատող-ները, այդ թվում՝ պատրաստի արտադրանքի առաքիչները:

1.1

Աշխատակիցների անձնական հիգիենան

Հյուրատան աշխատակիցների կողմից անձնական հիգիենայի կանոնների պահպանումը մեծ նշանակություն ունի և ծառայում է որպես կազմակերպության ընդհանուր մակարդակի կարևոր ցուցիչ:

Անձնական հիգիենայի կանոնները ներկայացնում են մարմնի, ձեռքերի, բերանի խոռոչի և հագուստի հիգիենայի պահանջների ամբողջական շարք: Նշված կանոնների չպահպանումը կարող է հանգեցնել սննդի աղտոտման, ինչպես նաև աշխա-տակիցների շրջանում հիվանդա-ցության:

1.2

Աշխատակիցների անձնական հիգիենային ներկայացվող սանիտարական պահանջները.

Նախքան աշխատանքի ընդունվելը, աշխատակիցները, սահմանված կարգով պետք է անցնեն նախնական բժշկական զննություն, մասնակցեն հիգիենայի կանոններին նվիրված վերապատրաստմանը և ստանան վկայագրեր:

Յուրաքանչյուր աշխատակից, պետք է ունենա իր անձնական սանիտարական (բժշկական) գրքույկը (աշխատանքը սկսելու պահից) , որտեղ կգրանցվեն պարբերաբար իրականացվող լաբորատոր հետազոտությունների(աշխատակիցները ովքեր շփվում են անմիջապես սննդամթերքի հետ՝ վեց ամիսը մեկ), ֆլուորոգրաֆիկ հետազոտությունների արդյունքները, սանիտարահիգիենիկ նվազագույն պահանջներին նվիրված դասընթացի գնահատականը և հավաստագրումը:

Աշխատակցի բժշկական հետազոտության արդյունքները պետք է գրանցվեն հատուկ մատյանում (տես՝ Հավելված 1): Բուժզննումից հետո, գործատուն կարող է վստահել աշխատակցին կատարել աշխատանքը՝ համաձայն իր աշխատանքային պարտականությունների շրջանակի:

Առաջին օգնության դեղատուփ՝ աշխատակիցներին առաջին բուժօգնության ցուցաբերելու համար անհրաժեշտ դեղամիջոցներով: Աշխատակիցներին հատկացվում է հատուկ հանդերձանք, կոշիկ, կապագլխարկ, գլխարկ:
Կա հանդերձարան՝ առանձին կախիչներով՝ նախատեսված անձնական աշխատանքային և սանիտարական հագուստի համար: Արգելվում է

անձնական հագուստը, իրերը և կոշիկները պահել արտադրական տա-րածքում: Ձեռքերը պետք է լվանալ համաձայն ցուցումների, տես Նկ. 1-ը:
Նկար 1. Ինչպես ճիշտ լվանալ ձեռքերը:

Նկար 1.

1.3

Հյուրանոցային տնտեսության օբյեկտների անձնակազմի աշխատանքային և կենցաղային պայմաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ

Հյուրանոցային տնտեսության օբյեկտներում սարքավորումների տեղադրումը, շահագործումը իրականացվում են տեխնիկայի անվտան-գության կանոնների խիստ պահպանմամբ, որի վերաբերյալ սարքավո-րումներին կից պետք է փակցվեն համապատասխան հրահանգներ: Աշխատակիցների համար հատկացվում են սանիտարակենցաղային սենքեր (հանդերձարան) հագուստի պահարաններով, սանհանգույց, ցնցուղարան, հանգստի և սննդի ընդունման սենյակ, որոնց համար պետք է առանձնացվեն պիտակավորված մաքրման պարագաներ և գույք: Բոլոր աշխատողները ապահովվում են արտահագուստի 2-ական լրակազմով և անձնական հիգիենայի պարագաներով:

Հյուրանոցային տնտեսության օբյեկտների աշխատող անձնակազմը առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդուն-վելիս) և պարբերական բժշկական զննության է ենթարկվում՝ համաձայն ՀՀ կառավարության «Առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգը, գործունեության ոլորտների, որոնցում զբաղված անձինք ենթա-կա են առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության և բժշկա-կան զննության ծավալի ու հաճախակա-նությունների ցանկը և անձնա-կան սանիտարական (բժշկական) գրքույկի ու բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկի ձևերը հաստատելու մասին» 27.03.03 թ. թիվ 347-Ն որոշման:

Առաջադրանքներ.

Առաջադրանք 1.1
Այցելեք որևէ հանրային սննդի կազմակերպություն և ստուգեք թե՝ նրա աշխատակիցների հիգիենան համապատասխանում է այս դասում սովորած սանիտարական կանոններին և նորմերին:

Առաջադրանք 1.2.
Նշեք նկարում եղած սանիտարական խախտումները:

Առաջադրանք 1.3
Ո՞ր եղունգներն են համապատասխանում սանիտարական նորմերին:

Ինքնաստուգման հարցեր:

1. Ո՞րն է սննդամթերքի անվտանգության ոլորտի խնդիրը :
2. Ո՞ր աշխատակիցներն են անցնում պարբերական բժշկական զննություն:
3. Ո՞րոնք են հյուրանոցային տնտեսություններում աշխատանքային և կենցաղային պայմաններին ներկայացվող հիգիենիկ պահանջները:
4. Ո՞վքեր պարտադիր բժշկական զննության (հետազոտությունների) ենթակա չեն՝
5. Բժշկական զննություն կատարելուց հետո, հակացուցումների բացակայության դեպքում, հետազոտվողի սանիտարական (բժշկական) գրքույկում ինչ նշումներ են կատարում:

02

ԱՍՆՆԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

ԹԵՄԱ 2 .....

Սննդամթերքի պահպանմանը,փոխադրմանը, պատրաստմանը և մատուցմանը ներկայացվող սանիտարական պահանջները

Թեմայի նպատակն է.
ներկայացնել սննդամթերքի պահպանմանը, փոխադրմանը, պատրաստմանը և մատուցմանը ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջները, նախնական մշակման սանիտարահիգիենիկ կանոնները և անվտանգության մասին ընդհանուր դրույթները

Սննդամթերքի պահպանմանը, փոխադրմանը, պատրաստմանը և մատուցմանը ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջներն են.

Հանրային սննդի կազմակերպություններում սննդատեսակների պատրաստումը իրականացվում է նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (տեխնիկական պայմաններ, բաղադրագրեր, տեխնոլոգիական հրահանգներ) պահանջների համաձայն, որոնց պահպանումը երաշխավորում է թողարկվող արտադրանքի անվտանգությունը բնակչության առողջության համար:

Հումքի և պատրաստի արտադրանքի մշակումը կատարվում է առանձին-առանձին, հատուկ կահավորված արտադրամասերում՝ օգտագործելով համապատասխան մակնշում ունեցող սարքավորումներ, գույք, տարա և այլն: Հանրային սննդի կազմակերպություններում հումքի և պատրաստի արտադրանքի մշակումը կարելի է կատարել նույն սենքում/բաժնում՝ մակնշված առանձին սեղանների վրա:. Արգելվում է հալեցված միսը սառեցնել կրկնակի անգամ: Նախքան ոսկրազատելը մսեղիքը մանրակրկիտ մաքրվում է խոզանակով և լվացվում հոսող ջրով: Արյունակույտերը, դրոշմը, վնասվածքները ամբողջությամբ հեռացվում են:

Չի թույլատրվում մսեղիքը լվանալ լաթի կտորով: Աշխատանքն ավարտելուց հետո խոզանակները մաքրվում են լվացող նյութերի լուծույթով, պարզաջրվում և շոգեհարվում եռման ջրով: Մսի խճողակը պահվում է 2-6^{0}C ջերմաստիճանում 6 ժամից ոչ ավելի: Արգելվում է պահել խճողակը առանց սառնարանային պայմանների:

- Տեղափոխվող մթերքը պետք է ուղեկցվի համապատասխան փաստաթղթերով, որոնք հաստատում են դրա ծագումը, որակը և անվտանգությունը: Փաստաթղթերում նշվում է ամսաթիվը, ժամը, արտադրողի անվանումը պիտանելիության ժամկետը:
- Պահեստային տարածքները պետք է համապատասխանեն տարողունակության չափանիշներին:
- Անհրաժեշտ է պահպանել «առաջինը մուտք, առաջինը ելք» (FIFO) սկզբունքը: Այս սկզբունքը կիրառվում է առաջին հերթին շուտ փչացող ապրանքների համար նախատեսված պահեստներում, որտեղ ապրանքների պահպանման ժամկետը կարևոր է: Ապրանքը ստանալիս, իրականացվում է արտաքին զննություն (ստուգվում է հոտը, տեսքը, թանձրությունը):
- Առանց կնիքի և ուղեկցող փաստաթղթերի միսը չի ընդունվում:
- Պահածոյացված սննդամթերքը, որի տեսքն անբավարար է (տուփն ուռած է, ճխլված, ժանգոտած) չի ընդունվում:
- Պահվում է սառնարանային սարքավորումների ջերմաստիճանային ռեժիմի մատյան. որտեղ էլեկտրոնային ջերմաչափերից ստացված տվյալները մուտքագրվում են ըստ Ցելսիուսի սանդղակի (տես՝ Հավելված 2):

2.1 Սննդամթերքի նախնական մշակման սանիտարահիգիենիկ կանոնները

Սառեցված ենթամթերքը (ուղեղ, երիկամ և այլն) հալեցվում է բացօթյա կամ ջրում: Նախքան ջերմային մշակումը, ուղեղը, երիկամը, ստինքը թրջոց է դրվում սառը ջրում: Սառեցված թռչնի մսեղիքը հալեցվում է բացօթյա, ինչպես նաև գերբարձր հաճախականությամբ վառարաններում՝ վերջիններիս շահագործման հրահանգի համապատասխան, անհրաժեշտության դեպքում՝ խանձվում մանրափետուրները, մանրակրկիտ լվացվում սառը ջրով և դասավորվում կտրվածքով դեպի ներքև՝ ջուրը հեռացնելու համար: Հում թռչնի միսը մշակելու համար պետք է նախատեսել առանձին սեղան: Աղցանները և կիսապատրաստվածքները պահվում են 2-6 °C ջերմաստիճանում 6 ժամից ոչ ավել: Թթվասեր, մայոնեզ, քացախ, ձեթ և այլ հավելումներ աղցաններին ավելացվում են մատուցելուց անմիջապես առաջ: Դոնդողներ պատրաստելու դեպքում եփած պատրաստի մթերքը ընկղմվում է նախօրոք քամիչով անցկացրած արգանակի մեջ ու կրկնակի անգամ եռացվում: Դոնդողը տաք վիճակում լցվում է նախօրոք շոգեհարված կաղապարների կամ այլ սպասքի մեջ, պաղեցվում և պահվում սառցապահարանում՝ սառը խորտիկների արտադրամասում: Դոնդողը իրացվում է միայն սառնարանային սարքավորումների առկայության դեպքում, վերջիններիս բացակայության դեպքում դոնդողի պատրաստումը և իրացումն արգելվում է: Աղացած մսից (այդ թվում թռչնի մսից) պատրաստած կիսապատրաստվածքներն տապակվում են երկու կողմից՝ 3-5 րոպե տևողությամբ, մինչև կարմրավուն կեղևի առաջանալը, ապա տեղափոխվում ջեռոց և տապակվում 250-280°C ջերմաստիճանում, 5-7 րոպե տևողությամբ: Աղացած մսից արտադրանքի պատրաստ լինելու աստիճանը որոշվում է զգայորոշման (օրգանոլեպտիկ) հետևյալ հատկանիշներով. արտադրանքի կտրվածքից պետք է արտազատվի անգույն հյութ, կտրվածքի մակերեսը պետք է ունենա գորշ գույն: Մսի ամբողջական կտորներից պատրաստած արտադրանքի կենտրոնում ջերմաստիճանը պետք է լինի 85°C-ից ոչ ցածր, իսկ աղացած մսի զանգվածից պատրաստած արտադրանքի (կոտլետներ, քյաբաբ և այլն) կենտրոնում՝ 90°C-ից ոչ ցածր: Էլեկտրոգրիլ կամ համապատասխան այլ սարքերում խոհարարական արտադրանքի պատրաստումն իրականացվում է սարքի շահագործման հրահանգին համապատասխան, ընդ որում պատրաստի արտադրանքի ներսում (կենտրոնում) ջերմաստիճանը պետք է լինի 85°C-ից ոչ ցածր: Պատրաստի խճողակը անմիջապես պաղեցվում է և պահվում պաղեցրած վիճակում: Չի թույլատրվում պատրաստի խճողակը պահել և օգտագործել հաջորդ օրը:

Նկար 2. Սննդամթերքի մշակման սանիտարահիգիենիկ կանոնների օրինակներ



Նկար 2.

2.2

Մթերքի ջերմային մշակմանը ներկայացվող սանիտարահիգիենիկ կանոնները

Ճաշատեսակներ պատրաստելու համար օգտագործվող ձուն ենթարկվում է մշակման այդ նպատակի համար առանձնացված տեղում, մակնշված հատուկ տարողություններում (դույլ, կաթսա կամ այլ տարողություն):

Մշակումը կատարվում է հետևյալ հաջորդականությամբ.

- մշակում կալցիումացված սոդայի 1-2%-անոց գոլ լուծույթով,
- ախտահանում քլորամինի 0. 5% -անոց լուծույթով,
- մանրակրկիտ պարզաջրում սառը ջրով:

Մշակելուց հետո ձուն տեղադրվում է տեփուրի կամ մաքուր տարաների մեջ:

Չի թույլատրվում արտադրական բաժիններ բերել և օգտագործել համապատասխան մշակման չենթարկված ձու:

Ձվի փոշին մաղվում, վերականգնվում է ջրով և 30-40 րոպե տևողությամբ ուռճեցնելուց անմիջապես հետո ենթարկվում խոհարարական մշակման: Չի թույլատրվում օմլետի պատրաստումը մելանժից: Չպաստերացված կաթից պատրաստած կաթնաշոռը օգտագործվում է միայն ջերմային մշակման ենթարկվող տեսականի պատրաստելու համար: Հանրային սննդի կազմակերպությունում սուլֆիտացված կամ մեթիլ ցելյուլոզայի փրփուրով մշակված կարտոֆիլ ստանալու դեպքում, թույլատրվում է այն պահել սառցախցիկում՝ սուլֆիտացվածը՝ 48, մեթիլ ցելյուլոզայի փրփուրով մշակվածը՝ 72 ժամից ոչ ավել: Առանց սառնարանային պայմանների վերջիններս կարելի է պահել, համապատասխանաբար, 24 և 36 ժամից ոչ ավել: Օգտագործելուց առաջ մշակման ենթարկված կարտոֆիլը մանրակրկիտ լվացվում է սառը ջրով: Հանրային սննդի կազմակերպություններում արգելվում է.

- պատրաստել նրբաբլիթներ (բլիններ) չպաստերացված կաթից ստացված կաթնաշոռով,
- օգտագործել նախնական ջերմային մշակման (պաստերացում, եռացում) չենթարկված հում կաթ և սերուցք,
- տեղափոխել մանր փաթեթավորմամբ կաթնաթթվային արտադրատեսակներ և ըմպելիքներ (թան, ացիդոֆիլին, մածուն և այլն) մեծ տարողությունների մեջ՝ չափաբաժանելու համար: Կաթնաթթվային արտադրանքի չափաբաժանումը պետք է կատարել արտադրական տարողություններից կամ մատուցել արտադրողական փաթեթվածքներով/տարաներով,
- պատրաստել կաթնաթթվային ըմպելիք կամ կաթնաշոռ թթվեցրած կաթից,
- պատրաստել ծխեցրած, ապխտած, աղ դրած ձուկ, միս, հավ:

Հանրային սննդի կազմակերպություններում անհրաժեշտ տեխնոլոգիական սարքավորումների և հիգիենիկ պայմանների առկայության դեպքում թույլատրվում է պատրաստել աղ դրած և թթվեցրած բանջարեղեն՝ բացառելով հերմետիկ փաթեթավորումը: Հանգստի վայրերում և փողոցներում մանղալի վրա մսից արտադրատեսակներ (խորոված, կուպատներ, քյաբաբ և այլն) թույլատրվում է պատրաստել միայն դրանց կիսապատրաստվածքները ստացիոնար հանրային սննդի կազմակերպություններում պատրաստելու դեպքում: Նշված տեսականու իրացման վայրում անհրաժեշտ է ապահովել հետևյալ պայմանները.

- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացված կրպակի կամ տաղավարի առկայություն,
- կիսապատրաստվածքների պահպանման համար սառնարանային պայմանների առկայություն,
- արտադրանքը պատրաստելու համար միայն մետաղյա շամփուրների օգտագործում,
- միանվագ օգտագործման սպասքով ապահովվածություն,
- արտադրանքի պատրաստում իրացումից անմիջապես առաջ,
- աշխատողների պարտադիր բժշկական զննումների ենթարկում և անձնական սանիտարական (բժշկական) գրքույկների առկայություն աշխատատեղում,
- անձնակազմի անձնական հիգիենայի կանոնների պահպանումն ապահովելու համար անհրաժեշտ պայմանների (լվացարան՝ խառնիչի միջոցով միացված տաք և սառը ջուր) առկայություն,
- սանհանգույցի առկայություն:

Վերը նշված սննդատեսակների պատրաստման համար թույլատրվում է օգտագործել միայն փայտածուխ կամ այդ նպատակի համար նախատեսված էլեկտրական սարքեր: Տաղավարներում, կրպակներում տեղակայված և հանրային սննդի ոչ ստացիոնար (ավտոկրպակներ, վագոններ և այլն) կազմակերպություններում չի թույլատրվում սննդատեսակների արտադրությունն ու խոհարարական արտադրանքի պատրաստումը:

Նկար 3. Մննդամթերքի պատշաճ պահպանման պայմանները սառնարաններում



Ապրանքների պատշաճ պահպանում առանձին տարաներում

Չի թույլատրվում սննդամթերքը պահել պոլիեթիլենային տոպրակներում

Նկար 3.

2.3

Սննդամթերքի անվտանգության մասին ընդհանուր դրույթներ

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Սույն օրենքի կարգավորման առարկանՍույն օրենքը կարգավորում է սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների ներմուծման, արտահանման, արտադրության, մշակման, վերամշակման, փաթեթավորման, մակնշման, փոխադրման, պահման, իրացման, ինչպես նաև առևտրի և հանրային սննդի ոլորտում ծառայությունների մատուցման փուլերում անվտանգության հետ առնչվող հարաբերությունները:

Հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են

- սննդամթերք
- պարենային հումք
- Սննդի շղթա (արտադրության և շրջանառության փուլեր)
- նախնական (առաջնային) արտադրություն
- մշակում
- սննդամթերքի անվտանգություն

Սննդամթերք է համարվում ցանկացած պարենային հումք և արտադրանք, որոնք նախատեսված են մարդու սննդում օգտագործելու համար: Ներառյալ՝ խմիչքները, մաստակը և ջուրը, որն ավելացվում է սննդամթեր-քին վերջինիս պատրաստման, մշակման կամ վերամշակման ժամանակ:

Պարենային հումք է համրվում սննդամթերքի արտադրության համար օգտագործվող բուսական, կենդանական, հանքային, սինթետիկ կամ կենսատեխնոլոգիական ծագում ունեցող մթերք, հումք, նյութ, արտադրանք և ջուր:



Սննդի շղթա կամ արտադրության և շրջանառության փուլեր, որոնք իրենցից ենթադրում են՝ սննդամթերքի և դրա բաղադրիչների **արտադրության, մշակման, բաշխման, պահման, փոխադրման, ներմուծման, արտահանման և իրացման** փուլերը՝ նախնական արտադրությունից մինչև սպառում: Սննդի շղթան ընդգրկում է նաև սննդամթերքի կամ պարենային հումքի հետ շփման մեջ մտնելու համար նախատեսված նյութերը, սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումները, ինչպես նաև առևտրի և հանրային սննդի ծառայությունների ոլորտը: Նախնական (առաջնային) արտադրություն՝ պարենային հումքի արտադրություն, բուսաբուծության արտադրանքը, ներառյալ՝ բերքահավաքը, գյուղատնտեսական կենդանիների արտադրությունը՝ մինչև սպանդը, կիթը, ինչպես նաև որսորդությունը, ձկնորսությունը և վայրի բույսերի բերքահավաքը. մշակում՝ պարենային հումքի մաքրում, տեսակավորում կամ դասակարգում, չորացում, պաղեցում, կտրտում, փաթեթավորում կամ այլ գործողություններ, որոնց միջոցով արտադրանքը նախապատրաստվում է սննդամթերքի վերամշակման կամ պատրաստման մեջ օգտագործելու համար: Սննդամթերքի անվտանգություն՝ երաշխիք, որ սննդամթերքն ըստ նշանակության օգտագործելու դեպքում վնասակար ազդեցություն չի ունենա մարդու կյանքի և առողջության վրա, պայմանավորված է Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով՝ տվյալ սննդամթերքի և սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների համար սահմանված տեխնիկական կանոնակարգերին, սանիտարական կանոններին, անասնաբուժասանիտարական, բուսասանիտարական և հիգիենիկ նորմերի պահանջներին դրա համապատասխանությամբ:

Սննդամթերքի անվտանգությանը սպառնացող վտանգ (վտանգի աղբյուր)՝ սննդի մեջ առկա կենսաբանական, քիմիական կամ ֆիզիկական նյութ և սննդամթերքի վիճակ, որը կարող է բացասաբար անդրադառնալ մարդու առողջության վրա:
Վտանգավոր սննդամթերք է համարվում այն սննդամթերքը, որը պիտանի չէ մարդու կողմից սպառման համար և ըստ իր նշանակության պահվելու, պատրաստվելու, օգտագործվելու, մատուցվելու և սպառվելու դեպքում

վնասակար է մարդու կյանքի և առողջության համար: Աղտոտիչները սննդամթերքի բաղադրության մեջ չմտնող քիմիական, կենսաբանական, հանքային կամ օրգանական ծագման ցանկացած նյութ և (կամ) տարր, որը սննդամթերքի հետ կապված գործառնությունների ընթացքում կամ շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով հայտնվել է սննդամթերքում կամ սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումներում և կարող է վնաս պատճառել մարդու կյանքին և առողջությանը: Մնացորդային նյութերը սննդամթերքի մեջ կամ սննդամթերքի վրա քիմիական և կենսաբանական ծագման ցանկացած նյութերի և տարերի, ինչպես նաև դրանց նյութափոխանակման և քայքայման (տրոհման) արդյունքում ստացվող նյութերի և տարերի մնացորդային քանակներ, որոնց որոշակի չափերով օգտագործումը թույլատրված է սննդամթերքի արտադրության առանձին փուլերում, մասնավորապես նախնական արտադրության փուլում: Սննդային հավելումները սովորաբար որպես սննդամթերք չօգտագործվող և սննդամթերքի բաղադրամաս չհամարվող նյութեր, անկախ դրանց սննդային արժեքից, որոնք տեխնոլոգիական մշակման կամ վերամշակման ժամանակ ավելացվում են սննդամթերքին՝ ցանկալի համազգայական և (կամ) այլ հատկանիշներ ստանալու համար:

Առաջադրանքներ.

Առաջադրանք 2.1
Այցելեք որևէ հանրային սննդի կազմակերպություն և ստուգեք թե՝ նրա սննդամթերքի պայմանները համապատասխանում են այն նորմերին որոնք նշված են դասում:

Առաջադրանք 2.2
Ընտրել մեկ տեսակի սննդամթերք(օր.՝ միս) ,ձեռք բերել այն և շուկայից և սուպերմարկետից: Հետազոտել մթերքների պիտանիությունը և նշել աղյուսակում դրանց տարբերությունները:

Առաջադրանք 2.3
Այցելեք որևէ շուկա և ստուգեք թե՞ արդյոք հացամթերքի և մսամթերքի փոխադրամիջցները պահպանում են սանիտարական կանոնները, ունե՞ն արդյոք սննդամթերքի հետ շփման համար նախատեսված տարաներ:

Ինքնաստուգման հարցեր:

1. Ո՞րոնք են պահեստային տարածքների համապատասխան տարողունակության չափանիշները:
2. Ի՞նչ պայմաններում դեպքում հանրային սննդի վայրերում միսը չի ընդունվում:
3. Ո՞ր պայմաններում չի ընդունվում պահածոացված սննդամթերքը:
4. Սննդամթերք չեն համարվում՝
5. Ի՞նչ է սննդի շղթա:
6. Ո՞րոնք են սննդային աղտոտիչները:
7. Ո՞րոնք են սննդային հավելումները:

02

Խոհանոցային տարածքին ներկայացվող պահանջները

ԹԵՄԱ 3 .....

Խոհանոցային տարածքին ներկայացվող պահանջները տեխնիկային

Այս դասում դուք կծանոթանաք՝

- Խոհանոցի ներքին հարդարման պարամետրերը
- Խոհանոցային տարածքներին ներկայացվող պահանջները
- Հյուրանոցային տնտեսության օբյեկտների ջրամատակարարմանը ԵՎ ջրահեռացմանը ներկայացվող պահանջներ

Տարբեր տեսակի մթերքի համա պետք է օգտագործվեն խոհարարական տարբեր տախտակներ: Տախտակների վրա պետք է նշումների արվեն:

Տախտակների վրա նշումներ չկան: Կարող է շփոթմունք առաջանալ թե որ տախտակն օգտագործել



Դանակների վրա նույնպես պետք է նշաններ դրվեն



Դանակների վրա նշան չկա

Արտադրական տարածքների (խոհանոցի) դասավորությունն ու ձևավորումը պետք է ապահովի գործընթացների հստակությունը: Պետք է բացառվի հում և պատրաստի մթերքի, կեղտոտ և մաքուր սպասքի, այցելուների և անձնակազմի նույն տեղում հայտնվելու հնարավորությունը:

- Կա մթերքի ստացման (բեռնման/բեռների դատարկման) համար նախատեսված առանձին մուտք:
- Խմելու ջուրը մատակարարվում է առանց ընդհատումների:
- Տաք և սառը ջրով ծորակները միացված են հաստատության բոլոր լվացարաններին:
- Ծխաքարշ համակարգերը սարքին վիճակում են: Կանոնավոր կերպով լվացվում և մաքրվում են:
- Տարածքն ապահովված է բնական և արհեստական լուսավորությամբ: Արհեստական լուսավորության ստանդարտը կազմում է 200 լյուքս: (Լուսավորության մակարդակը կարող եք ստուգել՝ օգտագործելով հեռախոսում ներբեռնված հավելվածը):

1. Մեծ, լայն սակայն ոչ խորը թաս կամ ուղղանկյուն ման՝ ամուր փակվող կափարիչով, որը մեկ քառորդով, մեկ երրորդով կամ կիսով չափ լցված է եռացող ջրով: Բեն մարիի վրա դրվում են ապուրներով և պատրաստի սոուսներով ամաններ և այլ ուտեստներ, որոնք պետք է տաք պահել, բայց մատուցելուց առաջ հնարավոր չէ տաքացնել:

2. Օրգանոլեպտիկ վերլուծություն. մթերքի ուսումնասիրում՝ օգտագործելով զգայարանները՝ տեսողությունը, հոտառությունը, համը, շոշափելիքը:

- Տարածքի ներսում ջերմաստիճանային պայմանները (ջերմաստիճան, հարաբերական խոնավություն) վերահսկվում են տարվա եղանակին համապատասխան:
- Հաստատության բոլոր սենյակներում ժամանակին, և ըստ անհրաժեշտության իրականացվում է խոնավ մաքրում՝ լվացող և ախտահանող միջոցների օգտագործմամբ: Կան խոնավ մաքրման կարգը սահմանող կանոններ:
- Թափոնների համար օգտագործվում են կափարիչով տարբեր տարաներ: Թափոնների հեռացումը տարաներից իրականացվում է, երբ դրանք լցվում են 2/3-ով: Տարայի ձևը թույլ է տալիս այն լվանալ, մաքրել և ախտահանել: Տարաները պաշտպանված են կենդանիներից: Յուրաքանչյուր հերթափոխից հետո տարաները ախտահանվում են հատուկ միջոցներով:

Խոհանոցի ներքին հարդարման պարամետրերը

Հատակից մինչև 1,8 մետր բարձրության պատերի և միջնապատերի մակերեսը պատրաստված է ջրադիմացկուն, լվացվող և ոչ թունավոր նյութերից: Այս մակերեսները պետք է հասանելի լինեն լվացման և ախտահանման համար:

Հատակը պետք է պատրաստված լինի ջրադիմացկուն, լվացվող ոչ թունավոր նյութերից: Հատակը պետք է լինի հեշտ լվացվող և ախտահանվող:

Առաստաղը կամ շահագործվող հատվածների վերևում գտնվող կոնստրուկցիաները չպետք է լինեն խարխուլ, փշրվեն և չպետք է նպաստեն խոնավության կոնդենսացմանը: Դրանց վրա չպետք է լինեն աղտոտվածութ-յան, փոշու և բորբոսի հետքեր:

Խոհանոցային տարածքներին ներկայացվող պահանջները

- Անհրաժեշտ սառնարանային սարքավորումները լավ վիճակում են:
- Մենդի հետ շփվող սարքերը, արտադրական սեղանները, պարագաները, տարաներն ու սպասքը պատրաստված են ոչ թունավոր, չժանգոտող նյութերից: Այս նյութերը վնասակար չեն մարդու առողջության համար:
- Գոյություն ունի խոհարարական տախտակների հավաքածու, որտեղ ներառված է յուրաքանչյուր տեսակի առնվազն երկու տախտակ: Տախտակների վրա դրվում է նշան՝ ըստ մշակվող մթերքի և դրանք պահվում են հատուկ հատկացված տեղում՝ օգտագործվելով նախատեսված նպատակով: Սարքավորումների համար օգտագործվում են գունային նշաններ:
- Կա երկու կամ երեք տեղանոց լվացարան՝ սպասքը լվանալու համար: Տրվել են սպասքի լվացման կանոնների պահպանման վերաբերյալ ցուցումներ: Սպասքը չորացնելու համար կան մետաղական դարակաշարեր:

Խոհանոցի ներքին հարդարման պարամետրերը

Մթերքների տարաների վրա փակցվում են պիտակներ, որոնց վրա նշված է արտադրմանամսաթիվը և պահպանման ժամկետը

Ձեռնարկության խոհանոցը:

Երկու տեղանոց լվացարան՝ սպասքի համար

Խոհանոցում պահվող սպասքը

Հյուրանոցային տնտեսության օբյեկտների ջրամատակարարմանը և ջրահեռացմանը ներկայացվող պահանջներ

- Հյուրանոցային տնտեսության օբյեկտների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցվածքը պետք է համապատասխանի N 2.04.01-85 «Շենքերի ներքին ջրամատակարարում և կոյուղի», N 2.04.02-84 «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառույցներ» և N 2.04.03-85 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» ՍՆԻՊ-ների պահանջներին:
- Հյուրանոցային տնտեսության օբյեկտները պետք է ապահովված լինեն շուրջօրյա տաք և սառը ջրով, կենտրոնացված ջրամատակարարմամբ:
- Հյուրանոցային տնտեսության օբյեկտների խմելու-տնտեսական ջրի (այդ թվում՝ պահուստային տարողությունների) ջրի որակը պետք է համապատասխանի «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա2-1 սանիտարական նորմերի և կանոնների պահանջներին: Ջրի պահուստային տարողությունների լվացման, ախտահանման աշխատանքները պետք է իրականացվեն ՊՀՀ տեսչության ներկայացուցչի ներկայությամբ՝ համաձայն N 3.05.04-85 «Ջրամատակարարման և կոյուղու արտաքին ցանցեր և կառույցներ» ՍՆԻՊ-ի 7.43 կետի :
- Կենտրոնացված ջրահեռացման համակարգի բացակայության դեպքում հյուրանոցային տնտեսության օբյեկտների կեղտաջրերի հեռացումը պետք է ապահովի N 2.04.03-85 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» ՍՆԻՊ-ի պահանջները:

Առաջադրանքներ.

Առաջադրանք 3.1

Այցելեք որևէ հանրային սննդի կազմակերպություն և ստուգեք թե՝ նրա խոհանոցային տարածքին ներկայացվող պահանջները տեխնիկային համապատասխանում են այս դասում սովորած նորմերին:

Առաջադրանքներ.

Առաջադրանք 3.2
Նայեք նկարներին և նշեք թե՞ որ, խոհանոցային տարածքներին ներկայացվող պահանջները չեն համապատասխանում սանիտարական նորմերին:

Ինքնաստուգման հարցեր:

1. Ի՞նչ ջերմաստիճանային պայմաններ պետք է պահպանվի խոհանոցում:
2. Ի՞նչ նյութերից պետք է պատրաստված լինի խոհանոցի հատակը և պատերը:
3. Ո՞րոնք են խոհանոցային տարածքներին ներկայցվող պահանջները:
4. Ի՞նչ է օրգանոլեպտիկ վերլուծությունը:
5. Նշեք հյուրանոցային տնտեսության օբյեկտների ջրամատակարարմանը և ջրահեռացմանը ներկայացվող պահանջները:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 2.

Սառնարանային սարքավորումների ջերմաստիճանային ռեժիմի մատյան

Վարի անվա նումը	Սառեցնող սարքի անվանումը	Ջերմաստիճան, °C																													
		Ամիս / օր Նոյեմբեր																													
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31
Խոհանոց	№ 1	5	5	5	6	6	5	5	6	5	6	5																			
Խոհանոց	№ 2	4	4	4	5	4	5	5	5	4	4	5																			

Հավելված 4

Մատյան
Ախտահանման, միջատազերծման և վարակազերծման աշխատանքների գրանցում

«Ռադուգա» հյուրատուն
Ընկերության անվանումը
Բիշքեկ

Մեկնարկ «_0_1_» _ նոյեմբեր 20_1_9_
Ավարտ« »
Պատասխանատու Ռ.Վ. Զայնուլինա

N	Վայրը/ առարկան	Պաշտոնը	Աշխատանքների իրականացման մասթիվը		Օգտագործվող ախտահանիչների անվանումը	Աշխատանքի ծավալը՝ մ 2	Հաջորդ մշակման օրը	Պատասխանատու անձ/ստորագրություն	Նշումներ
			Շարունակական, կանխարգելիչ						
			Պլանավորված	Փաստացի իրականացված					
1	Պահեստ	խոհարար	02.11.19	02.11.19	Քլոր պիրի ֆոս.	25	02.11.20	Ալիևա	
2	Զուգարան	Հավաքարար	08.11.19	08.11.19	Քլոր 5%	6	15.11.19	Կուլմատով	
3	Սարքեր	խոհարար	10.11.19	10.11.19	Կլինդեզին	30	17.11.19	Ալիևա	
4	Զուգարան	Հավաքարար	15.11.19	21.11.19	Քլոր 5%	6	28.11.19	Կուլմատով	

Օգտակար գրականություն և առցանց հղումներ

- Managing Food Safety and Sanitation is a sanitation guide for the food service industry.
- HACCP & Sanitation in Restaurants and Food Service Operations: A Practical Guide Based on the USDA Food Code
- https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=3271
- https://www.arlis.am/documentview.aspx?docID=74494
- Hygiene in Food Processing
- https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=32711
- https://www.arlis.am/documentview.aspx?docid=10762
- https://snund.am/hy

Safe Guesthouse Guidelines for managers and staff

- https://www.arlis.am/documentview.aspx?docID=137083
- https://www.foodsafely.org/hy/

03

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ներածություն

Արկածային զբոսաշրջությունն արագ աճող և խոստումնալից զարգացման հնարավորություն ունեցող ոլորտ է, որը ներգրավում է մեծ թվով հաճախորդների, աջակցում տնտեսության զարգացմանը և ապահովում կայուն զբաղվածություն: Արկածային միջոցառումներն, ընդ որում, տարվա բոլոր եղանակներին, կարող են խիստ տարբեր լինել՝ մասնակցություն հնագիտական արշավախմբին, թռչունների կամ կենդանիների դիտում, արշավներ, ժայռամագլցումներ, այցելություն դժվարամատչելի պատմամշակութային կամ բնական հուշարձաններ և այլն: Միանգամայն ուշագրավ են նաև զբոսաշրջության այնպիսի եղանակները, որոնք ուղղված են մանկական, պատանեկան շրջանակներին, աշխատանքային անձնակազմերի մերձեցման միջոցառումներին, որոնք կարող են դրսևորվել աննախադեպ և ստեղծարար եղանակներով: Այս առումով, Հայաստանի բնական և պատմամշակութային հարստություններն ապահովում են առավելագույն բազմազանություն և հետաքրքրությունների լայն շրջանակ:

Արկածային ճանապարհորդների ընտրության վրա ազդում են բազմաթիվ գործոններ, ինչպիսիք են բնական գեղեցկությունը, զբաղմունքի բացառիկությունը, դժվարամատչելիությունը կամ էքստրեմալ բնույթը և այլն: Որոշումների կայացման գործոնների թվում անվտանգությունը կենսական նշանակություն ունի: Հատկապես միջազգային զբոսաշրջիկներն ու ճանապարհորդներն ավելի ու ավելի շատ են գիտակցում այն ռիսկերը, որոնք կապված են այցելության երկրում անվտանգության և ռիսկերի կառավարման հաստատված կարգի հետ: Կարևորվում են այնպիսի չափանիշներ, ինչպես վնասվածքների դեպքում համապատասխան բժշկական ծառայություններ մատուցելու միջոցները և դրանց հասանելիությունը, անվտանգ տրանսպորտը, արտակարգ ընթացակարգերը և այլն:

Ներկա ուղեցույցը նպատակ ունի ընթերցողին ներկայացնել զբոսաշրջության ոլորտին առնչվող արտակարգ իրավիճակների և ռիսկերի կառավարման շրջանակի ուրվագիծը, հնարավորություն տալով գիտակից և պատասխանատու կերպով կազմակերպել սեփական և այլոց հանգիստն ու զբաղմունքը:

ԹԵՄԱ 1

Ինչու՞ է անհրաժեշտ կառավարել ռիսկերը

Թեմայի նպատակն է՝
ծանոթանալ զբոսաշրջային ոլորտում հնարավոր վտանգների և ռիսկերի հետ, հասկանալ ոլորտի իրավական կարգավորումների շրջանակը և զանազանել հիմնական հասկացությունները:

Առանցքային սահմանումները և հասկացությունները. աղետ, ռիսկ, վտանգ, արտակարգ դեպք, պատահար, արտակարգ իրավիճակ, դիմակայունություն, ռիսկի կառավարում, ռիսկի նվազեցում

1.1

Արկածային զբոսաշրջությունը և ռիսկերը

Այս կամ այն չափով ռիսկն առկա է բոլոր արկածների մեջ, սակայն ներկա ուղեցույցի համատեքստում մենք անդրադառնալու ենք այն ռիսկերին, որոնք վերաբերում են զբոսաշրջային ծառայությունների մատուցմանը, հատկապես մարդկանց առողջության վրա հնարավոր ազդեցության տեսանկյունից:

> Ռիսկը կարելի է պարզ կերպով նկարագրել որպես **հնարավոր վտանգի ժամանակ մարդու առողջությանը վնաս կամ անբարենպաստ հետևանքներ հասցնելու հավանականություն**:

Այնուամենայնիվ, ռիսկի գնահատումը կարող է չափազանց բարդ լինել՝ կախված մարդկանց և հանգամանքների ընկալումից: Սա սերտորեն կապված է զանազան գործոնների հետ, ինչպիսիք են շրջակա միջավայրի պայմանները, էքսկուրսավարի հմտությունները, այցելուների հմտությունները, ենթակառուցվածքները, բժշկական ծառայությունները, սարքավորումների վիճակը և այլն: Օրինակ՝ զույգով պարապլանով թռիչքը կարող է հանգեցնել մահվան՝ վատ եղանակային պայմաններում անփորձ հրահանգիչ ունենալու պարագայում, չստուգված անվտանգության գոտին կարող է հեշտությամբ վնասվածքներ առաջացնել, կամ փողոցում սննդի համտեսումը կարող է ավարտվել սննդային թունավորմամբ:

Ռիսկի մասին խոսելիս պետք է հաշվի առնել, որ այն զբոսաշրջությանն ի սկզբանե բնորոշ է. ռիսկը գոյություն ունի արկածային բացօթյա գործունեության մեջ և նման գործունեության անբաժանելի մասն է: Շատ զբոսաշրջիկներ նախընտրում արկածային գործունեությունը, քանի որ առկա է ռիսկի գործոնը: Միաժամանակ զբոսաշրջային ծառայություն մատուցողները կամ զբոսավարները ծառայություններ են տրամադրում՝ գիտակցելով, որ կա վտանգ:

Այնուամենայնիվ, մենք տարբերվում ենք միմյանցից որոշ խնդիրների վտանգավոր կամ ռիսկային լինելու վերաբերյալ մեր ընկալումներով: Այնպիսի գործոններ, ինչպիսիք են մշակութային սովորույթները, երկրի համատեքստը և հանգամանքները, կարող են հեշտությամբ ազդել մեր վերաբերմունքի կամ ընկալման վրա: Օրինակ, որոշ մարդկանց համար կարող է միանգամայն նորմալ համարվել ժայռի եզրին ինքնանկար անելը՝ անցնելով նախազգուշացնող նշանի կողքով, կամ մեքենայի մեջ առանց ամրագոտու երթևեկելը կամ հողաթափերով արշավի գնալը:

Քանի որ այս ոլորտը հյուրընկալում է բազմաթիվ այցելուների ամբողջ աշխարհից, հարկ է հաշվի առնել ընկալումների նման տարբերությունները և կիրառել ընդունելի այնպիսի չափանիշներ, որոնք ապահովում են անվտանգության հիմքերը:

Անվտանգության չափանիշները կարող են տարբեր լինել՝ կախված երկրի օրենսդրությունից կամ միջազգային պահանջներից: Այնուամենայնիվ, բոլոր զբոսաշրջիկներն ակնկալում են անվտանգություն: Բացի այդ, անվտանգությունը նաև կարևոր չափանիշ է միջազգային տուրոպերատորների կողմից գործընկերների ընտրության ժամանակ:

> Ուստի, «ինչու» հարցի պատասխանը բավականին պարզ է՝ քանի որ

- մեր հաճախորդներն ակնկալում են անվտանգ ծառայություններ
- միջազգային շուկան ակնկալում է ռիսկերի կառավարում
- ցանկացած դժբախտ պատահար կարող է լուրջ վնաս հասցնել մեր բիզնեսին և
- ամենակարևորն այն է, որ մենք պատասխանատու ենք մեր հաճախորդների անվտանգության համար:

Սակայն ինպչ՞ես անդրադառնալ ռիսկերի կառավարմանը և անվտանգությանը համակարգված ձևով:

Զբոսաշրջության մեջ ռիսկերի կառավարման և անվտանգության խնդիրները կայանում են զբոսաշրջիկների և անձնակազմի անվտանգության ապահովման մեջ՝ առաջնորդության միջոցով գործառնական ռիսկերի արդյունավետ կառավարման միջոցով, որն իրականացվում է հստակ սահմանված պարտականություններով և դերերով, ընթացակարգերով և միջոցառումներով (օր. Ստանդարտ գործողությունների ընթացակարգեր, միջադեպերի հաշվետվողականություն և այլն), վարժանքների միջոցով անձնակազմի կարողությունների բարձրացման ճանապարհով, ինչպես նաև նպատակների և թիրախների ուղղությամբ փորձառությունների և արդյունքների մշտադիտարկմամբ:

> Այն պարունակում է առնվազն չորս տարրեր՝



Ռիսկերը բացահայտելու համար պետք է իրականացնել ռիսկերի գնահատում (որն առավել մանրամասն կբացատրվի Գլուխ 2-ում): Կառավարման ամբողջ համակարգը պահանջում է փաստաթղթերի փաթեթներ, և անհրաժեշտ են ուղեցույցներ, հրահանգներ, միջոցառումները վերահսկելու ցուցակներ, հմտություններ և սարքավորումներ: Այսպիսով, ստանդարտ գործողությունների ընթացակարգերն օգնում են ունենալ միօրինակեցված գործընթացներ:

Չնայած առավելագույն ջանքերին, արտակարգ իրավիճակները, միևնույն է, կարող են տեղի ունենալ: Վնասը նվազեցնելու համար անհրաժեշտ է ունենալ արտակարգ իրավիճակների պլաններ և գրանցել պատահարները՝ բուն պատճառները հասկանալու և անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու համար:

Վերջապես, անհրաժեշտ է շարունակաբար իրականացնել համակարգի մշտադիտարկում և վերանայում՝ ցանկալի արդյունքին հասնելու համար:

> Ռիսկերի կառավարման և անվտանգության համակարգի առկայությունը կարող է բազմաթիվ առավելությունների հանգեցնել, ինչպիսիք են.

- Նվազագույնի հասցնել դժբախտ պատահարների թիվը
- Առավելագույնի հասցնել հաճախորդների բավարարվածության աստիճանը
- Ձևավորել մասնագիտական կերպար
- Նվազեցնել դատական վեճերը
- Կրճատել փոխհատուցման վճարները
- Ծախսերի կրճատում
- Խաղաղ քուն, առանց բարոյական մեղքի զգացումի

Մյուս կողմից, սակայն, ռիսկերի կառավարման և անվտանգության համակարգի ստեղծումը կարող է բարդ գործընթաց լինել.

- Դա կպահանջի ժամանակ և ռեսուրսներ,
- Կարող է դժվար լինել համոզել ձեր աշխատակիցներին և մատակարարներին՝ **«երբեք ինձ հետ նման բան չի պատահել և երբեք չի պատահի»** ընկալման պատճառով:
- Առավել դժվար կլինի իրազեկության բարձրացումը, հատկապես, եթե աշխատում եք ցածր մակարդակի անվտանգության գիտակցման միջավայրում:
- Գուցե դուք չգիտեք, թե ինչպես պետք է կիրառել ռիսկի կառավարման և անվտանգության համակարգը:
- Հնարավոր է, որ դուք գործում եք մի երկրում, որտեղ շատ քիչ են կամ ընդհանրապես չկան ռիսկեր և անվտանգության պահանջներ կամ դրանք գրեթե չեն պարտադրվում:
- Վերջապես, հավանական է, որ դուք համապատասխան պատրաստություն անցած անձնակազմ չունեք նման համակարգ ստեղծելու համար:

Այնուամենայնիվ, գիտակցելով պատահարի դեպքում հնարավոր հետևանքները և արդյունքները, դուք կարող եք հաղթահարել այս խնդիրները՝ ճիշտ մեթոդներ կիրառելով:

> Նախ, եկեք սկսենք ամենադժվարից. **փոխել ընկալումն այն մասին, որ ինձ հետ դա երբեք տեղի չի ունեցել և երբեք տեղի չի ունենա**:

Որոշ ռիսկեր առաջանում են մարդկանց մտքերի, գործողությունների և որոշումների արդյունքում: Ընտրությունը ռիսկային քայլի կամ ռիսկային վարքագծի առումով կարող է տարբեր լինել տարբեր մարդկանց մոտ, անգամ տարբերվել միևնույն մարդու տարբեր պահվածքների պարագայում: Որոշ մարդիկ կարող են ահռելի ռիսկի գնալ, մինչդեռ մյուսները կարող են խուսափել դրանից: Ռիսկի ընկալումը կարևոր եզրույթ է այս համատեքստում:
Միաժամանակ, հարկ է նշել, որ կան բազմաթիվ ռիսկեր, որոնք կարող են մեզ հետ տեղի չունենալ, սակայն մեր ընտրությունը մեզ կարող է բերել ռիսկային իրավիճակի մեջ հայտվելուն, որի հաղթահարումը սեփական ուժերով կարող է հնարավոր չլինել: Օրինակ՝ ձնահյուսը, որը կարող է տեղի ունենալ ցանկացած ժամանակ, հատկապես հաշվի առնելով կլիմայական փոփոխությունների ահագնացող տեմպերը, կարող է մեզ համար ռիսկային չլինել, քանի դեռ մենք չենք որոշել բարձրանալ ձյունապատ գագաթը:

Տարբեր մշակույթներ ռիսկի ընկալմանը տարբեր վերաբերմունք ունեն, սակայն ժողովրդական իմաստությունն ու ավանդույթները կարող են ինչպես քաջալերել ռիսկի ընտրությունը, այնպես էլ նախազգուշացնել և զսպել անմտածված ռիսկը: Հայտնի են բազում ասույթներ, որոնք բխում են զանազան իրավիճակների և դրանց վերաբերյալ ժողովրդական ընկալումներից.

- *Գայլից վախեցողն անտառ չի գնում (ռուսական ժողովրդական)*
- *Ով ռիսկի չի գնում շամպայն չի խմում (ռուսական ժողովրդական), կամ ով ռիսկի չի գնում, ոչինչ չի ունենում (ֆրանսիական ժողովրդական, 15-րդ դ.)*

Волков бояться – в лес не ходить.
Кто не рискует тот не пьёт шампанское.
Qui ne risque rien, n'a rien.

Պետք է ասել նաև, որ բերված ասույթները հուշում են առավել կարևոր արդյունքի հասնելու համար քաջություն դրսևորելու գաղափարը: Ի հակադրություն ռիսկային ընտրությունը «քաջալերող» հիշյալ ասույթների, որոնք զգալիորեն արմատացած են ժամանակակից մտածողության մեջ, անթիվ են անմիտ ռիսկի գնալու նախազգուշացման «հորդորները».

- *Հիմար գլխի պատճառով ոտքերն են տուժում (ռուսական ժողովրդական)*
- *Զգուշավորին (բառացի՝ պահպանվածին) Աստված է պահպանում (ռուսական ժողովրդական):*

Дурная голова ногам покоя не дает.
Бережёного Бог бережет.
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64659

Այսպիսով, զբոսաշրջությունը մի ոլորտ է, որտեղ անքննելիորեն առկա է ռիսկը, սակայն դրա գիտակցումը, գնահատումը, նվազեցումը և կանխարգելումը առաջնահերթ են և կենսականորեն կարևոր:

1.2

Զբոսաշրջության անվտանգությունը իրավական տեսանկյունից

Յուրաքանչյուր երկիր ունի իրավական կարգավորումների իր ուրույն շրջանակը: Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության կարգավորումներն իրականացվում են համաձայն **Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենքի**, որտեղ զբոսաշրջիկի անվտանգությունը սահմանվում է առանձին դրույթով:

> **Մասնավորապես, համաձայն հիշյալ օրենքի.**

- **«Զբոսաշրջային գործունեության սուբյեկտները մշակում են միջոցառումներ՝ իրենց կազմակերպած զբոսաշրջային ճանապարհորդություններին, արշավներին, էքսկուրսիաներին և այլ միջոցառումներին մասնակցող զբոսաշրջիկների անվտանգության ապահովման, վնասվածքների և դժբախտ պատահարների կանխարգելման համար»:**
- **Զբոսաշրջային ծառայություն մատուցողները պարտավորվում են «... պետական համապատասխան մարմիններին անհապաղ տեղյակ պահել զբոսաշրջիկների հետ տեղի ունեցած արտակարգ պատահարների մասին»:**

Հիշյալ օրենքը նշում է նաև, որ զբոսաշրջիկը պարտավոր է

«...պահպանել հրդեհային անվտանգության կանոնները և կատարել ժամանման երկրի տարածքում գործող օրենքների պահանջները»:

Այսպիսով, զբոսաշրջային ոլորտում անվտանգության ապահովումն ունի առանձնակի կարևորություն, որ պահանջում է որոշակի իմացություն՝ անվտանգությանը սպառնացող վտանգները նվազագույնի հասցնելու համար: Այս ասպարեզում վերջինները կարող են խիստ բազմազան լինել՝ բնության մեջ հանդիպող թունավոր միջատներից, բույսերից, սողուններից ու կենդանիներից սկսած, մինչև տեխնիկական միջոցների խնդիրներ և այլն:

Ներկա ձեռնարկն անդրադառնում է բնական աղետներին և աղետների ռիսկի կառավարմանը զբոսաշրջության տեսանկյունից:

1.3

Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության իրավական հիմքերը

Վերը խոսվեց ռիսկերի տարաբնույթ լինելու մասին, որոնց թվում աղետների ռիսկը առանձնահատուկ կարգավորումների առարկա է: Այդ ուղղությամբ գոյություն ունեն համաշխարհային լայնածավալ շրջանակներ՝ Միացյալ ազգերի կազմակերպության, գլոբալ և տարածաշրջանային տարբեր մեխանիզմների ներքո, գործում են կլիմայի փոփոխության հարմարվողականության, աղետների ռիսկի նվազեցման, շրջակա միջավայրի պահպանության բազմազան կազմակերպություններ և առաքելություններ ինչպես համաշխարհային, տարածաշրջանային և պետական, այնպես էլ տեղական, հասարակական և մասնավոր մակարդակներում: Այդ թվում առանձնակի կարևորություն ունի աղտների ռիսկի նվազեցման ՄԱԿ-ի շրջանակը, որն ուղղված է համաշխարհային մակարդակից մինչև յուրաքանչյուր քաղաքացու և անհատի անվտանգ և ապահով կենսագործունեության և կայուն զարգացման ապահովմանը:

Մեր երկրում աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, միջազգային պայմանագրերը, Հայաստանի Հանրապետության օրենքները և իրավական ակտերը:

Արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ արտակարգ դրություն հայտարարելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով:

Արտակարգ իրավիճակի կամ աղետի գոտի մարդկանց և տրանսպորտային միջոցների մուտքի սահմանափակումն իրականացվում է «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Աղետների վերաբերյալ առավել հստակ պատկերացում ունենալու համար հարկ է ծանոթանալ մի շարք հիմնական եզրույթների հետ.

- **աղետը** համայնքի կամ հասարակության բնականոն կենսագործունեության խաթարումն է, որի հետևանքների վերացումը և հետաղետային վերականգնումը գերազանցում են համայնքի կամ հասարակության սեփական ուժերով հաղթահարելու կարողությունը.
- **աղետի ռիսկը** աղետ առաջացնող վտանգի հավանականութ-յան համադրումն է այդ աղետին ենթակա համակարգի խոցելիության նկատմամբ.

Sendai Framework for Disaster Risk Reduction 2015-2030,
https://www.undrr.org/publication/sendai-framework-disaster-risk-reduction-2015-2030

- **աղետների ռիսկի գնահատումը** վերլուծական գործընթաց է, երբ որոշվում է աղետների ռիսկի բնույթը ու հավանական չափը՝ որակական և / կամ քանակական արտահայտությամբ.

- **աղետների ռիսկի կառավարումը** գործընթացների համակարգ է, ուղղված աղետների ռիսկի նվազեցմանը, պատրաստվածության բարձրացմանը, արտակարգ իրավիճակներին արձագանքմանն ու հետաղետային վերականգնմանը.

- **աղետների ռիսկի նվազեցումը** վտանգի գնահատման, կանխ-ման, կանխարգելման, բնակչության, բնակավայրերի, ենթակա-ռուցվածքների ու շրջակա միջավայրի տարրերի խոցելիության նվազեցմանը և կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների համալիրն է.

- **արտակարգ դեպք, պատահար՝** իրադրություն, որի հետևանքով տեղի է ունեցել համայնքի կամ կազմակերպության բնականոն գործընթացի խախտում, որի հետևանքների վերացման համար առաջացել է փրկարարական և այլ մասնագիտացված ծառայութ-յունների անհրաժեշտություն.

- **արտակարգ իրավիճակն** իրադրություն է, որն առաջացել է որոշակի տարածքում կամ օբյեկտում բնական, կլիմայական, տեխնոլո-գիական, կենսաբանական (համաճարակ, անասնահամաճարակ, բույսերի վարակիչ հիվանդություններ) վտանգավոր երևույթների, զենքի տեսակների կիրառման հետևանքով և հանգեցրել է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջության վատթարացման, շրջակա միջավայրի վնասման, նյութական կորուստների և կենսագործունեության բնականոն պայմանների խախտման.

- **դիմակայունությունը** վտանգների ազդեցությանը ժամանակին և արդյունավետ դիմագրավելու, ներգործություններից առաջացած պայմաններին հարմարվելու և արագ վերականգնվելու կարողութ-յունն է. այն հատուկ է պետությանը, համայնքին և հասարակությանն ընդհանուր առմամբ.

- **վտանգ՝** երևույթ, գործընթաց, գործունեություն, իրադարձություն, նյութ, որը կարող է հանգեցնել մարդկային զոհերի, նրանց առողջության վատթարացման, կենսաապահովման միջոցների, գույքի և նյութական կորուստների, սոցիալական, տնտեսական գոր-ծունեության և ծառայությունների խաթարումների, շրջակա միջա-վայրի տարրերին պատճառվող և այլ վնասների:

Վերը ներկայացվող եզրույթները միմյանց հետ համեմատելիս հարկ է մտապահել

աղետ – արտակարգ դեպք
պատահար – արտակարգ իրավիճակ

հասկացությունները, որոնք կարող են նման լինել բնույթով, սակայն տարբերվել ազդեցության շրջանակով, ուժգնությամբ և հետևանքներով, հետևաբար պահանջելով նաև արձագանքման որոշա-կիորեն տարբեր ընթացակարգեր:

Կարևոր է նաև հասկանալ **ռիսկ** և **վտանգ** եզրույթների տարբերություն-ները, որոնցից առաջինն ավելի շուտ բնորոշվում է որպես հավանա-կանություն և կարող է մեծ կամ փոքր լինել կախված տվյալ ռիսկին ենթակա օբյեկտի խոցելիության աստիճանից, մինչդեռ երկրորդն իրենից ուղիղ սպառնալիք է ներկայացնում: Նշվածն առավել պատկերավոր և հասկանալի դարձնելու համար նշենք, որ օրինակ՝ ցածր ջերմաստիճանի դեպքում ձեռնոցներ կրելը նվազեցնում է ձեր ձեռքերի ցրտահարության ռիսկը, մինչդեռ պատշգամբի եզրից կախված սառցալուլան կարող է լրջորեն սպառնալ պատշգամբի տակով անցնող մարդու կյանքին, հանդիսանալով իրական վտանգ:

Բնականաբար, այս համատեքստում առաջնահերթ կարևոր է **ռիսկի գնահատումը**, ապա **նվազեցումը** և ընդհանրապես **կառավարումը**, որոնք լայն իմաստով հանդիսանում են **դիմակայունության** շրջանակի բաղկա-ցուցիչ, միմյանց հետ փոխկապակցված և փոխլրացնող մասեր:

1.4

Այցելվող երկրի իրավական հիմքերը

Ռիսկերի բացահայտման և գնահատման ժամանակ հատկապես կարևոր է պատկերացնել տեղական իրավական դաշտը: Առաջին հերթին, նման իմացությունը հնարավորություն կտա ձեզ գնահատել ձեր համապատասխանությունը օրենքին (Օրինակ, եթե ալպինիստական արշավի համար պահանջվում է լիցենզիա, արդյո՞ք ձեր բոլոր էքսկուրսավարներն ունեն վավեր ուսուցում և լիցենզիա): Երկրորդ, այն դեպքերում, երբ բացակայում են կամ թույլ են այն ստանդարտները, դա թույլ է տալիս ձեզ ստեղծել ռիսկերը կանխելու ձեր սեփական համակարգը:

> Ի՞նչ է հարկավոր ստուգել օրենսդրության շրջանակներում:

- Մի շարք երկրներում զբոսաշրջությունը մտնում է աշխատանքի պաշտպանության՝ առողջության և անվտանգության օրենքների ոլորտ: Խորհուրդ է տրվում իբրև գործատու ուսումնասիրել աշխատանքի պաշտպանության և անվտանգության պահանջները ձեր բիզնեսի առումով:
- Ստուգեք ձեր ուղեցույցների կարողությունները և գործունեության համար անհրաժեշտ հմտությունները. արդյո՞ք նրանք ունեն հատուկ լիցենզիաներ կամ անցել են համապատասխան դասընթացներ կոնկրետ զբոսաշրջային միջոցառումների անցկացման համար:
- Ձրային սպորտով, ալպինիզմով և ցանկացած այլ տեսակի զբոսաշրջային ծառայություններ տրամադրելու դեպքում ծանոթացեք տեղական պահանջներին, լիցենզիաներին:
- Ստուգեք ձեր պայմանագրերը տրանսպորտային ընկերությունների, հյուրանոցային/հյուրատնային ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ՝ ստուգելու նրանց համապատասխանում են համապատասխանությունը կանոններին:

Առաջադրանքներ.

Առաջադրանք 1.
Ներկայացրեք իրավիճակներ, երբ առկա են զբոսաշրջիկի առողջությունը (կյանքը) վտանգող ռիսկեր, որոնց պաճառը կարող է անփութությունը, անուշադրությունը լինել:

Առաջադրանք 2.
Ներկայացրեք իրավիճակներ, երբ առկա են ռիսկեր՝ մարդկային գործոնով չպայմանավորված:

Ինքնաստուգման հարցեր:

1. Ի՞նչ է աղետը: Ի՞նչպիսին կարող են լինել նրա հետևանքները:
2. Ու՞մ են պարտավոր տեղեկություններ հաղորդել զբոսաշրջային ծառայություն իրականացնողները: Ի՞նչ տեղեկությունների մասին է խոսքը:
3. Ի՞նչ է հարկավոր իմանալ ճանապարհորդությունից առաջ:
4. Ի՞նչ տարբերություն կա վտանգի և ռիսկի միջև:
5. Ինչպիսի՞ ազդեցություն կարող է ունենալ ռիսկը զբոսաշրջային բիզնեսի վրա:

Օգտակար գրականություն և առցանց հղումներ

1. ՀՀ Օրենքը Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին, ՀՕ-11-Ն https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64659
2. Աղետները և աղետների ռիսկի նվազեցումը: ԱՌՆ ուսումնական վարժանքների կազմակերպման ուղեցույց, Երևան, 2017, http://library.cmsa.am/hy/items/?name= #338
3. Աղետների ռիսկի նվազեցում: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2012, http://library.cmsa.am/hy/items/?name= #325
4. Մաթևոսյան Հ., Շրջակա միջավայրի ռիսկերի նվազեցման հիմնահարցեր. Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2017, http://library.cmsa.am/hy/items/drr-in-education/?page=4#152
5. Sendai Framework for Disaster Risk Reduction 2015-2030, https://www.undrr.org/publication/sendai-framework-disaster-risk-reduction-2015-2030

03

ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ԹԵՄԱ 2

Ինչպես ենք իրականացնում ռիսկերի կառավարումը և անվտանգության ապահովումը

Թեմայի նպատակն է.՝
ներկայացնել ռիսկերի կառավարման և անվտանգության ապահովման հիմնական տարրերը, պարզաբանել ռիսկերի բացահայտման, վերլուծության, գնահատման և մշակման նշանակությունը, վերլուծել ստանդարտ գործողությունների ընթացակարգերը և դրանց կարևորությունը:

Առանցքային սահմանումները և հասկացությունները. ռիսկերի բացահայտում, ռիսկերի վերլուծություն, ռիսկի գնահատում, ռիսկերի մշակում, ստանդարտ գործողությունների ընթացակարգեր, ընդունելի ռիսկ, կառավարվող ռիսկ:

Ռիսկերի կառավարման և անվտանգության ապահովման համալիր գործողությունները պետք է կազմված լինեն չորս հիմնական տարրերից, որոնք են՝ ռիսկի գնահատումը, ստանդարտ գործողությունների ընթացակարգերը, արտակարգ իրավիճակների պատրաստության պլանները և պատահարի հաղորդումը, արձագանքումը և մշտադիտարկման պլանը:

2.1

Ռիսկերի բացահայտում

Ռիսկի բացահայտումը գործընթաց է, որի ընթացքում գնահատվում է վտանգի առաջացման ռիսկը, ինչպես նաև հաշվի են առնվում կանխարգելման միջոցառումների հասանելիությունն ու արդյունավետությունը: Հատուկ տուրերի համար բացահայտված ռիսկերը սահմանվում են ընդունելի կամ անընդունելի: Ռիսկերի գնահատումը ներառում է

- ռիսկի գործոնների/վտանգների բացահայտում
- վտանգի առաջացման հավանականության և հետևանքների լրջության գնահատում
- գնահատում թե արդյոք ռիսկը գտնվում է օպերատորի կողմից կամ ազգային օրենքներով և/կամ միջազգային չափանիշներով սահմանված թույլատրելի սահմաններում:

Ռիսկերի գնահատումն իրականացվում է դրանց նվազեցման համար անհրաժեշտ և համապատասխան միջոցներ գտնելու համար :



Ռիսկերի գնահատում իրականացնելու համար նախ անհրաժեշտ է որոշել մասշտաբները. ինչ գործողություններ, ապրանքներ կամ ծառայություններ պետք է գնահատվեն: Խորհուրդ է տրվում գնահատել ձեր բոլոր գործողությունները / ապրանքները, այնուամենայնիվ, ելնելով այնպիսի սահմանափակումներից, ինչպիսիք են մարդկային ռեսուրսները, ժամանակը և այլն: Հավանական է, որ դուք նախ ցանկանաք ջանքեր գործադրել այն ուղղություններում, որոնք.

- Ամենատարածվածն են և օգտագործվում են ձեր հաճախորդների մեծ մասի կողմից
- Իրականացվում է ձեր սեփական կազմակերպության կողմից
- Համարվում են բարձր ռիսկի արկածախնդիր միջոցառումներ:

Գործունեության տեսակից, շրջանակից և միջոցներից կախված ռիսկերը կարող են միանգամայն տարբեր լինել: Ռիսկերի գործոնների թվում են նաև բնական, եղանակային, աշխարհագրական պայմանները, որոնք սերտորեն փոխկապակցված են գործունեության տեսակի, վայրի և ժամանակի հետ: Բնականաբար հասկանալի է, որ հիշյալ պայմաններից ելնելով այցելության միևնույն գոտին կարող է առավել կամ նվազ ռիսկեր պարունակել տարվա տարբեր եղանակներին և տարբեր ժամանակահատվածներում:

Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված առավել հաճախ հանդիպող աղետները, որոնք կարող են ռիսկեր պարունակել զբոսաշրջության համար, հրդեհներն են: Գլոբալ տաքացման հետևանքով դրանց ծավալը և հաճախականությունը զգալիորեն բազմապատկվել է, ինչը զուգակցվելով չորային եղանակի, երաշտների հետ, զգալի վնաս է տալիս տնտեսությանը, շրջակա միջավայրին, էկոհամակարգերին, բնական և մշակութային հուշարձաններին և անգամ կարող է վնասել մարդկանց կյանքին և առողջությանը:

Հրդեհավտանգ ժամանակաշրջանում պետական կառույցները զանազան միջոցառումներ են իրականացնում հանրության շրջանում իրազեկության բարձրացման, վարվելակերպի ճիշտ կանոնների մշակման և նախազգուշական միջոցառումների իրականացման համար, սակայն անհրաժեշտ է նաև հասարակության տարբեր շերտերի, կազմակերպությունների համակարգված մոտեցումը՝ այս ռիսկերը հնարավորինս նվազեցնելու և հետևանքները մեղմելու համար:

Սակայն այս ամենի համար անհրաժեշտ է նվազագույն գիտելիքներ ունենալ հրդեհի, նրա բարդացմանը և առավել վնաս հասցնելուն նպաստող գործոնների մասին՝ հնարավորության սահմաններում առավելագույն զգուշություն դրսևորելու և կանխարգելման միջոցառումներ իրականացնելու համար:

Հրդեհների քանակի, պատճառված վնասի ու զոհերի թվի վրա ազդող բազմաթիվ օբյեկտիվ գործոններից կարելի է առանձնացնել մի քանի հիմնական խմբեր: Նախ դա հրդեհավտանգավորության իրական ու լիովին հասկանալի աճն է աշխարհում՝ պայմանավորված այնպիսի նոր նյութերի

կիրառմամբ, որոնք ստեղծվել են գիտության նվաճումների շնորհիվ՝ մեծ քանակությամբ նավթի ու նավթամթերքների, բնական ու արհեստական գազերի օգտագործմամբ, արտադրությունում բարդ և էներգատար տեխնոլոգիական գործընթացների ներդրմամբ: Ժամանակակից նյութերի մեծ մասն այրվելիս արձակում է ավելի շատ ջերմություն և մի քանի անգամ ավելի շատ այրման թունավոր արգասիքներ՝ քան փայտանյութը: Պողպատը, բետոնը, ապակին, որոնք շինարարության մեջ փոխարինել են փայտանյութին, ստեղծել են հրդեհից հուսալի պաշտպանության խաբուսիկ տպավորություն: Բոլոր այս պատճառները հիմնականում նպաստում են հրդեհների քանակական աճին:

Գործոնների մյուս խմբին կարելի է դասել բնակչության (հատկապես՝ քաղաքային) շարունակական աճը, շենքերի ու շինությունների բարձրության, մակերեսների ավելացման միտումը, ինչի շնորհիվ դրանց հրդեհավտանգավորության մակարդակը խիստ բարձր է: Բարձրահարկ բնակելի շենքերում ու հյուրանոցներում, խոշոր հանրախանութներում, թատրոններում, ռեստորաններում տեղի ունեցած հրդեհների տխուր փորձը դրա վառ ապացույցն է: Հրդեհների մասին մի փոքր ավելի հանգամանալից կխոսենք 3-րդ գլխում:

2.2 Ռիսկերի վերլուծություն

Երբ սահմանված են այն ուղղությունները, որոնց նկատմամբ պետք է իրականացվի ռիսկերի գնահատումը հնարավոր է համակարգային մոտեցմամբ վեր հանել այն գործոնները, որոնք կարող են աղետների հանգեցնել: Միաժամանակ հարկ է դիտարկել հնարավոր առավելագույն վնասը կամ հետևանքը, ինչն իր հերթին թույլ կտա հասկանալ տվյալ ռիսկի ընդունելի կամ անընդունելի լինելու աստիճանը: Այստեղ կարևորագույն հանգամանքներից մեկը բացահայտված հնարավոր ռիսկի հավանականության և բարդության աստիճանն է՝ որքա՞ն է հավանականությունը, որ ձեր դիտարկած հնարավոր ռիսկը կարող է իրականանալ:

Բարդություն.
դիտվում է այն առումով թե ինչ տեղի կունենա, որքան ծանր կլինի վնասը, կարո՞ղ են մարդիկ վնասվել կամ մահանալ:

Բարդություն	
Բարձր	Կյանքին սպառնացող վնասվածքներ
Միջին	Բժշկի կարիք ունեցող վնասվածքներ
Ցածր	Թեթև վնասվածքներ

Հավանականություն.
կարո՞ղ է արդյոք դա իրոք տեղի ունենալ: Ինչպիսի՞ն է դեպքը տեղի ունենալու հավանականությունը / հնարավորությունը:

Հավանականություն	
Բարձր	Հաճախ է տեղի ունենում
Միջին	Երբեմն տեղի է ունենում
Ցածր	Հազվադեպ է տեղի ունենում

Ներկայացվող ռիսկի սանդղակը թույլ է տալիս հասկանալ, թե հավանականության և բարդության աստիճանի համադրությունն ինչ ծանրության ռիսկ է կարող է առաջացնել: Այսպես, ցածր հավանականության դեպքում անգամ բարձր աստիճանի բարդությամբ ռիսկը միջին արժեք ունի, քանի որ քիչ հավանական է, կամ միջին բարդության և բարձր հավանականության դեպքում արդեն իսկ բարձրանում է ռիսկի բարդությունը:

Ռիսկի սանդղակ

Բարդություն	Բարձր	Միջին	Բարձր	Շատ ծանր
	Միջին	Միջին	Միջին	Բարձր
	Ցածր	Ցածր	Միջին	Միջին
		Ցածր	Միջին	Բարձր
		Հավանականություն		

2.3

Ռիսկի գնահատում

Գնահատում Բարդություն + Հավանակա նություն	Դասակարգում	Բացատրություն
2	Ցածր ռիսկ	Ընդունելի է և կառավարվում է ամենօրյա ընթացիկ գործողություններով: Ռիսկի ցածր հավանականությամբ աննշան վնասով (քերծվածքներով):
3-4	Միջին ռիսկ	Անհրաժեշտ է ռիսկի ուսումնասիրություն և կառավարում: Առկա է իրական ռիսկի առաջացման վտանգ, երբ հնարավոր են միջին (առաջին օգնութ-յան կարիք) ծանր (հոսպիտալացում) վնասվածքներ:
5	Բարձր ռիսկ	Անմիջական կառավարում է անհրաժեշտ: Ռիսկի առաջացումն ունի միջինից բարձր հավանականություն, հնարավոր ծանր վնասվածքներով, որոնք կարող են երկարատև հետևանքներ ունենալ:
6	Ծայրահեղ ռիսկ	Անընդունելի ռիսկ - խուսափել: Ունի առաջացման բարձր հավանականություն, ինրը կարող է շատ ծանր հետևանքների հանգեցնել (կյանքին սպառնա-ցող կամ կյանքը փոխող վնասվածքներով և, հնարավոր է մահով):

Ներկայացված սանդղակը հասկանալի է դարձնում ռիսկերի գնահատման և դասակարգման միջոցով ռիսկերի կառավարելիության աստիճանը, հնարավոր վնասվածքների կամ սպառնալիքների աստիճանը, որի միջոցով որոշում է կայացվում ռիսկերի ընդունելի կամ անընդունելի լինելու վերաբերյալ:

Հիմնվելով ռիսկերի գնահատման վրա կարելի է որոշել, թե ինչպես սահմանել գործողությունների առաջնահերթությունները: Բարձր ռիսկայնության և բարձր հավանականության ռիսկով բնորոշվող միջոցառումը դուք հավանական է փոփոխեք մեկ այլ գործողությամբ, կամ կարող եք կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել՝ հավանականությունը նվազեցնելու համար, ինչպես օրինակ զբոսաշրջիկների համար հատուկ ուղեցույցների տրամադրում, անձնակազմի ուսուցում կամ տեղեկատվական /նախապատ-րաստական նիստեր և հանդիպումներ:

2.4

Ռիսկերի մշակում

Ռիսկերի գնահատումը կատարվում է ոչ թե բոլոր ռիսկերից խուսափելու, այլ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար, որպեսզի նվազագույնի հասցնենք ռիսկի իրականանալու հավանականությունը:

Այսպիսով, այն ռիսկերի համար, որոնք անհրաժեշտ է կառավարել, մենք պետք է համապատասխան գործողություններ / միջոցներ ձեռնարկենք: Ռիսկի գործոնների կանխարգելման և կառավարման միջոցառումները պետք է ներառեն

- Գրավոր կանոններ և ստանդարտ գործառնական ընթացա-կարգեր
- Առաջին օգնության ուսուցում և անձնակազմի որակավորման բարձրացում
- Մասնակցության մասին զբոսաշրջիկներին ուղղված լավ բացատրված պայմաններ և հրահանգներ
- Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրերի և արտակարգ իրավիճակների պատրաստվածության ապահովման պլանների մշակում

- Օգտագործել արդիական սարքավորումներ և մշտադիտարկում, ինչպես նաև ստուգման թերթիկներ (*checklists*)
- Պլանավորել և գնահատել այլընտրանքային երթուղիներ
- Անվտանգության միջոցառումների իրականացում, ինչպիսիք են խոչընդոտների, բաճկոնների և սաղավարտների օգտագործումը, կամ չեղարկել անընդունելի ռիսկայնությամբ բնորոշվող վտանգավոր գործունեության տեսակները:

2.5

Ստանդարտ գործողությունների ընթացակարգեր

ՍԳԸ-ը փաստաթղթավորված հրահանգների հավաքածու է, որը սահմանում է որոշակի իրադարձության դեպքում անձնակազմի համար նախատեսված գործողությունների պարտադիր քայլերը: Ստանդարտ գործողությունների ընթացակարգերը կօգնեն ձեզ՝

- Նվազեցնել պատահարների և միջադեպերի թիվը ձեր տուրերում
- Աշխատավայրում անվտանգության ապահովման համար
- Նպաստել ձեր ընկերության հեղինակությունը
- Հասնել զբոսաշրջության ոլորտում անվտանգության չափանիշների ընդհանուր բարձրացման
- Որակյալ ստանդարտացված ծառայությունների համար

Կազմակերպությունը կարող է ունենալ իր ուրույն ՍԳԸ-ը, սակայն հարկ է գիտենալ, որ աղետների ռիսկի նվազեցման համընդհանուր ընթացակարգերը միօրինակ են և պարտադիր բոլորի համար: Դրանք սահմանվում են արտակարգ իրավիճակներին արձագանքող լիազոր մարմնի կողմից՝ աղետների ռիսկի կառավարման, նախնական պատրաստության և արձագանքման գրագետ իրականացման համար:

2.6

Արտակարգ իրավիճակների պատրաստվածության պլան և միջադեպերի հաղորդում

Արտակարգ իրավիճակներում գործողությունների պլանները բաղկացած են այնպիսի գործողություններից, որոնք թույլ կտան նվազագույնի հասցնել վնասներն ու կորուստները արտակարգ դրության ժամանակ: Դրանք կարող են նաև սահմանվել որպես կառավարման համակարգ, որն ուղղված է արտակարգ իրավիճակներում տուժած համայնքների կարիքների ժամանակին և արդյունավետ բավարարմանը:

Արտակարգ իրավիճակներում գործողությունների պլաններն ակտիվանում են արտակարգ իրավիճակների առաջացումից անմիջապես հետո և ավարտվում, երբ վերացված են արտակարգ իրավիճակների պատճառները:

Խորհուրդ է տրվում նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների դեպքերը կանխարգելիչ միջոցառումների միջոցով: Աշխատակիցները պետք է վերապատրաստվեն առաջին օգնության համար և անցնեն ուսուցում իրենց գործունեության. Բոլոր նյութերը, որոնք կարող են անհրաժեշտ լինել արտակարգ իրավիճակների ժամանակ, ինչպես նաև պատասխանատու անձանց և ծառայությունների հեռախոսահամարները՝ հրատապ կանչեր իրականացնելու համար պետք է տրամադրվեն աշխատակիցներին նախքան արտակարգ իրավիճակների առաջացումը:

Արտակարգ իրավիճակի դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել 3 գործոն:



Առաջին օգնություն:
Կախված վնասվածքի աստիճանից, շրջագայության համար պատասխանատու անձը պետք է ընտրի առաջին օգնության եղանակը և կազմակերպի տուժածի տեղափոխումը մոտակա բժշկական կենտրոն, ինչպես նաև հանգստացնի տուրի մյուս մասնակիցներին:

Հաղորդակցություն:
Շրջագայության պատասխանատուն պետք է պատահարի մասին տեղեկացնի տուրօպերատորին, առաջին արձագանքման թիմին: Շտապօգնության բրիգադները պետք տեղեկացված լինեն տուժածի առողջական վիճակի մասին, ինչպես նաև այն մասին, թե ինչ նյութեր են անհրաժեշտ:

Ռիսկերի գնահատում և շրջակա միջավայրի պայմանների դիտարկում:
Պետք է ձեռնարկել միջոցառումներ ընթացիկ ռիսկերի և հնարավոր պատահարների կանխարգելման համար:

> **Միջադեպերի մասին հաղորդումը** պետք է պարունակի առնվազն ստորև ներկայացված տեղեկատվությունը.

- Տուժողի մասին տեղեկություններ
- Միջադեպի պատճառը
- Ինչպես է տեղի ունեցել միջադեպը
- Շրջակա միջավայրի վերաբերյալ մանրամասներ
- Ինչ կազմակերպություններ են տեղեկացվում միջադեպի մասին

2.7

Ինչպես զարգացնել ռիսկերի կառավարման և անվտանգության համակարգը

Նախորդ բաժիններում մենք քննարկեցինք ռիսկերի կառավարման և անվտանգության համակարգի հիմնական տարրերը: Ստորև ներկայացված են հիմնական ինը քայլերը, որոնք հարկ է իրականացնել.

1. Առաջնորդություն և ռազմավարություն:
Կարևոր է սահմանել պատասխանատուների և ունենալ արտակարգ իրավիճակներում գործելու ռազմավարություն:

2. Վերլուծել ռիսկերը և վտանգները:
Ինչպես և նարկայացրել ենք նախորդ բաժնում, ռիսկերը հասկանալու համար անհրաժեշտ է ռիսկերի բացահայտում, վերլուծություն և գնահատում:

3. Սահմանել ՍԳԸ:
Հաշվի առնելով ռիսկի գնահատման արդյունքները սահմանել ստանդարտ գործողությունների ընթացակարգեր կանխարգելիչ միջոցառումներով ռիսկի հավանականությունը նվազագույնի հասցնելու և վնասը մեղմելու համար:

4. Մշակել արտակարգ իրավիճակում գործելու պլան:

5. Պատրաստել միջադեպերի հաղորդման կարգը:

6. Մշակել գործողությունների ծրագիր՝ նշելով թիրախներ

7. Վարժանքներ իրականացնել ձեր անձնակազմի և մատակարարների հետ:

8. Մշտադիտարկեք ձեր անվտանգության միջոցառումները:

9. Ձգտեք շարունակական բարելավման:

Առաջադրանքներ.

Առաջադրանք 1.
Քննարկեք և թվեք բոլոր այն ռիսկերը, որոնք կարող են լինել Ձեր շուրջը, Ձեր գտնվելու վայրում:

Առաջադրանք 2.
Վերլուծեք, թե որքան է հավանականությունը, որ Դուք կենթարկվեք վերը քննարկված ռիսկերին՝ օրինակ եթե ինքնաթիռ է անցնում Ձեր շենքի վրայով, որքան է հավանական որ այն վայր կընկնի, և որքան, որ կվնասի Ձեզ:

Առաջադրանք 3.
Քննարկեք, թե ինչպիսի ստանդարտ գործողությունների ընթացակարգեր կարող են լինել տարբեր արտակարգ իրադրություններում:

Ինքնաստուգման հարցեր:

1. Ինչ է ռիսկերի բացահայտումը, բերեք օրինակներ:
2. Ինչ հատկանիշներով է բնորոշվում ռիսկը: Ինչպես գնահատել այն:
3. Ինչ է նշանակում մշակել ռիսկը, բերեք օրինակներ:
4. Ինչ կարգով է իրականացվում առաջին օգնությունը և միջադեպի հաղորդումը:
5. Ինչ տեղեկություններ պետք է պարունակի հաղորդումը միջադեպի մասին:

Օգտակար գրականություն և առցանց հղումներ

1. Մաթևոսյան Հ., Շրջակա միջավայրի ռիսկերի նվազեցման հիմնահարցեր. Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2017, http://library.cmsa.am/hy/items/drr-in-education/?page=4#152
2. Մաթևոսյան Հ., Խանգելդյան Հ., Խորհուրդներ բնակչությանը. Ի՞նչ անել..., ի՞նչ հիշել..., Երևան, 2017, http://library.cmsa.am/hy/items/drr-in-education/?page=4#151
3. Պողոսյան Ա., Շարխատունյան Ռ., Առաջին օգնության հիմունքներ, Երևան, 2019, http://library.cmsa.am/hy/items/drr-in-education/#82

03

ԻՆՉ Է ՀԱՐԿԱՎՈՐ ԻՄԱՆԱԼ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԱՂԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԹԵՄԱ 3

Ինչ է հարկավոր իմանալ առավել վտանգավոր աղետների մասին

Թեմայի նպատակն է.
ներկայացնել Հայաստանում առավել տարածված վտանգավոր աղետների տեսակները, պատկերացում տալ դրանց ազդեցության շրջանակի, բնույթի և առաջացման պատճառների մասին

Առանցքային սահմանումները և հասկացությունները. անտառային հրդեհներ, կառավարվող հրդեր, տարհանում, երկրաշարժեր, ստանդարտ գործողությունների ընթացակարգեր

Ինչպես արդեն քննարկել ենք, աղետների մեծ բազմազանության մեջ յուրաքանչյուր երկիր ունի իրեն սպառնացող աղետների մի խումբ, որը պայմանավորված է ինչպես ֆիզիկա-աշխարհագրական դիրքով, այնպես էլ տվյալ երկրում գործող տնտեսության ուղղություններով, կարևորագույն ենթակառուցվածքներով և այլն: Հայաստանում մարդու կյանքին սպառնացող կարևորագույն աղետների մեջ առանձնացվում են հրդեհները և երկրաշարժերը, որոնք իրարից լրջորեն տարբերվում են ինչպես բնույթով, արձագանքման եղանակներով և, ինչը սույն գրքույկի կարևոր առանցքներից է, վարքականոնների սկզբունքներով: Վերջիններն ընթերցողին ներկայացնելուց առաջ հարկ է խոսել հիշյալ աղետների տեսակների մասին առանձին-առանձին, փորձելով հնարավորինս լայն պատկերացում տալ և հասկանալի դարձնել վարքականոնների պարտադիր պահանջների որոշակի դրույթներ:

3.1

Հրդեհները բնության մեջ

Մասնագիտական գրականության մեջ կամ օտարալեզու տեղեկատվական աղբյուրներում հաճախ կարելի է հանդիպել **անտառային հրդեհներ** (*forest fires*) և **վայրի հրդեհներ** (*wildfires*) եզրույթները: Առաջին հայացքից, կարծես թե այս եզրույթները նույնանում են, սակայն երկրորդ, համեմատաբար ավելի նոր եզրույթի օգտագործումը նպատակ ունի շեշտելու նրա բնույթը: Իրականում տարբերում են նաև ***վերահսկվող / կառավարվող հրդեհ*** եզրույթը, որը կիրառվում է աշխարհի շատ երկրներում, ինչպես տնտեսական նշանակությամբ՝ ազատել անտառածածկ տարածքը այլ տեսակի տնտեսական գործունեություն ծավալելու համար կամ քաղաքաշինական նպատակներով, այնպես էլ պրոֆիլակտիկ նշանակությամբ՝ բուսածածկ տարածքներում տարածված հիվանդությունների վերացման, կարգավորման նպատակներով: Հնարավոր է սակայն, որ այսպես կոչված կառավարվող հրդեհները վերաճեն վայրի բնության հրդեհների՝ քամու ուժգնացման, եղանակային պայմանների վատթարացման հետևանքով կրակի անկանոն և գերարագ տարածման պատճառով:

Անտառային հրդեհը բուսականության անվերահսկելի այրումն է, որը տարերայնորեն տարածվում է անտառային տարածքով: Տարածման բնույթից կախված դրանք լինում են գետնատարած, վերնատարած և ստորգետնյա: Գետնատարած հրդեհի դեպքում բոցի բարձրությունը հասնում է 50-150 սմ-ի: Վերնատարած հրդեհներն ընդգրկում են անտառի վերնամասը և տարածվում հսկայական արագությամբ: Ստորգետնյա հրդեհներն առաջանում են տորֆահողերում, տարածվում են դանդաղ՝ օրական 2-10 մետր արագությամբ, սակայն շատ վտանգավոր են և բարդ՝ հրդեհաշիջման համար: Անտառային ու տորֆային հրդեհների ազդող գործոններն են կրակը, բարձր ջերմաստիճանը, ծխապատումը և թթվածնի այրումը:

Անտառային հրդեհների առաջացման պատճառները լինում են բնական ու անտրոպոգեն: Ամենատարածված բնական պատճառ են համարվում կայծակները, որոնցից առաջացած հրդեհները կազմում են ընդհանուրի միայն 7-8 տոկոսը, այսինքն անտառային հրդեհների առաջացումը հիմնականում կապված է մարդկային գործոնի հետ: Երբեմն անտառային հրդեհներն արհեստականորեն են առաջացնում, որոնց անվանում են վերահսկելի հրդեհներ: Դրանց նպատակն է հրդեհավտանգ այրվող նյութերի ոչնչացումը, անտառահատումների թափոնների վերացումը, տարածքների նախապատրաստումը տնկիների համար, պայքարը կրծողների ու անտառի հիվանդությունների դեմ և այլն: Իհարկե չպետք է մոռանալ նաև անտառի դիտավորյալ հրկիզումները, որոնք կատարվում են զանազան նպատակներով:

Չնայած նրան, որ վերջին ժամանակաշրջանում ի հայտ են գալիս անտառային հրդեհների առաջացման նոր պատճառներ, ինչպես, օրինակ՝ գլոբալ տաքացումը, ջերմոցային էֆեկտը, այդուհանդերձ հիմնական պատճառը մնում է մարդը: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է հատուկ ուշադրություն դարձնել հրդեհային պրոֆիլակտիկային, բնակչության շրջանում իրականացվող բացատրական աշխատանքներին: Կարևոր է, որ զբոսաշրջային ծառայություններ իրականացնողները, հատկապես, բնության մեջ այցելություն կազմակերպելիս, նախապես իրազեկ լինեն տվյալ տարածքի մասին համապատասխան նախապատմությանը, հնարավոր ռիսկին, պարտադիր պահանջներին և ճիշտ վարքականոններին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անտառային հրդեհների գերակշիռ մասն առաջանում է մարդկանց կողմից կրակի հետ անզգույշ վարվելու հետևանքով (հանգստի կամ աշխատանքի ժամանակ) անհրաժեշտ է՝

- հակահրդեհային քարոզչության լայնամասշտաբ իրականացումը բնակավայրերում՝ բնակչության շրջանում, հասարակական տրանսպորտում, մարդկանց զանգվածային հանգստի ու աշխատանքների կատարման վայրերում՝ հրդեհային անվտանգության կանոնների պահպանման նպատակով.
- անտառային առողջացման կազմակերպումը՝ մարդկանց չկազմակերպված ներհոսքի կրճատման և հանգստավայրերի հրդեհային անվտանգության ապահովման միջոցով.
- անտառներում հրդեհային անվտանգության պահանջների ապահովման նկատմամբ հսկողության իրականացումը, անտառային հրդեհների առաջացման պատճառների պարզումը, անտառային հրդեհների առաջացման մեջ մեղավորների հայտնաբերումը:

Հարկ է գիտենալ, որ հրդեհային անվտանգությունը բնության մեջ, անտառային հրդեհների կանխարգելումը, հրդեհային ռիսկերի նվազեցումն ու, ի վերջո, նաև հրդեհի ժամանակ արձագանքումը չի կարող իրականացվել միայն հրդեհաշիջման ծառայություն իրականացնող պատասխանատու ստորաբաժանումների կողմից: Հայաստանում, ինչպես և այլուր, ներգրավված են շրջակա միջավայրի և բնության պաշտպանության խնդիրներով զբաղվող ինչպես պետական գերատեսչություններ, այնպես էլ տեղական կամավորական ուժեր, անտառի, վայրի բնության պաշտպանության խնդիրներով զբաղվող կազմակերպություններ և այլոք:

Զբոսավարի / կազմակերպության համար կարևոր պայման է՝ ուշադիր լինել զբոսաշրջիկների պահվածքին, սովորույթներին: Բացի ակնհայտ պայմաններից, ինչպես ծխախոտի կամ լուցկու մնացորդները բնության մեջ չնետելը, պետք է իմանալ, որ բնության մեջ թափված աղբը կարող է հետագայում կրակի առաջացման պատճառ լինել, արդեն հանգած խարույկի առաջին հայացքից անվտանգ մոխիրը կարող է ավելի ուշ դարձյալ բռնկվել և իրական աղետի պատճառ հանդիսանալ:

Եվ այսպես, հրդեհները բնության մեջ, ցավալիորեն, առավել հաճախ հանդիպող աղետներից են, որոնց մեղավորը, շատ հաճախ անգիտակցաբար, հենց մենք ենք, մարդիկ: Պատասխանատվության և զգուշության տարրական կանոնների պահպանումը կարող է ազատել իրական աղետից և դիրա հետևանքների դեմ երկար ու դժվարությամբ պայքարելու անհրաժեշտությունից:

Ճիշտ վարքականոններ մշակելու համար բոլոր միջոցները կիրառելի են, սակայն նախազգուշական վահանակները, գրված ու չգրված կանոնները միանգամայն անզոր են անպատասխանատու և անփույթ վարքագծի դեմ: Այստեղ է, որ զբոսավարը պետք է դրսևորի առաջնորդության առանձնահատուկ կարողություններ՝ թույլ չտալու համար ծխախոտի մնացորդներից սկսած ցանկացած տեսակի թափոնների նետումը, վառված խարույկների և օջախների ոչ հետևողական մարումը և այլն:

Ինչ անել, երբ դուք հանդիպել եք անտառային հրդեհների.

1. Եթե ձեր վառած կրակը դառնում է անվերահսկելի, ապա օգտագործիր կտոր կամ լաթ, բոցերը հանգցնելու համար: Բոլոր դեպքերում ջրի օգտագործումը կլինի ավելի քիչ արդյունավետ, քանի որ դուք, ամենայն հավանականությամբ ջրի մեծ պաշարներ չունեք:

2. Եթե ձեր վառած կրակը դառնում է անվերահսկելի, ապա դադարեք պայքարելուց և դուրս եկեք վտանգավոր գոտուց: Կյանքն ավելի թանկ է: Պարզապես չափազանց կարևոր է կանչել համապատասխան մարմիններին, երբ ձեր կյանքին այլևս վտանգ չի սպառնում:

3. Հրդեհը ավելի շուտ տարածվում է քամու ուղղությամբ, և ավելի արագ դեպի վեր քան դեպի վար:

4. Փորձեք գտնել բնական միջոց, ինչպիսին է գետ կամ մեծ դատարկ մաքուր տարածք:

5. Եթե ստիպված եք անցնել կրակի միջով, ապա ծածկեք ձեր դեմքը և բերանը խոնավ շորով /կամ չոր, եթե մոտակայքում ջուր չկա/, և բոցերի միջով վազեք ինչքան որ հնարավոր է արագ: Եթե կրակը կպնի ձեր հագուստին, ապա հանգցրեք այն գլորվելով կամ այլ լաթով / կտորով «հարվածելով»:

6. Հրդեհի ժամանակ չափազանց կարևոր է հիշել որ թե' բացօթյա և թե' փակ տարածքներում բացի ջերմային այրվածքների վտանգից մեծ է նաև ծխահարվելու, ծխով թունավորվելու հավանականությունը:

7. Երբ արդեն ապահով վայրում եք, տեղեկացրեք համապատասխան մարմիններին, անգամ եթե մտածում եք, որ ինչ որ մեկը դա արել է:

3.2

Հրդեհները փակ տարածքում

Ի բարբերություն բնության մեջ տեղի ունեցող հրդեհների, փակ տարածքներում կարող են ավելի շատ մարդկային կորուստներ պատճառել: Հատկապես ծանր հետևանքներ են ունենում այն հրդեհները, որոնք առաջանում են մարդկանց զանգվածային ներկայությամբ բնակելի, հասարակական շենքերում: Հրդեհներում մարդկանց զոհվելը մեծ մասամբ պայմանավորված է հակահրդեհային գիտելիքների ու հմտությունների բացակայությամբ: Հաճախ մարդիկ չգիտեն ոչ միայն հրդեհային անվտանգության տարրական կանոնները, այլև անգամ հրշեջ ծառայության հեռախոսահամարը: Շատերը տեղյակ չեն հրդեհի դեպքում վարքականոնների, տարհանման ձևերի ու միջոցների մասին:

Ի՞նչը կարող է հրդեհի ժամանակ մարդկանց զոհվելու պատճառ լինել, ի՞նչ պետք է իմանալ հրդեհի մասին առավելագույն անվտանգություն և պաշտպանվածություն ապահովելու համար

Ա. Հրդեհը «կուրացնում» է, դուք չեք կարող տեսնել կրակի մեջ:

Հրդեհի իրական գործոնների ազդեցությունը երբևէ չզգացած մարդը հայտնվում է լիակատար շոկային վիճակում: Նա հանկարծ հայտնաբերում է, որ իրական հրդեհում ոչինչ չի կարող տեսնել: Բոցն ամեն ինչ սև է դարձնում, ոչինչ չի երևում, սարսափելի մթություն է: Մարդը բացարձակապես չի կարողանում կողմնորոշվել և գտնել անգամ սեփական աշխատավայրի քաջածանոթ ելքի դուռը: Այս ամենին գումարած խուճապը, և ծանր հետևանքներն անխուսափելի են: Այդ ամենից հնարավորինս խուսափելու համար շենքերում խորհուրդ է տրվում ունենալ.

- Վթարային լուսավորություն,
- «Տարհանման (պահեստային) ելք» լուսային ցուցիչներ,
- Տարհանման ուղիներում օգտագործվող հրդեհային անվտանգության նշաններ, այդ թվում՝ մթության
- Մեջ լուսարձակող,
- Էլեկտրական լապտերներ:

Բ. Մահացու են ծուխն ու գազը, այլ ոչ թե բոցը:

Ժամանակակից բնակարանը ծանրաբեռնված է տարատեսակ նյութերով ու առարկաներով, որոնք այրվելիս առաջացնում են 70-ից ավելի թունավոր արգասիքներ (ածխածնի օքսիդ, ածխաթթու գազ, դիֆոսգեն, ֆոսգեն, ցիանական ջրածին և այլն): Նման միջավայրում անգամ վայրկյաններ գտնվելն արդեն լուրջ վտանգ է ներկայացնում կյանքի համար: Հիմնականում մարդիկ զոհվում են ոչ թե կրակից կամ փլվող կառուցատարրերից, այլ ծխից ու թթվածնի անբավարարությունից, ընդ որում՝ հիմնականում հենց հրդեհի վայրում:

- Շատ վտանգավոր է, երբ հրդեհն առաջանում է բնակելի տանը գիշերը: Դուք մտածում եք, թե կարթնանաք և կսկսեք գործել, սակայն սարսափելին այն է, որ ծխի հոտից չեք արթնանա, այլ ավելի խորը կքնեք: Ծխով լցված սենքում մարդը չի կարող ոչ միայն տեսնել, այլ նաև շնչել: Վախի և խուճապի մեջ մարդը մոռանում է այն ամենն, ինչն թվում է, գիտի հրդեհի մասին:
- Կարևոր է հիշել, որ առավել կարևոր գործողություններից մեկը հրդեհի մասին հնրավորինս արագ ահազանգումն է: Եթե չկան ինքնաշխատ ավտոմատ համակարգեր, որոնք ծխի նվազագույն քանակի դեպքում կարող են ձայնային ազդանշան միացնել, ինչն արդեն վաղուց ընդունված և պարտադիր պայման է բազմաթիվ երկրներում և, հատկապես, հյուրանոցային ծառայություններ մատուցող ընկերությունների համար, ապա պետք է հնարավորինս արագ ահազանգել ինչպես հրշեջ ծառայություններին, այնպես էլ իրազեկել շենքի տարածքում գտնվող մարդկանց՝ անվտանգ և արագ տարհանումը կազմակերպելու համար:
- Միաժամանակ, հրդեհաշիջման պարզագույն կանոնների, անհատական պաշտպանական միջոցների, ձեռքի տակ եղած այլ միջոցների հնարավոր կիրառության մասին տարրական գիտելիքները պարտադիր պայման պետք է լինեն ցանկացած կազմակերպության, առավել ևս մեծ



թվով մարդկանց ներգրավմամբ գործունեություն ծավալողների համար: Հրդեհի դեպքում վարքականոնների և կազմակերպության ղեկավարության կողմից անհրաժեշտ միջոցառումների իրականացնելու համար առկա են ստանդարտ գործողությունների ընթացակարգեր (Հավելված 1), որոնք ցանկալի է պարբերաբար կրկնել տարեկան որոշակի պարբերականությամբ իրականացվող ուսումնական վարժանքների ժամանակ:

Գ. Հրդեհը մտածելու ժամանակ չի թողնում: Պետք է հասցնել կրակից դուրս պրծնել:

Մարդկանց մեծամասնությունը կարծում է, որ հրդեհի դեպքում դեռ ժամանակ կա: Սակայն դա այդպես չէ, հրդեհի դեպքում ժամանակ չկա: Հրդեհը կարող է սկսվել աղբամանում, մնալով աննկատ: Ռոպե անց բազմոցը բռնկվում է և ծուխը տարածվում է սենյակով: Հրդեհի դեպքում ժամանակը կարող է դառնալ ձեր վատագույն թշնամին:

Որքան ժամանակ է հարկավոր խոհանոցի հրդեհում ողջ մնալու համար: Մարդկանց մեծամասնությունը կարծում է, որ 10 րոպե: Իրականում, 30 վայրկյան հետո կրակը անկառավարելի է դառնում: Պետք է հասցնել դուրս պրծնել՝ չհապաղելով և չմտածելով իրերի մասին, փակել դուռը (ոչ բանալիով) և ահազանգել հրշեջ ծառայությունը:

Գոյություն ունի տարհանման անփոփոխելի կանոն. մանկական հաստատություններում փոքր և նախադպրոցական խմբերի երեխաներին չեն հագցնում, այլ փաթաթում են վերմակով (ծածկոցով) և դուրս են բերում վտանգավոր տարածքից: Դպրոցների աշակերտներին դուրս են բերում ուսուցիչների կամ դաստիարակների ղեկավարությամբ, որոնք անձնական պատասխանատվություն են կրում իրենց խմբի երեխաների համար: Հյուրանոցներում արագ տարհանման նկատառումներից ելնելով արգելում են ճամպրուկները հավաքել, և այլն:



Դ. Հրդեհի ժամանակ հնարավոր է խուճապի առաջացում:

Խուճապի մատնված մարդիկ անկանխատեսելի են պահում իրենց: Երբեմն խուճապից մահանում է ավելի շատ մարդ, քան հրդեհի վտանգավոր գործոններից: Միանգամայն ակնառու է, որ հոգեբանորեն պատրաստված և ուսուցանված անհատը նմանատիպ էքստրեմալ իրավիճակում կվարվի այլ կերպ:

Մարդկանց զոհվելը հրդեհների ժամանակ մեծ մասամբ պայմանավորված է բնակչության մոտ հակահրդեհային գիտելիքների և ինքնապաշտպանության հմտությունների բացակայությամբ:

Հետևաբար, ամենատարբեր ոլորտներում գործունեություն իրականացնող կազմակերպություններին խորհուրդ է տրվում գտնել այն կարևոր ժամանակը, որը պետք է տրամադրել գիտելիքների տարածման, անտանգության պարտադիր վարքականոնների ներկայացման, քննարկման, յուրացման և պարբերական ստուգման համար: Պետք է չմոռանալ մեր մշակույթում ցավալիորեն շատ տարածված թյուր կարծիքն այն մասին, որ «***մեզ հետ դա չի կարող պատահել.***

3.3

. Ի՞նչ գիտենք երկրաշարժի մասին

Երկրաշարժը երկրաֆիզիկական վտանգավոր երևույթ է: Այն առաջանում է երկրակեղևում և երկրի առավել խոր շերտերում հանկարծակի տեղաշարժերի ու խզումների կամ հրաբխային և փլվածքային երևույթների հետևանքով, որոնք առաձգական ալիքների տեսքով տարածվում են մեծ տարածքների վրա:

Մասնագիտական գրականության մեջ տարանջատում են **բնական երկրաշարժերը և տեխնածին երկրաշարժերը:**

> **Բնական երկրաշարժերը** կապված են տարբեր պրոցեսների հետ: Հայտնի են՝

- տեկտոնական շարժումներով պայմանավորված երկրաշարժեր,
- հրաբուխների հետ կապված երկրաշարժեր,
- երկրակեղևում կարստային խոռոչների փլուզման հետևանքով առաջացող երկրաշարժեր և այլն:

> **Տեխնածին երկրաշարժ** ասելով պետք է հասկանալ այնպիսի երկրաշարժ, որը կապված է մարդկային գործունեության հետ: Օրինակ ռազմական կամ արդյունաբերական պայթյունների հետևանքով առաջացող ցնցումները կարող են շարժիչ ուժ հանդիսանալ ուժեղ երկրաշարժի համար: Կամ օրինակ մեծ ջրամբարի կառուցումը կարող է հանգեցնել տվյալ տարածքում սեյսմիկ ակտիվության բարձրացման: Նշվածներից Հայաստանի տարածքին բնորոշ են **տեկտոնական երկրաշարժերը:**

Հայաստանի Հանրապետության տարածքն աչքի է ընկնում իր բարդ լեռնային ռելիեֆով, որի բարձրությունները՝ հաշված ծովի մակերևույթից, տատանվում են 450-4096 մետրի սահմաններում: Հայաստանի տարածքի միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է մոտավորապես 1830 մետր: Տարածքի 86,7 % գտնվում է 1000-3000 մետր բարձրության վրա:

Արաբական և Եվրասիական սալերի բախմամբ պայմանավորված՝ առանձնահատուկ ֆիզիկաերկրաբանական պայմանները, ինչպես նաև լեռնային ռելիեֆն ու կտրուկ մայրցամաքային կլիման նախասահմանել են Հայաստանի տարածքում բնական վտանգների տեսակները՝ ուժեղ երկրաշարժեր, սողանքներ, փլուզումներ, սելավներ, ջրհեղեղներ և այլն:

Ծավալով և դրսևորման հաճախականությամբ առավել ծանր տարերային աղետներից մեկն է երկրաշարժը: Հանրապետության տարածքն ամբող-ջությամբ սեյսմավտանգ է, այն գտնվում է 8-11 բալ ուժգնությամբ սեյսմիկ գոտում և պարբերաբար ենթարկվում է երկրաշարժերի ազդեցությանը:

> **Երկրաշարժերի առավել հայտնի օջախներ են՝**

- Հայաստանի հյուսիսում՝ Անի, Սպիտակ, Նոյեմբերյան օջախները,
- Կենտրոնական հատվածում՝ Արարատյան դաշտի երկրաշարժի օջախները՝ քաղաք Արարատ, Փարաքարի օջախ՝ Գառնիի և
- Դվինի օջախներ,
- Հարավում՝ Վայոց ձոր, Տաթև:

Բարձր սեյսմիկ պոտենցիալ ունեն Գառնի-Ելփինի և երևանյան հյուսիս-արևմտյան ուղղության բեկվածքները, ինչպես նաև նրանց նկատմամբ լայնակի ուղղության Ազատ-Սևանի բեկվածքը: Առավել վտանգավոր է Գառնիի սեյսմաակտիվ վրաշարժ-տեղաշարժ, հյուսիս-արևմտյան տարածման բեկվածքը, որը համարվում է ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ նրան հարակից տարածքների ամենաբարձր աստիճանի սեյսմիկ ռիսկի գոտի: Դա պայմանավորված է տարածաշրջանի բարձր սեյսմիկ վտանգով և լայնածավալ կառուցապատվածությամբ ու խիտ բնակեցվածությամբ:

Պատմական աղբյուրները վկայում են Հայաստանի տարածքում տեղի ունեցած բազմաթիվ ավերիչ երկրաշարժերի մասին, որոնք տեղի են ունեցել պատմական տարբեր ժամանակաշրջաններում, պատճառ դառնալով մայրաքաղաքների կործանման, հզոր և ազդեցիկ կառույցների հիմնահատակ ավերման և անգամ բնակավայրերի ի սպառ վերացման: Հայաստանի ժամանակակից պատմության ընթացքում, իհարկե այդպիսի կործանարար ազդեցությամբ հայտնի է **Սպիտակի երկրաշարժ**ը, որը տեղի է ունեցել Հայաստանի հյուսիս-արևմտյան մասում 1988 թվականի դեկտեմբերի 7-ին՝ տեղական ժամանակով ժամը 11:41-ին: Էպիկենտրոնը եղել է Սպիտակ քաղաքի մոտ Ծիրակամուտ (Նալբանդ) գյուղում, երկրաշարժի ուժգնությունը կազմել է 6,87,2 մագնիտուդ, իսկ ըստ Մեդվեդև-Սպենհոյեր-Կարնիկի սանդղակի՝ մակրոսեյսմիկ ինտեն-սիվությունը 10 բալ ուժգնությամբ, Գյումրիում - 9 բալ, Վանաձորում - 8-9 բալ, Ստեփանավանում - 9 բալ, Երևանում - 6 բալ: Հզոր ցնցումների հետևանքով, որ տևել է 35-45 վրկ, ավերել են հանրապետության գրեթե ողջ հյուսիսային հատվածը, որտեղ ապրում էր շուրջ 1 մլն մարդ:

Երկրաշարժի հետևանքով լիովին ավերվել են 11 քաղաք, այդ թվում Սպիտակը: Ավերվել են 58 գյուղ, զոհվել են 25 000 մարդ, անօթևան են մնացել 530 000 մարդ: Երկրաշարժի հետևանքով շարքից դուրս է եկել արդյունաբերական ներուժի շուրջ 40 %-ը (170 արդյունաբերական ձեռնարկություն), ավերվել են 84 դպրոց, 90 մանկապարտեզ, 84 առողջապահական հիմնարկ և շատ այլ վնասներ:

Պատմական տվյալների կանոնավոր գրանցումը և հիշատակումը ոչ միայն նպատակ ունի հարգանքի տուրք մատուցել բնության այս ավերիչ ուժին զոհ գնացած բազմահազար բնակչությանը, այլ, որ առավել կարևոր է, դասեր քաղել, ձևավորել **դիմակայունության** առանձնահատուկ մշակույթ՝ հետագայում նման ավերիչ աղետի հետևանքներ հնարավորինս նվազեցնելու համար:

Պետք է գիտակցել, որ սեյսմիկ ակտիվությունը, ինչպես և բնական մի շարք այլ երևույթներ, մոլորակի բնականոն կյանքի մի մասն են: Այստեղ, թերևս, կարելի է անել վերապահում՝ շեշտելով, որ հատկապես վերջին հարյուրամյակում մարդկային գործունեությունը սկսել է զգալիորեն և բացասաբար անդրադառնալ այդ բնականոն ընթացքի վրա, որի վառ ապացույցը գլոբալ տաքացման ահագնացող տեմպերն են:

Աղետի հիմնական պատճառները

Հանրապետության տարածքի սեյսմիկ վտանգի թերագնահատում,
Թերություններ բազմահարկ շենքերի նախագծման, շինարարության և շահագործման ժամանակ,
Իշխանությունների և բնակչության՝ երկրաշարժին դիմագրավելու ցածր պատրաստվածություն:
Աղետից հետո առաջին փրկարարական աշխատանքների կազմակերպման ցածր մակարդակ:

Այսպիսով, յուրաքանչյուր մարդ պետք է գիտենա իր անելիքները՝ մինչև երկրաշարժը, երկրաշարժի պահին և հետո:

3.4

Ինչպես վարվել երկրաշարժի ժամանակ

Երկրաշարժը մեզ, ամենայն հավանականությամբ, հանկարծակիի կբերի: Ինքնատիրապետում, հանգստություն և հստակ կշռադատված գործողություններ. Ահա թե ինչպիսի վարքագիծ է անհրաժեշտ ձևավորել:

Հարկ է հիշել, որ անգամ ավերիչ երկրաշարժի ժամանակ շենքերը միանգամից չեն փլուզվում: Գյումրիի ավերածությունների վերլուծությունը ցույց տվեց, որ 10 հարկանի շենքերը սկսել են փուլ գալ առաջին ցնցումից 10-12 վայրկյան հետո: Դա այն ժամանակն է, որի ընթացքում փրկվելու համար որոշակի գործողություններ կարելի է ձեռնարկել:

Ժամանակակից մի շարք զարգացած երկրներում մշակվել և ներդրվել են վաղ ազդարարման հատուկ համակարգեր, որոնք ստորգետնյա ցնցումների առաջին իսկ նախանշաններից հետո հրատապ ավտոմատացված հաղորդագրություններ և կարգադրություններ են ուղարկում կառավարման բազմաթիվ ուղղություններով: Ընդամենը տասնյակի չափ վայրկյաններն օգտագործելով՝ նման համակարգերը հնարավորություն են տալիս ճիշտ մշակված ընթացակարգերով հանրությանն իրազեկել, հնարավորություն տալով հստակ գործողություններով սեփական կյանքի պահպանության համար պարզագույն քայլեր անել (տես Ստանդարտ գործողությունների ընթացակարգերը երկրաշարժի ժամանակ, Հավելված 2):

Կարևոր է հիշել, որ երեխաները, տարեցները և հաշմանդամություն ունեցող անձինք ձեր օգնության կարիքն ունեն: Նրանց կարիքները հոգալով՝ դուք չեք երկյուղի ձեր կյանքի համար և կարող եք ավելի հավասարակշռված գործել: Անչափ կարևոր է հիշել նաև, որ եթե դժբախտ պատակականությամբ հայտնվել եք ավերման գոտում, ապա ձեզ անպայման որոնելու են և ձեր փրկության համար կօգտագործվեն բոլոր հնարավորությունները:

Ի՞նչ անել եթե շենքում եք

- Եթե բարձրահարկ շենքի 1-ին և 2-րդ հարկերում եք, աշխատեք անհապաղ դուրս գալ շենքից, հեռացեք դեպի բաց տարածություն,
- Եթե գտնվում եք 3-րդ և ավելի բարձր հարկերում, շենքից դուրս մի եկեք, աստիճաններն ու սանդղակները խցանված կլինեն խուճապահար մարդկանցով, վերելակները կարող են անջատվել ցանկացած պահի: Բացի դրանից, առաջին հերթին, սովորաբար, աստիճաններն ու սանդղակավանդակները փլվում են:
- Կարելի է կանգնել շենքի միջին մասի հիմնական կրող պատերի, նրանցով կազմված անկյունների, այդ իսկ պատերում դռան բացվածքների և հենասյուների մոտ՝ գլխավերևում պահելով աթոռ, պայուսակ կամ այլ համապատասխան իր՝ վերևից թափվող ծեփակտորներից պաշտպանվելու համար: Կարելի է նաև մտնել տարածքում գտնվող մահճակալի կամ սեղանի տակ,
- Պատուհաններից և շենքի արտաքին պատերից հեռու մնացեք, դրանք փլվում են առաջին հերթին՝ փշրվող առարկաներից չվնասվելու համար,

- Զգուշացեք ծանր ու մեծածավալ առարկաներից՝ պահարաններից, սառնարաններից, որոնք կարող են տեղաշարժվել և շրջվել,
- Ցնցումների ավարտից հետո փորձեք դուրս գալ շենքից՝ նախապես որոշված ճանապարհով,
- Շենքից դուրս գալուց զգուշացեք ընկնող բեկորներից, կոտրատված ապակիներից, կտրված էլեկտրալարերից,
- Փլուզումներից առաջացած փոշուց կարող եք շնչահեղձ լինել: Այդ իսկ պատճառով շնչելիս օգտագործեք թաշկինակ, գլխաշոր կամ հագուստից պոկված մի կտոր:

Ի՞նչ անել եթե գտնվում եք փողոցում

- հեռացեք շենքից, կամուրջներից և էլեկտրասյուներից հեռու, դեպի անվտանգտարածություն,
- երբեք շենք չմտնեք այնտեղ գտնվողներին դուրս բերելու համար. դա շատ վտանգավոր է:
- Մնացեք դրսում, տեղեկություններ հաղորդեք օգնության հասած առաջին արձագանքողներին. ձեր համակարգված և սթափ տվյալները կարող են կյանքեր փրկել:

Ի՞նչ անել եթե գտնվում եք ընթացող տրանսպորտում

Երբ սկսվում է ուժեղ երկրաշարժը, դուք չեք կարող տիրապետել ղեկը: Տպավորությունն այնպիսին է, ասես իջել է մեքենայի անիվը: Այդ ընթացքում, որպեսզի համոզվեք, որ դուք չեք հարվածել որևէ այլ մեքենայի կամ էլ ձեզ չեն հարվածել, դանդաղեցրեք ավտոմեքենայի ընթացքը և շարժվեք ճանապարհի աջ կողմով: Կանգ առեք համեմատաբար բաց տարածությունում՝ կամուրջներից, բարձրահարկերից և էլեկտրասյուներից հեռու: Մնացեք մեքենայում, հետևեք մեքենայի ռադիոընդունիչով տրվող տեղեկատվությանը և գործեք համապատասխանաբար:

Բոլոր մեքենաների մուտքը դեպի աղետի գոտի խստիվ արգելվում է, բացի մասնագիտացված տեխնիկայից, փրկարարական ջոկատներից, հրշեջ խմբերից և շտապ օգնությունից:

Եթե մետրոյում եք

Եթե մետրոն ռմբակոծության ժամանակ ապահով ապաստարան է, ապա ուժեղ երկրաշարժի դեպքում այն նույնքան վտանգավոր է: Այդ դեպքում՝

- խուճապի մի մատնվեք և առաջահերթ ապահովեք ձեր անվտանգությունը,
- ցնցման ժամանակ ամուր բռնվեք որևէ առարկայից, օրինակ ուղեբեռի դարակից և երկաթե ձողերից այնպես, որ չընկնեք,
- 5 բալանոց երկրաշարժի ժամանակ հոսանքը կանջատվի, գնացքը ժամանակավորապես կկանգնի, մետրոյի կանգառում ինքնաբե-ռաբար կմիանան վթարային լամպերը,
- դեպի ելքերը գնալը վտանգավոր է, և կարող է խուճապ առաջացնել:
- հետևեք կայարանի բարձրախոսով տրվող ցուցումներին:

Եթե արթնացել եք ստորգետնյա ցնցումներից

Ոչ մի դեպքում չօգտվեք էլեկտրականությունից, չօգտագործեք լուցկի կամ գազայրիչ (գազատարը կարող է վնասված լինել):

Հագնվելու վրա ժամանակ մի վատնեք, արագ վերցրեք ամենաանհրաժեշտ իրերով պայուսակը և դուրս եկեք:

Նշանակալի դեր է խաղում հոգեբանական նախապատրաստումը երկրաշարժին, քանի որ դրանով հնարավոր կլինի դիմակայել բացասական հոգեվիճակների ազդեցությանը: Ինչ խոսք, չկա որևէ իրավիճակ, երբ իրականությունը հնարավոր լինի ընդունել նույնքան հեշտ, որքան վարժանքը, սակայն բազմակի կրկնված գործողությունները կարող են ավտոմատացման հասցնել ձեր գործողությունները, ինչը կնպաստի առանց մտածելու ճիշտ գործողություններ կատարելուն: Ապացուցված է՝ մարդու միտքը բազում անգամներ և հաճախակի կրկնվող գործողությունը կարող է վերարտադրել, առանց դրա մասին մտածելու անհրաժեշտության: Օրինակ՝ եթե դուք ձևավորում եք սովորություն ամեն օր տուն մտնելիս միևնույն տեղում կախել բանալին, դուք այդ գործողությունը կատարում եք առանց դրա մասին հիշելու:

Այսպիսով, ամփոփելով վերը ներկայացված նյութը մնում է միայն հիշեցնել, որ մարդկային բոլոր արարածներն ունեն միանման վախեր, թուլություններ և գործում են հաճախ միանման սխալներ: Նույն կերպ, մարդկային արարածներին բնորոշ դրական հատկանիշներն ու օրինակները հատուկ են բոլորին, կարևոր է միայն աշխատել ընդօրինակելու լավագույն փորձը և դասեր քաղելու կատարված սխալներից:

Առաջադրանքներ.

Առաջադրանք 1.
Քննարկեք և ներկայացրեք բնության մեջ առաջացող հրդեհների հնարավոր պատճառները:

Առաջադրանք 2.
Քննարկեք, թե ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ մարդկային գործոնը բնության մեջ հրդեհների առաջացման համար:

Առաջադրանք 3.
Ներկայացրեք երկրաշարժի հնարավոր հետևանքները. ինչպիսի՞ ուղեկցող փոխկապակցված ռիսկեր կարող են առաջանալ երկրաշարժի հետևանքով:

Ինքնաստուգման հարցեր:

1. Ի՞նչ է հարկավոր անել, եթե հանդիպել եք անտառային հրդեհի:
2. Ի՞նչ տեսակի հրդեհներ գիտեք, ինչո՞վ են դրանք տարբերվում:
3. Ի՞նչ անել, երբ երկրաշարժի ժամանակ գտնվում եք շենքի 2-րդ հարկում:
4. Ի՞նչպես վարվել հրդեհի ժամական, երբ գտնվում եք փակ տարածքում:
5. Ի՞նչ չի կարելի անել հրդեհի ժամանակ, ին՞չ չի կարելի անել երկրաշարժի ժամանակ :

Օգտակար գրականություն և առցանց հղումներ

1. Մաթևոսյան Հ., Շրջակա միջավայրի ռիսկերի նվազեցման հիմնահարցեր. Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2017, http://library.cmsa.am/hy/items/drr-in-education/?page=4#152
2. Մաթևոսյան Հ., Խանգելդյան Հ., Խորհուրդներ բնակչությանը. Ի՞նչ անել..., ի՞նչ հիշել..., Երևան, 2017, http://library.cmsa.am/hy/items/drr-in-education/?page=4#151
3. Մաթևոսյան Հ., Խանգելդյան Հ., Սերոբյան Ն., Հաճախ հանդիպող վտանգներ. Համառոտ ուսումնական ձեռնարկ, Երևան, 2017, http://library.cmsa.am/hy/items/drr-in-education/?page=4#146
4. Պողոսյան Ա., Շարխատունյան Ռ., Առաջին օգնության հիմունքներ, Երևան, 2019, http://library.cmsa.am/hy/items/drr-in-education/#82

Հավելված 1. Հրդեհ փակ տարածքում

ՍՏԱՆԴԱՐՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Հ/Հ	Միջոցառումը	Կատարման ժամկետը		
		վրկ	րոպե	ժամ
1.	*Կազմակերպել ազդարարում*	→ 60		
2.	*Կազմակերպել 1-ին հարկի տարհանում*		→ 1	
3.	*Կազմակերպել 2-րդ հարկի տարհանում*		→ 2	
4.	*Կազմակերպել 3-րդ և ավելի հարկերի տարհանում*		→ 5	
5.	Տարհանման ժամանակ ծխի առկայության դեպքում, տարհանվողներին հրահանգել՝ քթի և բերանի մոտ պահել խոնավ գործվածք, հնարավորին չափ մոտ գտնվել հատակին (տաք օդը և ծուխը թեթև են ու վեր են բարձրանում		1→5	
6.	Անհապաղ ահազանգել Փրկարար ծառայություն՝ տեղեկություններ հայտնելով հրդեհի ճշգրիտ տեղի և շենքում մարդկանց գտնվելու վերաբերյալ		→2	
7.	Անհապաղ ահազանգել շտապ օգնություն՝ տեղեկություններ հայտնելով հնարավոր տուժածների մասին		→2	
8.	Տարհանումից հետո անվտանգ /բաց/ տարածքում՝ ըստ անվանացանկի ստուգել աշխատակիցների առկայությունը		→10	
9.	Կազմակերպել հրդեհաշիջում առաջնային հրդեհաշիջման միջոցներով (այրվող սենքերի մեկուսացման և ձեռքի տակ գտնվող միջոցներով հրդեհաշիջման կազմակերպում)		Մինչև հրշեջ-փրկարարների ժամանումը կամ հրդեհի մարումը	
10.	Ապահովել հրդեհաշիջման աշխատանքներին ներգրավված աշխատակիցների կողմից անվտանգության պահանջների կատարումը			
11.	Կազմակերպել գույքի և փաստաթղթերի տարհանումը և պահպանումը		→30	
12.	Մինչև հրշեջ փրկարարական ստորաբաժանման ժամանումը հոսանքազրկել շենքը		→10	
13.	Կազմակերպել հրշեջ փրկարարական ստորաբաժանումների դիմավորումը		→10	
14.	Հրշեջ փրկարարական ստորաբաժանման ժամանումից հետո, հրդեհաշիջման ղեկավարին տեղեկացնել շենքի առանձնահատկություն-ների, պահվող, օգտագործվող նյութերի և այլնի մասին տեղեկություն-ներ, որոնք անհրաժեշտ են հրդեհի հաջող վերացման համար		10→15	
15.	Բացահայտել վիրավորներին, կազմակերպել նրանց առաջին օգնության ցուցաբերումը		5→15	
16.	Բացահայտել տուժածներին, կազմակերպել նրանց հոգեբանասոցիալական աջակցությունը		5→15	
17.	Գործունեության շարունակականության վերականգնման ուղղությամբ իրավիճակի գնահատում և լուծումների փնտրում		Ըստ իրավիճակի	

Հավելված 2. Երկրաշարժ

ՍՏԱՆԴԱՐՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Հ/Հ	Միջոցառումը	Կատարման ժամկետը				
		1-ին օր			2-րդ օր	3-րդ օր
		վրկ	րոպե	ժամ		
1.	*Իրականացնել 1-ին հարկի տարհանում*	→15				
2.	*Իրականացնել 2-րդ հարկի տարհանում*	→20				
3.	Իրականացնել 3-րդ և ավելի բարձր հարկերի աշխատակիցների պատսպարում, այնուհետ՝ տարհանում		→2			
4.	Տարհանումից հետո անվտանգ /բաց/ տարածքում՝ ըստ անվանացանկի ստուգել աշխատակիցների առկայությունը		→5			
5.	Բացահայտել վիրավորներին, կազմակերպել նրանց առաջին օգնության ցուցաբերումը		5→10			
6.	Բացահայտել տուժածներին, կազմակերպել նրանց հոգեբանասոցիալական աջակցությունը		5→10			
7.	Շինության կայուն լինելու դեպքում կազմակերպել բացակաների հայտնաբերման և շենքի ուսումնասիրման գործընթացներ: (Կատարել ակնադիտական զննում և հաշվի առնել վնասվածության աստիճանը		→30			
8.	Ստեղծված իրավիճակի մասին հաղորդել Փրկարա Ծառայության տարածքային ստորաբաժանում /911/ և ՏԻՄ		→30			
9.	Կազմակերպել կարիքների և կարողությունների գնահատում			→ 2		
10.	Ապահովել տարածքի և գույքի պահպանումը			Ըստ անհրաժեշտության		
11.	Գործունեության շարունակականության վերականգնման ուղղությամբ իրավիճակի գնահատում և լուծումների փնտրում			Ըստ իրավիճակի		
12.	Փոխհամագործակցություն պետական կառավարման համակարգի մարմինների, կազմակերպությունների, համայնքապետարանի հետ		Մշտապես			

Լրացուցիչ ընթերցանություն

Անտոնյան Ա.Ծ., Հարությունան Հ.Հ., Պատմական ավերիչ երկրաշարժերը Հայաստանի Հանրապետության տարածքում Երևան, 2005, http://library.cmsa.am/media/docs/Պատմական_ավերիչ_երկրաշարժերը_ՀՀ_տարածքում.pdf

Աղետները և աղետների ռիսկի նվազեցումը: ԱՌՆ ուսումնական վարժանքների կազմակերպման ուղեցույց, Երևան, 2017, http://library.cmsa.am/hy/items/?name=ռիսկ#338

Աղետների ռիսկի նվազեցում: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2012, http://library.cmsa.am/hy/items/?name=ռիսկ#325

Մաթևոսյան Հ., Շրջակա միջավայրի ռիսկերի նվազեցման հիմնահարցեր. Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2017, http://library.cmsa.am/hy/items/drr-in-education/?page=4#152

Լրացուցիչ ընթերցանություն

Մաթևոսյան Հ., Խանգելդյան Հ., Խորհուրդներ բնակչությանը. Ի՞նչ անել..., ի՞նչ հիշել..., Երևան, 2017, http://library.cmsa.am/hy/items/drr-in-education/?page=4#151

Մաթևոսյան Հ., Խանգելդյան Հ., Սերոբյան Ն., Հաճախ հանդիպող վտանգներ. Համառոտ ուսումնական ձեռնարկ, Երևան, 2017, http://library.cmsa.am/hy/items/drr-in-education/?page=4#146

Մեթոդական ձեռնարկ. Ուղեցույց հրահանգիչների համար, Ստեփանավան, 2010, http://library.cmsa.am/hy/items/drr-in-education/#72

Պողոսյան Ա., Շարխատունյան Ռ., Առաջին օգնության հիմունքներ, Երևան, 2019, http://library.cmsa.am/hy/items/drr-in-education/#82

04

ԱՆՎՏԱՆԳ ՀՅՈՒՐԱՏՈՒՆ

ՀՅՈՒՐԱՆՈՑ ԵՎ ԱՅԼ ՏԻՊԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԿԱՑԱՐԱՆ

Ներածություն

Համաշխարհային զբոսաշրջության զարգացման, ինչպես նաև աշխարհում վտանգների առկայության պայմաններում՝ առաջնայինկարևորություն է տրվում զբոսաշրջիկների անվտանգությանը: Զբոսաշրջիկների անվտանգության ապահովման գործում առանցքային դեր ունեն զբոսաշրջային կացարանները: Հյուրանոցները և հյուրատները պետք է համապատասխանեն համաշխարհայնորեն ընդունված անվտանգության և ապահովության պահանջների մեծ ցանկին՝ հրդեհային և սննդի անվտանգության, ընդհանուր սանիտարական նորմերի և կանոնների, աշխատանքի պաշտպանության և բազմաթիվ այլ հարցերում:

Այսբաժինը նախատեսված է զբոսաշրջային ոլորտի փոքր և միջին բիզնեսում աշխատող միջին և վերին օղակների կառավարիչների համար: Կարևոր է նշել, որ տվյալ ոլորտում կյանքի և առողջության ապահովման և անվտանգության ապահովման համար վերջնականում պատասխանատու են գլխավոր մենեջերները և բիզնեսների սեփականատերերը, այդ իսկ պատճառով, տվյալ նյութը հատկապես օգտակար է հենց վերին օղակի/սեփականատերերի տեղեկացման և պրակտիկ օգտագործման համար:

Սեփականատերերն ու կառավարիչները պատասխանատու են իրենց վստահված և սեփական տարածքում պետական օրենքների պահանջներին համապատասխան հետևել առողջության և անվտանգության կանոնների պահմանմանը՝ իրենց աշխատակիցների, հաճախորդների, երրորդկողմի, ինչպես նաև մատակարարներ և այլ այցելուներ նկատմամբ:

Օգտագործելով այս ձեռնարկը՝ ձեռնարկությունները կկարողանան արդյունավետորեն ստեղծել անվտանգության և աշխատանքի պաշտպանության համակարգ՝ իրենց աշխատակիցների համար, ինչպես նաև լուծել հյուրերի հարմարավետ կացության հետ կապված բոլոր խնդիրները:
Ձեռնարկի վերջում՝ հավելվածների բաժնում տրված են աղյուսակներ և ցուցակներ, որոնք պարզ ու հասկանալի և, ամենակարևորը շատ պրակտիկ և օգտագործելի գործիքների են ձեռնարկության օպերացիոն անվտանգության կառավարման համար:

Ներկայացված նյութը շատ պարզ և հասկանալի խորհուրդների և առաջարկությունների տեսքով են և ուղեկցվում են մանրամասն բացատրությամբ՝ բոլոր տեսակի կացարանների համար տեղայնացնելու նպատակով: Տվյալ պրակտիկ գործիքների ճիշտ և համակարգված կիրառման արդյունքում հյուրանոցային կացարաններում բարելավվում է սպասարկման որակը, ինչպես նաև բարձրանում անվտանգության մակարդակը: Հեղինակները նպատակ են ունեցելստեղծել իսկապես օգտակար և անհրաժեշտ ձեռնարկ, որով հյուրատան աշխատակիցները կարող ենստուգել իրենց աշխատանքի որակի համապատասխանությունը միջազգային բոլոր պահանջներին ամեն օր:

ԹԵՄԱ 1

Զբոսաշրջիկների անվտանգությունը գործնականում

Թեմայի նպատակն է՝
ապահովել զբոսաշրջիկների անվտանգ և հարմարավետ կացության համար անհրաժեշտ պահանջները և պայմանները:

Առանցքային հասկացություններ և սահմանումներ.

Վտանգ - վնասի հնարավոր աղբյուր, որը կարող է վտանգել մարդկանց առողջությունն ու անվտանգությունը և կարող է առաջանալ բնության, մարդկանց կամ առարկաների ցանկացած տեսակի գործունեության արդյունքում:

Ռիսկ – ռիսկը հավանականությունն է, որ անձը (անձիք) կարող է վնասվել, կամ նրա առողջությունը կարող է վտանգի ենթարկվել դեպքում վտանգավոր իրավիճակի անբարենպաստ ազդեցության դեպքում:

Ռիսկերի կառավարում – միջոցառումների մի շարք, որոնք ուղղված են ռիսկային իրավիճակների կամ դրանց հետևանքների հավանականության նվազեցմանը:

Ռիսկերի գնահատում –այն գործընթացն է, որի ընթացքում գնահատվում է վտանգի առաջացման ռիսկը և հաշվի է առնվում վերահսկողության միջոցների առկայությունը և արդյունավետությունը:

Ռիսկերի կանխարգելում, վերահսկում և մոնիտորինգ– ցանկացած գործողություն, որը ձեռնարկվում է ռիսկերը կառավարելու համար՝ նախքան դրանք առաջանալը, ինչպես նաև դրանց առաջացման դեպքում, համակարգված կերպով վերանայելու պլանավորված կամ արդեն իսկ ընթացքում իրականացվող միջոցառումների առաջընթացը և որակը և հետևելու, թե արդյոք ռիսկերը փոխվել են:

Դժբախտ պատահար - չնախատեսված և անկանխատեսելի իրադարձություն, որը հանգեցնում է մահվան, հիվանդության, վնասվածքի կամ այլ վնասների:

Միջադեպ – դեպք, որը տանում է դեպի վթար կամ կարող է հանգեցնել վթարի:

Տուր – զբոսաշրջային օպերատորի կամ կոմերցիոն ճամփորդական ծրագրի արտադրանք՝ նախապես հաստատված պլանավորված ծառայություններ և երթուղի:

Զբոսաշրջիկ՝ անհատ, ով հյուրընկալող երկիր է ժամանել որևէ այլ նպատակով քան աշխատանք և մնում է 24 ժամից մինչև մեկ տարի:

Ժամանակակից աշխարհում ճամփորդությունները մարդու կյանքի անբաժանելի մասն են:Ճամփորդությունները արդեն իսկ կարելի է համատեղել աշխատանքի, մեծ ընտանիքի, փոքր երեխաների, ինչպես նաև ճամփորդել հաշմանդամների հետ, քանի որ տուրիզմի ոլոտը արդեն իսկ պատրաստ է իր բազմազան հնարավորություններով, ինչպես նաև էապես ավելի խիստ անվտանգության կանոններով: Ասենք ավելին, որ զբողաշրջությունը նաև մարդկանց իրավունքների և ազատությունների արտահայտումներից մեկն է, որտեղ նրանք իրականացնում են իրենց տեղաշարժման, մշակութային հուշարձանների և արժեքների դիտման, հանգստի և զվարճանալու ազատությունները:

Զբոսաշրջությունն ունի կարևոր սոցիալ-տնտեսական, մշակութային և բնապահպանական, և մի շարք այլ գործառույթներ: Տվյալ ոլորտը շատ արագ տեմպերով զարգանում է ամբողջ աշխարհում, հատկապես սրնթաց էին այդ տեմպերը COVID-19-ի համաճարագից առաջ, երբ Հայաստանում նույնպես տվյալ ոլորտի աճը երկնիշ թվերի էր հասնում:

COVID-19-ի համաճարագի ընթացքում զբոսաշրջության ոլորտը այն ոլորտներից է, որը առավել շատ է տուժել և սկսել է վերականգնվել միայն 2021-ից: Համաճարագի մոտ երկու տարիների ընթացքում տվյալ ոլորտի աշխատակիցներից շատերը փոխեցին իրենց ոլորտը և վերապատրաստվեցին՝ զբաղվածություն ձեռք բերելով այլ ոլորտներում: Բոլոր վերոնշյալ տենդենցները չեն շրջանցել նաև Հայաստանը: 2022 թվականից Հայաստանը թևակոխել է զբոսաշրջության ոլորտի զարգացման նոր փուլ, որից սպասումները շատ բարձր են՝ հաշվի առնելով, որ տվյալ ոլորտը Հայաստանի տնտեսական զարգացման ստրատեգիկ ուղղություններից է:

Սակայն զբոսաշրջության զարգացումը ուղիղ համեմատական կապ ունի նրա հետ, թե ինչքան անվտանգ և ապահով են զգում իրենցզ բոսաշրջիկները մեր երկրում՝ քանզի ճանապարհորդելիս զբոսաշրջիկն ամենից հաճախ է հայտնվում է անսովոր միջավայրերում, որոնք կարող են վտանգավոր թվալ:Վտանգավոր կամ հյուրերի համար անցանկալի օրինակ են՝

- Հյուրը քայլում է հյուրանոցի ընդհանուր տարածքներով առանց համապատասխան հագուստի կամ հյուրը կոպիտ է խոսում աշխատակիցների և այլ հյուրերի հետ
- Հյուրանոցի տարածքում կամ հարակից տարածքներում այլ մարդկայն ոչ հարիր պահվածքը
- Հյուրանոցի սենյակում կամ տարածքում հյուրի անձնական իրերի անվտանգությունը
- և այլն:

Եվ այսպես զբոսաշրջության զարգացման գրավականներից է այն գործոնը, թե ինչքան անվտանգ և ապահով իրեն կզգա զբոսաշրջիկը և որքանով կարող է նա վստահ լինել իր կյանքի և առողջության պաշտպանության համար տվյալ երկրում, բնակավայրում, զբոսաշրջային երթուղում, տեսարժան վայրում կամ հյուրանոցում:

Ի լրացում բոլոր գործառնական իրավիճակներին, որոնք կարող են լինել խնդրահարույց հյուրանոցում՝ հյուրի անվատանգության տեսանկյունից, հավելվածներում կարողեք ծանոթանալ «Սենյակի բանալու տրամադրում» և «Ուշ ժամերի այցելուներ» նյութերին, որտեղ ավելի մանրամասն բացատրվում է գործողությունների հաջորդականությունը՝ ռիսկերից խուսափելու համար:

Եկեք քննարկենք.

Իրավիճակ 1.

- Հյուրանոցի դիմաց տարեց մարդու ոտքը սայթաքում է և նա ընկնելու արդյունքում վնասում է գլուխը և ընկնում կարճաժամկետ կոմայի մեջ:
- **Խմբային քննարկում.** Ինչպե՞ս վարվել տվյալ դեպքում: Որոնք են առաջնային քայլերը, որ պետք է ձեռնարկել տվյալ դեպքում:



Ինքնաստուգման հարցեր:

Հարց 1. Ի՞նչ ասել է մշակույթ: Ինչպես վարվել այնպես, որ այլ մշակույթի կրողը չվիրավորվի մեր գործողությունների արդյունքում:

Հարց 2. Այդոք կացարանը պատասխանատու է երրորդ անձանց համար, եթե նրանց հետ պատա-հարը/դեպքը տեղի է ունեցել հյուրանոցի տարած-քում, բայց ոչ հյուրանոցի անձնակազմի մեղավորությամբ:

Հարց 3. Վերջնարդյունքում ո՞վ է պատասխանատու կացարանում դժբախտ պատահարի դեպքում:

Հարց 4. Ինչպես է ռիսկերի գնահատման գործըն-թացը օգնում ռիսկերի ընթացիկ կառավարման գործում:

Հարց 5. Ի՞նչ ասել է երրորդ կողմի/անձի պատասխանատվություն և ինչպես է հնարավոր դրա հետ կապված ռիսկերը կառավարել կացարաններում:

ԹԵՄԱ 2

Հակահրդեհային անվտանգություն

Այս հատվածում բոլոր կետերը տիրապետելու և բոլոր կետերին համապատասխան անվտանգություն ապահովելու համար առաջին հերթին անհրաժեշտ է կարդալ և իմանալ բոլոր կանոնները՝ հատկապես Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն մասին ՀՀ քաղաքաշինության հրամանը: ՀՀ տարածքում ցանկացած զգոսաշրջային կացարան գործունեություն իրականացնելուց առաջ պետք է հաստատում անցնի Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից:

Բոլոր փաստաթղթերը ուսումնասիրելուց հետո, անհրաժեշտ է կազմել ներքին կանոնակարգ, որտեղ հստակ նշված են.

1. Տարածքում պարտադիր նշաններն ուուղեցույցները հրդեհի դեպքում գործողությունների վերաբերյալ:
2. Հրդեհաշիջման առաջնային միջոցները և դրանց օգտագործման նկարագրությունը:
3. Հյուրատան անձնակազմի պարտականությունները հրդեհային անվտանգության ապահովման համար, ինչպես նաև անձնակազմի վերջին հավաստագրման/պրակտիկ վարժության ամսաթիվը:
4. Գործողությունների կարճ ցանկը հրդեհի դեպքում, որը որպես հուշում փակցված է ընդունարանում՝ հասանելի և տեսանելի վայրում՝ վառ գույնով:

Հյուրատան անձնակազմի պարտականությունները հրդեհայինան վտանգության ապահովման համար հետևյալն են.

Մենեջերի պարտականությունները.

- Անցնել և անձնակազմի համար կազմակերպել հրդեհային անվտանգության դասընթացներ որակավորված մասնագետների կողմից /ԱԻՆ/:
- Պարբերաբար անցկացնել հակահրդեհային անվտանգության թրեյնինգներ և պրակտիկ վարժություններ
- Հետևել, սր կարևոր սարքավորումների դասավորվածությունը առանց կրակմարիչների տեղադրումը վերանայելու չկատարվի
- Հետևել, որ չոր հագուստը, կոշիկները ինչպես նաև այլ տեքստիլ և դյուրավառ ապրանքները պահվեն հրդեհի աղբյուրներից հեռու
- Ապահովել բոլոր աշխատակիցներին շնչառական համակարգի անհատական պաշտպանության միջոցներով

Աշխատակիցների պարտականությունները.

- Ծխելը ՄԻԱՅՆ հատուկ նշանակված վայրերում և հանգցնել ծխախոտի մնացորդը ծխելուց հետո
- Չօգտագործել բաց կրակ լուսավորման նպատակով
- Չօգտագործել էլեկտրական տաքացուցիչներ վարագույրների, վերմակների և այլն դյուրավառ գործվածքների մոտ
- Ժամանելուց հետո հյուրերին տեղեկացրեք, որ սենյակներում ծխելը արգելված է:
- Չօգտագործել լարեր կամ մալուխներ տեսանելի մեկուսացման թերություններով:
- Չօգտագործել վնասված վարդակներ, անջատիչներ կամ այլ էլեկտրական կայանքներ
- Չփաթաթել լամպերը թղթով, կտորով կամ այլ այրվող նյութերով
- Հետևել հակահրդեհային ներքին ընթացակարգին
- Տիրապետել հրդեհի դեպքում բոլոր գործողությունների ցանկին՝ ունենալ հստակ ուղեցույց:

Առաջադրանք.

Առաջադրանք 1.
Մշակել հակահրդեհային անվտանգության տեղեկատվական թերթիկ զբոսաշրջիկների համար:

ԹԵՄԱ 3

Հիգիենա հյուրատներում և այլ հյուրանոցային կացարաններում

Հյուրատան աշխատակիցների կողմից անձնական, ինչպես նաև ընդհանուր հիգիենայի կանոնների պահպանումը մեծ նշանակություն ունի և ծառայում է որպես ծառայությունների որակի ապահովման ընդհանուր մակարդակի կարևորագույն ցուցանիշ: Ինչու չէ նաև կարող է ծառայել որպես մրցակցային առավելություն:

Անձնական հիգիենայի կանոնները մարմնի, ձեռքերի, բերանի խոռոչի և հագուստի մաքրության հիգիենայի պահանջների մի շարք են: Այս կանոններին չհամապատասխանելը կարող է հանգեցնել ինչպես սննդի աղտոտման, այնպես էլ անմիջապես աշխատողների, ինչպես նաև հյուրերի/զբոսաշրջիկների հիվանդության:

Աշխատակիցների անձնական հիգիենա

Բոլոր աշխատակիցները, որոնք աշխատում են ՀՈՌԵԿԱ ոլորտում և գործ ունեն սպասարկման, և հատկապես սննդի սպասարկման բաժիններում, պարտավոր են ունենալ՝

- Սանիտարական գրքույկներ և անցնել պարբերական ստուգումներ/զննումներ բժիշկների կողմից:
- Անհատական հիգիենայի պարագաների հասանելիություն, մասնավորապես ցնցուղ ընդունելու և համազգեստ փոխելու/լվանալու համար:
- Հանգստի սենյակ, որտեղ կարող են փոխել հագուստը և հանգստանալ իրենց ընդմիջման ժամին:
- Անհատական պահարաններ, իրենց անձնական իրերը ապահով պահելու համար իրենց աշխատանքային ժամերի ընթացքում:
- Ստանդարտ գործընթացի առկայություն, որտեղ նկարագրված են իրենց պատասխանատվության տակ գտնվող բոլոր տարածքների մաքրության, անվտանգության և սպասարկման նորմերն ու կանոնները՝ դրանց՝ բոլորի կողմից պատշաճ պահպանման համար:

Սենյակի մաքրում/հանձնում հյուրի դուրսգրումից հետո

Որպես ընդհանուր կանոն, բոլոր հյուրանոցների/հյուրանոցային կացարանների լոգարանները և զուգարանները պետք է մանրակրկիտ մաքրվեն և ախտահանվեն մեկ հյուրի գնալուց հետո և նախքան հաջորդի մուտքը:

Կեղտոտ լոգարաններն ու զուգարանները կարող են անհանգստացնել հյուրերին, իսկ վատ մաքրված հաստատություններում դրանք կարող են նույնիսկ առողջության համար հնարավոր վտանգ ներկայացնել: Վերջին բանը, որ ցանկանում է հյուրանոցատերը, հյուրանոցի հարմարություններից օգտվելուց հետո հյուրի մոտ սնկային վարակ կամ որևէ այլ հիվանդության առկայությունն է: Ահա թե ինչպես են մասնագիտացված մաքրուհիները մաքրում հյուրանոցի լոգարաններն ու զուգարանները, ինչպես նաև այլ հյուրանոցային տարածքները:

Հյուրանոցում արգելվում է.

- Սենյակում պահել դյուրավառ նյութեր և զենք
- Պահել, իրացնել կամ օգտագործել թմրադեղեր և/ կամ հոգեմետ դեղեր
- Պահել կենդանիներ և թռչուններ
- Օգտագործել ինքնաշեն էլեկտրական տաքացման սարքավորումներ
- Ծխել (թույլատրվում է միայն պատշգամբում, կախված տվյալ երկրի):

Տվյալ պայմաններից շեղումներ նկատելու դեպքում անհրաժեշտ է միանգամից տեղեկացնել մենեջերին, ինչպես նաև անվտանգության ծառայությանը:

Մինչ մաքրման սկիզբը ճիշտ կազմակերպեք մաքրուհու ժամանակը՝ հաշվի առնելով, որ ամեն սենյակի մաքրման համար տրամադրվում է մինչև 30 րոպե ժամանակ, եթե սենյակը սպասվող է, և նույնիսկ ավելի քիչ ժամանակ, եթե սենյակը ապրող է:

Սենյակի մաքրությունը սկսելու համար մտեք սենյակ:

- Բնակվող սենյակ մտնելուց առաջ 3 անգամ թակե՛ք դուռը՝ բարձրաձայն բացականչելով “housekeeping” և սեղմե՛ք զանգի կոճակը:
- Պատասխան չստանալու դեպքում սպասե՛ք 3 րոպե, այնուհետև բացե՛ք Ձեր անհատական բանալի-քարտով դուռը և ներս մտեք:

Սենյակի մաքրում/հանձնում հյուրի դուրսգրումից հետո

Սենյակ մտնելուն պես տեղադրեք քարտը նախատեսված տեղում և կատարեք ստորև գործողությունները ըստ նշված հաջորդականության:

- Միացրեք բոլոր լույսերը:
- Անջատեք օդափոխիչը:
- Բացեք պատուհանը սենյակն օդափոխելու համար:
- Ներս բերեք նախապես համալրած և պատրաստած սայլակը, բոլոր անհրաժեշտ գործիքները և հեղուկները:
- Ամենասկզբում սկսեք հավաքել սենյակի աղբը, կեղտոտ սպիտակեղենը և դուրս բերեք դրանք սենյակից:
- Այնուհետև մտեք լոգարան և հավաքեք օգտագործված հիգիենայի պարագաները (օճառ, սրբիչ, շամպուն, գել և այլն) և կիրառեք բոլոր քիմիական մաքրող նյութերը ապակիների, լվացարանի, զուգարանակոնքի և խողովակների մաքրման համար:
- Մաքրման համար օգտագործվող սպունգերը և կտորները կարևոր է տարբերակել տիպերով և գույներով: Խավավոր միկրոֆիբրաները ունիվերսալ են և օգտագործվում են տարբեր մակերեսները փոշուց, ինչպես նաև ջրի հետքերից և կաթիլներից մաքրելու համար: Հարթ միկրոֆիբրային կտորները օգտագործվում են ապակյա մակերեսների համար.
- **Սպունգերի դասակարգումը կարելի է կատարել հետևյալ կերպ՝**
  - Դեղին սպունգ - զուգարանակոնքը մաքրելու համար;
  - Սև սպունգ – պատերի մաքրման համար;
  - Առկա է նաև մետաղական սպունգ լվացարանի և շրջակա մետաղների, ինչպես նաև ջրից առաջացած նստվածքների մաքրման համար:
- Փչեք համապատասխան հեղուկը ամբողջ լոգարանի ապակու վրա երկու կողմից: Հեղուկը պետք է մնա ապակու վրա առնվազն 15 րոպե: Փչեք նաև մնացած հեղուկները նախատեսված տեղերում:
- Կարևոր է լվացարանի մաքրման ժամանակ մաքրել նաև ջրի հեռացման սարքի տակ:

Սենյակի մաքրում/հանձնում հյուրի դուրսգրումից հետո

- Եթե լոգարանի հատակի մակերեսը թույլ է տալիս, ապա մաքրեք այն փոշեկուլով. եթե ոչ՝ հեղուկով:
- **Մաքրեք լոգարանի առաստաղը հետևյալ քայլերով՝ եթե տվյալ լոգարանի առաստաղի մակերեսը թույլ է տալիս.**
  - Նախապատրաստեք խավավոր կտորը՝ թրջելով այն եռման ջրով (շատ կարևոր է հետևել ջրի ջերմաստիճանին մաքրման բարձր որակի հասնելու համար, ինչպես նաև լամպերը չվնասելու համար):
  - Մաքսիմալ քամե՛ք այն:
  - Բացե՛ք և տեղադրե՛ք ծալովի աթոռ/աստիճան:
  - Կանգնեք աթոռին և սկսեք մաքրել:
  - Մաքրեք առաստաղի ամբողջ տարածքը ներառյալ լամպերը:
  - Ավարտելուց հետո մի՛ մոռացեք դուրս բերել աթոռը / աստիճանը:
  - Ինչպես նաև մի մոռացեք նորից հետադարձ հայացք գցել՝ ջրի հետքերը վերացնելու նպատակով:
- Լոգարանի մաքրությունը ավարտելուն պես՝ տեղադրեք համապատասխան քանակի սրբիչները, ըստ հյուրասենյակի տիպի և խալաթ /ներ ըստ հյուրերի քանակի:
- Սրբիչները միշտ ծալեք և տեղադրեք այն կերպ, որ հյուրին պարզ երևա հյուրանոցի տարբերանշանը:
- Բնակեցված սենյակում սպասուհին չի դիպչում հյուրի անձնական իրերին և հիգիենայի պարագաներին: Մաքրման ընթացքում մաքրում է միայն դրանց շուրջը:
- Բնակեցված սենյակում սենյակից դուրս են հանվում բոլոր օգտագործված և հատակին գտնվող սրբիչները՝ բացառությամբ միայն վերևում գտնվող, կախված խալաթներից և չօգտագործված սրբիչներից:
- Ոտքի սրբիչը տեղադրեք հնարավորինս մոտ լոգախցիկին, իսկ հողաթափերը դրեք սրբիչի աջ անկյունում:
- Տեղադրեք անհատական հիգիենաի համար անհրաժեշտ միջոցները ըստ հյուրերի քանակի և ըստ հյուրանոցում ընդունված տարբերակի: Օրինակ՝ լվացարանին տեղադրեք օճարը և 2 մաքուր բաժակ՝ փոխարինելով հները նորերով՝ անկախ նրանից օգտագործվել են դրանք թե ոչ: Տվյալ բաժակները լվանում ենք տեղում, օգտագործելով միայն ԿԱՆԱՉ սպունգը:

Սենյակի մաքրում/հանձնում հյուրի դուրսգրումից հետո

- Ավելացրեք զուգարանի թուղթ: Եթե զուգարանի թղթի չափը քիչ է միջինից, անհրաժեշտ է փոխարինել նորով:
- Երբ ամեն ինչ արված է, արդեն ժամանակն է կարգի բերելու անկողինը բնակեցվաշ սենյակում, իսկ չբնակեցված սենյակի համար պատրաստել նորը:
- Անհրաժեշտ է տեղադրել ներքնակի պաշտպանիչներ: Այնուհետև սավանը փռել մահճակալին այնպես, որ արդուկի ծալքն ընկնի մեջտեղում: Սավանը լավ ձգելուց հետո ազատ մասերը տեղադրեք մեծ ներքնակի տակ և նախապատրաստեք ծրարը: Գցեք սավանի վրա և ուղղեք, ծալեք գլխամասը լայն գիծ ստանալու համար և ազատ մասերը տեղադրեք մեծ ներքնակի տակ, ձգեք նաև ներքևից:
- Նախապատրաստեք բարձի երեսները և ստուգեք արդյոք բարձի վրա առկա է պաշտպանիչ կտորը: Ուշադրություն դարձրեք որպեսզի պաշտպանիչ կտորի վրա առկա շղթան բաց չլինի:
- Ըստ միջազգայինորեն ընդունված կանոնների՝ բնակեցված սենյակում անկողինը փոխվում է բնակվելու ամեն 3-րդ գիշերը: Մնացած օրերին անկողնու սպիտակեղենը ուղղակի թափ է տրվում և ուղղվում ընդունված ձևով: Եթե հյուրը թողել է «փոխեք իմ սպիտակեղենը» հաղորդագրությունը, ապա անհրաժեշտ է փոխել սպիտակեղենը նույն օրը:
- Մանրակրկտորեն մաքրեք փոշին ամենուր:
- Ստուգեք մինի բարը և ավելացրեք պակասորդը: Եթե հյուրը օգտվել է մինի բարից , ապա սպասուհին պետք է լրացնի կտրոնը, մեկ օրինակը պետք է թողնի սեղանին, իսկ մյուսը փոխանցի ընդունարանի աշխատակցին: Կտրոնը լրացնելուց լինել ուշադիր և չմոռանալ լրացնել բոլոր կետերը:
- **Հյուրերի իրեր.**
  - Սեղանին տեղադրված հյուրի իրերը չեն տեղաշարժվում:
  - Եթե բնակեցված սենյակի մաքրման ժամանակ նկատում եք շատ թանկարժեք իր, օրինակ՝ զարդ, ապա անպայման կանչեք մեկ այլ սպասուհու/մենեջերին, որը կհաստատի, որ իրը դրված է եղել այդ տեղում:
  - Եթե մաքրման ընթացքում վնասվում է հյուրի իրերից որևէ մեկը, անմիջապես տեղեկացրեք մենեջերին:

Սենյակի մաքրում/հանձնում հյուրի դուրսգրումից հետո

- Երբ մաքրում եք փոշիները ուշադիր եղեք բնակեցված սենյակում: Եթե առկա է տեղադրված ուտելիք կամ հեղուկ, ապա մի՛ փչեք այդ տարածքում մաքրման հեղուկները: Սրբեք միայն դրանց շուրջ: Իսկ եթե ուտելիքները կամ խմիչքը փակ տարաներով են, ապա կարող եք տեղաշարժել այն՝ մաքրելով դրանց տակ
- Ուշադիր զննեք պատերը: Լաքաների հայտնաբերման դեպքում մաքրեք դրանք: Փչեք համապատասխան հեղուկը լաքայի վրա: Օգտագործեք լաթ պատը մաքրելու համար, սակայն շատ ուժեղ մի՛ սեղմեք: Մաքրեք պատը լայն շրջանաձև շարժումներով հետքերից խուսափելու համար: Այն դեպքում, երբ լաքան չի անցնում, փչեք հեղուկը և մեկ անգամ և թողեք այն ներծծվի մոտ 10 րոպե, այնուհետև կրկնեք շարժումները
- Փոշեկուլով մաքրեք սենյակը: Համոզվեք, որ ամեն ինչ մանրամասնորեն և պատշաճ կերպով մաքրված է և բոլոր կողմնակի իրերը, լաթերը և հեղուկները Ձեր սայլակի վրա են և ոչ սենյակում:
- Ավարտեք աշխատանքը մաքրելով դուռը և անջատեք լույսերը՝ հանելով Ձեր անհատական քարտը:
- Դու՛րս եկեք սենյակից և փակեք դուռը: Մաքրեք դուռը դրսի կողմից:

Բացի վերոնշյալ կետերից, կից հավելվածում կգտնեք նաև «Ի՞նչ կարելի է և ի՞նչ չի կարելի անել զբաղեցված սենյակը մաքրելիս» գործողությունների ցանկը իրենց բացատրություններով:

Առաջադրանք.

Առաջադրանք 2.
Սենյակի մաքրությունը
Հետևեք մաքրուհու քայլերի հերթականությանը և նշեք գործողությունների կատարման ժամանակը:

ԹԵՄԱ 4

Հանրային տարածքներ

Սենյակներին կից բոլոր հանրային տարածքները պետք է ամեն օր կամ պարբերաբար մշակվեն/մաքրվեն: Օրինակ՝

- Վերելակներ: Հարկ է նաև նշել, որ վերելակների համար անհրաժեշտ է պարբերաբար կատարել տեխնիկական սպասարկում և այդ ընթացքում բոլոր հարկերում պետք է վերելակի դռների մոտ/վրա փակցնել այդ աշխատանքների կատարման մասին և դրանց ավարտի ժամերը, որպեսզի հյուրերը չօգտագործեն վերելակը:

- Կարևոր է նշել, որ բոլոր վերելակները պետք է ունենան ֆորս մաժորային ռեժիմ, որի դեպքում վերելակը կատարում է հստակ, նախապես ծրագրավորված գործընթաց:
Օրինակ, էլեկտրաէներգիայի մատակարարման խափանման դեպքում, վերելակը պետք է իջնի /ներքին ռեսուրսով/ առաջին հարկ և դռները բացի, որպեսզի վերելակի մեջ հյուրը երկար ժամանակ չգտնվի: Կամ ավտոմատ սեղմվի տագնապի կոճակը և զանգը միանա ընդունարան:

Աստիճանավանդակներ:
Սեղաններ ռեստորանում:
Խոհանոց:
Ընդհանուր օգտագործման տարածքներ
Այս ցանկը կարող է ներառել այլ տարածքներ և վայրեր՝ կախված նրանից, թե ինչպիսի ծառայություններ է տրամադրում հյուրատունը/հյուրանոցը

Հանրային տարածքի մաքրման աշխատանքի համար տրամադրվում է 30 րոպե ժամանակ՝ ըստ զոնաների: Մաքրման աշխատանքները ցանկալի է կատարել ըստ ստորև հերթականության: Սկսելուց առաջ անպայման տեղադրեք “Cleaning in process” ցուցանակը, որպեսզի զբոսաշրջիկները տեղեկացված լինեն հնարավոր խոնավ և սայթակող մակերեսների մասին:

- Սկսեք մաքրությունը նկուղային հարկի զուգարաններից: Զուգարանի մաքրման համար օգտագործվում են հատուկ պրոֆեսիոնալ նյութեր/հեղուկները, միկրոֆիբրային կտորներ, դեղին սպունգ, մետաղական սպունգ, զուգարանի խոզանակ, դույլ, աղբի տոպրակներ, պաշտպանիչ ձեռնոցներ և այլ նյութեր՝ ըստ պահանջի:

- Շատ կարևոր է աշխատանքը իրականացնել պաշտպանիչ ձեռնոցներով և աշխատանքը սկսել առաջին հերթին հանելով աղբը:

- Փչեք հատուկ հեղուկները համապատասխան մակերեսներին: Սկսեք մաքրել պատերը վերևից ներքև՝ մի ուղղությամբ, սկզբից խոնավ կտորով, այնուհետև չորով: Մաքրեք զուգարանակոնքը՝ սկզբից օգտագործելով սպունգը, այնուհետեվ խոնավ և չոր կտորները: Մաքրեք հիգիենիկ ցնցուղը: Մաքրեք առաստաղը՝ կանգնելով փոքր աթոռակին/աստիճանին և օգտագործելով հատուկ նյութերը: Զգուշացեք լամպերից՝ փչեք հեղուկները դրանց շուրջ:

- Օգտագործեք սկզբից խոնավ կտորը, այնուհետև չորացրեք մակերեսը չոր կտորով:

- Հատուկ ուշադրություն դարձրեք օդափոխության ցանցերին:

- Մաքրեք դուռը և բռնակը:

- Ստուգեք զուգարանի թղթի քանակը և համալրեք անհրաժեշտության դեպքում

- Վերջում մաքրեք հատակը՝ թրջելով այն հիգիենիկ ցնցուղի օգնությանբ /բացակայության դեպքում այլ տարբերակով/:

- Դու՛րս բերեք ջուրը հատակի փայտով: Այնուհետև մաքրեք հատակը կտորով:

- Ավարտելուց առաջ մի մոռացեք մաքրել հայելին և լվացարանը:

- Բացեք լվացարանի անցքը, մաքրեք պաշտպանիչ մետաղը և անցքը, մաքրեք ծորակը սպունգով, սրբեք լվացարանի ամբողջ մակերեսը խոնավ կտորով, չորացրեք լվացարանի մակերեսը և ծորակը չոր կտորով:

- Բոլոր հատուկ հեղուկները պետք է լինեն մասնագիտացված, քանի որ դրանք մանրեզերծելուց բացի նաև խնայում են բոլոր մակերեսները և ապահովում դրանց երկարակեցությունը:

- Ստուգեք օճառի քանակը: Մաքրեք օճառի սարքը սկզբից խոնավ հետո չոր կտորով:

- Ստուգեք անձեռոցիկների քանակը համապատասխան սարքում, լրացրեք անհրաժեշտության դեպքում: Մաքրեք անձեռոցիկների սարքը սկզբից խոնավ, այնուհետև չոր կտորով:

Հանրային տարածքներ

- Մաքրեք վարդակները սկզբից խոնավ հետո չոր կտորներով:
- Մաքրեք աղբի դույլը:
- Փչեք դեղին հեղուկը և մաքրեք սկզբից խոնավ հետո չոր կտորով:
- Մաքրեք նախասրահի տարածքը: Սկսեք կահույքից՝ բարցրացրեք բազկաթոռի բարձը և փոշեկուլով անցեք բոլոր անկյուններով: Մաքրեք գորգը փոշեկուլով: Մաքրեք սեղանները՝ բարձրացրեք ամսագրերը և սրբեք ամեն մեկը խոնավ կտորով:
- Սկսեք մաքրեք հատակը՝ նախապատրաստելով տաք ջուրը և մաքրման հեղուկով դույլը: Մաքրեք հատակը սկզբից խոնավ մոպով , այնուհետև չորացրեք այն չորով: Թացով մաքրելու ընթացքում, հավաստիացեք, որ նախազգուշացնող նշանները դրված են տեսանելի վայրերում, որպեսզի հյուրերը չսայթաքեն:
- Հանրային տարածքներում անհրաժեշտ է նաև մաքրել բոլոր ապակեպատ մակերեսները և պատուհանները: Ապակյա դռները պետք է ունենան որոշակի նշանները կամ գրվածքները, որոնք ապակիները տեսանելի կդարձնեն կողքով քայլող զբոսաշրջիկների համար:
- Անհրաժեշտ է պարբերաբար նաև մաքրել պատերը, առաստաղը և ջահերը, սակայն տվյալ տարածքների մաքրությունը սովորաբար կազմակերպվում են ոչ շատ հաճախ և ավելի գիշերային ժամերին, որպեսզի շարժական աստիճանների կիրառումը չխաթարի հյուրերի հանգիստը և չառաջացնի վտանգավոր իրավիճակներ:
- Հյուրանոցին հարող/հարակից տարածքները նաև կարող են համարվել հանրային տարածք, որոնք պետք է պարբերաբար մաքրվեն հյուրանոցի անձնակազմի կողմից, ինչպես նաև հսկողության տակ պահվեն՝ հյուրերի առավել անվտանգության համար:

Բոլոր հանրային տարածքները պետք է ունենան իրենց մաքրման և մանրեազերծման համար նախատեսված հստակ ժամանակացույց:

Օրինակ՝ Բոլոր հասարակական տարածքները պետք է մաքրել ամեն օր, օրը առնվազն 2-3 անգամ: Մաքրման ժամերն են՝ 11:30 – 12:00, 18:00, 05:00: Սանդուղքը մաքրվում է օրական 2 անգամ՝ 12:00 և առավոտյան 03:00-ին:

Առաջադրանք.

Առաջադրանք 3.
Կազմել հստակ ժամանակացույց և ընթացակարգ՝ ըստ նորմերի:

Ինքնաստուգման հարցեր:

Հարց 1. Քանի մաքրուհի է անհրաժեշտ 16 սենյակ ունեցող հյուրատունը սպասարկելու համար և ինչպես կարելի է դա հաշվարկել:

Հարց 2. Որոնք են համարվում հյուրատանը հանրային տարածքներ և ինչ սանիտարահիգիենիկ հատուկ պահանջներ կան դրանց նկատմամբ:

Հարց 3. Ինչպես կարելի է ստանդարտացնել և անընդհատ հետևել մաքրության որակի պահպանմանը հյուրատներում և այլ հյուրանոցային կացարաններում

Հարց 4. Հյուրասենյակի դուրսգրում իրականացնելիս, որն է առաջին գործողությունը, որը կարևոր է որ կատարվի մաքրուհու կողմից՝ սենյակ մուտք գործելիս:

Հարց 5. Ինչպես ենք վերաբերվում հյուրերի թողած ուտելիքներին սենյակների դուրս գրման գործընթացում:

ԹԵՄԱ 5

Ընդհանուր անվտանգություն հյուրատանը

Սպառնալիքները, որոնք կարող են զբոսաշրջիկների մոտ առաջացնել անապահովության զգացում, հատկապես իրենց համար անծանոթ երկրում, բազմաթիվ են: Օրինակ՝

- Գողություն
- Փաստաթղթերի և այլ իրերի կորուստ
- Հյուրերի բռի պահվածք
- Ահաբեկչություն
- Էլեկտրաէներգիայի մատակարարման խափանում
- Այլ՞

Իրավիճակ 2.
Սպառնալիքների ներկայացում:
Լուծումներ՝ անվտանգության ապահովման

- Աշխատակիցների մշտապես զգոն լինելը, պարբերաբար շրջելը հյուրանոցի տարածքում:
- Անվտանգության աշխատակիցների, կամ անվտանգության ծառայության առկայությունը:
- 24/7 ընդունարան ունենալը:
- Հյուրերի մասին ինֆորմացիա ՉՏՐԱՄԱԴՐԵԼԸ:
- Ճաղերի առկայությունը պատշգամբներում (ճիշտ նեղությամբ, որպեսզի երեխաների համար լինի ապահով):
- Տեսախցիկների առկայությունը տարածքում:
- Տարածքի լավ լուսավորությունը:
- Աշխատակիցների ստուգումներ աշխատանքի ավարտին՝ հյուրերի իրերի և հյուրանոցի գույքի գողություններից խուսափելու համար:
- և այլն:
-

Հյուրատան նկատմամբ պահանջներ հաշմանդամություն ունեցող անձանց հյուրընկալելու համար

Հայաստանի Հանրապետության Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին օրենքը ասում է, որ.

> Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, տվյալ օրենքով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով:

Վերոնշյալ պայմանները պարտադրում են, որ ցանկացած հյուրանոց և զբոսաշրջային կացարան պետք է հարմարեցված լինի և մատչելի լինի հաշմանդամների համար: Հարմարեցնել հյուրատների ենթակառուցվածքը և սարքավորել առնվազն մեկ սենյակ հաշմանդամություն ունեցող անձանց տեղավորումն իրականացնելու համար, արդեն իսկ ժամանակի պահանջ է և պարզապես մարդկային պարտականություն:

Առաջադրանք 4. Ինչպես դա անել:

Ինքնաստուգման հարցեր:

Հարց 1. Ինչ միջազգային համաձայնագրերում է մասնակցում Հայաստանի Հանրապետությունը՝ հաշմանդամների շարժականության իրավունքի պահպահման ոլորտում:

Հարց 2. Որոնք են հյուրանոցային կացարանների դիմաց դրված պարտադիր պետական պահանջները՝ հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը չսահմանափակելու համար:

Հարց 3. Տարեկան քանի հաշմանդամ զբոսաշրջիկ է այցելում Հայաստանի հանրապետություն:

Հարց 4. Ինչու՞ է անհրաժեշտ հաշմանդամների համար մատչելի հյուրանոցային համարներ պատրաստել: Իսկ եթե հաշմանդամ հյուրերը շատ չեն:

Հարց 5. Ինչպես կարող են հյուրանոցային կացարանները բարելավեն իրենց հարմարություններն ու հասանելիությունը՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար:

Հավելվածներ

Գործառույթ:	Ի՞նչ կարելի է և ի՞նչ չի կարելի անել զբաղեցված սենյակը մաքրելիս				
ԱԸՍկող:		Ամսաթիվ:		Վերանայմանամսաթիվ:	

Գործողություն	Նշումներ/Բացատրություններ
Աղբ	• Ցանկացած բան, որը գտնվում է աղբամանում, համարվում է աղբ: • Եթե հյուրը սենյակում որևէ տեղ կամ աղբամանի կողքին ինչ-որ դատարկ տուփ, արկղ կամ այլ իր է թողել, չի կարելի այն դեն նետել առանց հյուրի հետ ճշտելու: • Ցանկացած փաստաթուղթ (ցանկացած տեսակի թուղթ, նշումներով անձեռոցիկ և այլն), որը գտնվում է սեղանի վրա չի կարելի դեն նետել:
Հագուստ	• Եթե սենյակում նկատում եք հատակին ընկած կամ անկողնու վրա անփութորեն դրված որևէ հագուստ, այն կոկիկ հավաքեք և փռեք բազկաթոռի կամ աթոռի վրա: Ոչ մի դեպքում չի կարելի բացել պահարանը և հագուստը դնել այնտեղ: • Պահարանը կարելի է բացել միայն այն դեպքում, եթե օգտագործվել է լվացքի տոպրակ ինչպես նաև մինի բարի օգտագործումը ստուգելու համար: • Կոշիկները դասավորեք հատակին դռնից միքիչ այն կողմ՝ շրիշակին մոտ:
Լոգարանի պարագաներ	• Եթե լոգարանը մաքրելիս նկատում եք հյուրի կողմից թողնված որևէ անձնական հիգիենայի պարագա (կոսմետիկա, երեսի սրբիչ և այլն), չի կարելի դրանք դնել հետ տուփի մեջ կամ հավաքել: կարելի է խնամքով դասավորել որևէ տեղ լոգարանում: • Եթե հյուրն ունի իր անձնական շամպունը կամ գելը, դասավորեք դրանք լոգախցիկի անկյունում, իսկ ատամի խոզանակը, մածուկը՝ բաժակի մեջ:
Ձեռք մի՛ տվեք	• Չի կարելի ձեռք տալ թանկարժեք իրերին, էլեկտրոնիկային, դեղերին: • Եթե սենյակի սեյֆը բաց է և սեյֆի մեջ կա որևէ իր կամ առձեռն գումար, անմիջապես տեղեկացրեք անվտանգության բաժնի աշխատակցին: • Չի կարելի շարժել, բացել կամ նայել հյուրի իրերը. Կասկածի տեղիք մի՛ տվեք: • Հյուրի սենյակում գտնվող և բաժակի մեջ լցված ցանկացած հեղուկ (անգամ ջուր) չի կարելի թափել:
Սնունդ	• Եթե սենյակում կան սննդի ակնհայտ մնացորդներ, կամ կարծում եք, որ թողնված սնունդն այլևս օգտագործման ենթակա չէ, դեն նետեք այն:

Հավելվածներ

Գործառույթ:	Սենյակի բանալու տրամադրում				
ԱԸՍկող:		Ամսաթիվ:		Վերանայմանամսաթիվ:	

Գործողություն	Նշումներ/Բացատրություններ
Հյուրասենյակի բանալի քարտերի թողարկումը ամենակարևոր և հաճախակի գործողություններից մեկն է, որը դուք պատրաստվում եք կատարել ամեն օր: Այն ուղղակիորեն կապված է հյուրի անվտանգության, ապահովության զգացումի և բավարարվածության հետ: Այսպիսով, կենսական նշանակություն ունի իմանալ բոլոր քայլերը, թե ինչպես ճիշտ բանալիներ տալ ճիշտ մարդկանց և հետևել ոսկե կանոններին:	
Բանալիները տրվում են հետևյալ դեպքերում.	1. Ժամանումից հետո - Check-in-ի ժամանակ 2. Կորցնելու դեպքում 3. Լրացուցիչբանալիլրացուցիչանձիհամար 4. Բանալինմնացել է սենյակում
Ոսկե կանոններ, որոնք պետք է հիշել.	• Բոլոր դեպքերում նոր բանալիներ տրվում են միայն այն դեպքում, եթե տրամադր-վում է նույնականացում վավեր լուսանկարով (եթե հյուրին դեմքով չեք ճանաչում): • Եթե տվյալ պահին անձը հաստատող փաստաթուղթը հասանելի չէ, հյուրին պետք է ուղեկցել սենյակ և միայն անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելուց հետո նրան կարելի է բանալին տալ: • Սենյակի բանալին կարող են պահանջել բացառապես սենյակի հյուրերը և ոչ ոք: • Բանալիները երբեք չպետք է տրվեն այն անձանց, ովքեր պնդում են, որ հյուրի թույլտվությունն ունեն սենյակ մտնելու համար, եթե հյուրն անձամբ իր բանավոր կամ գրավոր թույլտվություն չի տվել: • Անձնական տվյալները, ինչպիսիք են ծննդյան ամսաթիվը կամ հեռախոսա-համարը, կարող են ծառայել որպես նույնականացման մեթոդ • Հիշի՛ր. Եթե բանալին կորել է, ապա նոր բանալի կարող է տրվել միայն բոլոր նախորդներն անջատելուց հետո՝ չմոռանալով այդ մասին տեղեկացնել հյուրին: • Եթե լրացուցիչ անձանց համար բանալիներ են պահանջվում, համոզվեք, որ ՉԵՔ ապաակտիվացնում մնացած բոլոր բանալիները: • Երբեք մի կարդացեք/ասեք սենյակի համարը բարձրաձայն • Բանալիները տրամադրվում են միայն մեծահասակներին
Անձնագրի պահանջ	Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն դեպքերին, երբ բանալին պահանջվում է ժամանումից հետո, արդեն իսկ գրանցումը անցնելուց հետո: Բանալին տալուց առաջ հյուրից անձնագիր/ID խնդրեք: Եթե տվյալ պահին որևէ փաստաթուղթ չկա, դուք կարող եք նույնականացնել հյուրին անձնագրի պատճենի լուսանկարով, որը պետք է լինի ընդունարանի փաստաթղթերում հյուրի գտրանցման դեպքում: Եթե դա նույնպես հնարավոր չէ, հյուրին ուղեկցեք իր սենյակ, համոզվեք, որ նա ձեզ ցույց է տալիս անձը հաստատող փաստաթուղթը, նախքան նրան սենյակում մենակ թողնելը:
Ինչու է կարևոր	Միանգամայն հնարավոր է, որ անցորդը կամ անծանոթը կարող է սենյակի բանալին խնդրել և դրանով մուտք ունենալ հյուրասենյակ: Այս դեպքում սենյակից ցանկացած կորստի կամ այդ սենյակում ցանկացած վնասի ողջ պատասխանատվությունը կրելու է հյուրանոցը:Նույնիսկ եթե բանալի պահանջողը հյուրից գիտի անունը, ազգանունը և/կամ այլ անձնական տվյալներ, դա բավարար չէ առանց ինքնությունը ստուգելու բանալին տրամադրելու համար: Սա կարող է լինել հյուրի բարեկամը կամ ընկերը, ով տեղյակ է ամրագրման մանրամասներին, բայց, այնուամենայնիվ, իրավունք չունի մուտք գործել սենյակ:

Հավելվածներ

Գործառույթ:		Ուշ ժամերի այցելուներ			
ԱԸՍկող:		Ամսաթիվ:		Վերանայմանամսաթիվ:	

Գործողություն	Նշումներ/Բացատրություններ
Այցելուների քաղաքականություն	Հյուրանոցի հյուրերը կարող են հյուրընկալել իրենց սեփական հյուրերին միայն մինչև կեսգիշեր: Հյուրանոցում այցելուների սովորական ժամն է մինչև 12:00: Եթե այցելուն կեսգիշերից հետո դուրս չի գալիս սենյակից, ընդունարանիի աշխատակիցը պետք է զանգահարի հյուրասենյակ և խնդրի այցելուին կարճ ժամանակում հեռանալ սենյակից կամ մոտենալ գրասեղանին գրանցման համար: Ժամը 00:00-ից հետո հյուրանոցում չգրանցված հյուրերին արգելվում է: Չմոռանաք առաջարկել նրանց մնալ սենյակում կեսգիշերից հետո միայն անձը հաստատող փաստաթղթի կամ անձնագրի տրամադրման և ստուգման դեպքում, որը, հետևաբար, ենթակա է հավելավճարի: Եթե նրանք չեն ցանկանում գրանցվել և վճարել հավելյալ գումար, սակայն նախազգուշական զանգից հետո նույնպես դուրս չեն գալիս սենյակից, ապա ընդունարանի աշխատակիցը պետք է գնա հյուրի սենյակ անվտանգության աշխատակցի հետ և խնդրի հյուրին կամ տրամադրել անձը հաստատող փաստաթուղթ կամ հեռանալ: սենյակից:
Ինչ անել, եթե այցելու գա կեսգիշերից հետո?	Եթե կեսգիշերից հետո այցելու ունեք, ով խնդրում է գնալ հյուրի սենյակ և ունեք մեր հյուրի թույլտվությունը, կարող եք նախ առաջարկել նրան հանդիպել մեր սրճարանում կամ լաունջի տարածքում: Եթե նրանց համար հրատապ է հանդիպել սենյակում, այցելուին խնդրեք տրամադրել ID/անձնագիր, տեղեկացնել վճարման քաղաքականության մասին և թույլ տալ նրան գնալ սենյակ: Եթե չունեք մեր հյուրի թույլտվությունը, երբեք չպետք է այցելեք հյուրի սենյակ այդ ուշ ժամին: Խնդրեք այցելուն ինքն իրեն զանգահարել: Եթե այցելուն հրաժարվում է զանգահարել, քանի որ չունի հեռախոսահամար կամ որևէ այլ պատճառով և պնդում է, որ հանդիպումը հրատապ է, միայն մեկ անգամ զանգահարեք հյուրասենյակ, ներողություն խնդրեք և բացատրեք իրավիճակը: Նրա թույլտվությունը ստանալու դեպքում հետևեք վերը նկարագրված քայլերին (ID կամ անձնագիր, Check-in, վճարում):
Հյուրերի կատեգորիզացիա	Ընդունարանի աշխատակիցը իշտ պետք է ուշադիր լինի այցելուների նկատմամբ, ովքեր ժամանում են մեր հյուրերին տեսնելու: Այն այցելուներին, ովքեր հարբած են, կամ մի քիչ շատ են օգտագործել ալկոհոլ, թմրանյութեր, իրենց ոչ ադեկվատ են պահում կամ պարզապես տեղին ու պատշաճ տեսք չունեն (և եթե թվում է, թե վարձատրվում են սեռական ծառայությունների համար), չպետք է թույլ տան բաձրանալ հյուրասենյակ.

Օգտակար գրականություն և առցանց հղումներ

- Management of Hotel and Motel Security, Harvey Burstein
- Occupational Safety, Health, and Fire Index, David E. Miller
- Crime Prevention Through Physical Security, Walter M. Strobl

https://www.youtube.com/watch?v=sfQdP7WUVYQ
https://www.youtube.com/watch?v=YMyofREc5Jk&t=112s
https://www.patientsafetyusa.com







ԴՈՒԱԼ

Դուալ կրթություն՝
երաշխավորված աշխատանք